




ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ, ՌՈՐԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ,  
ՄԱՐԻԱՄ ԽԱՆՁԱԴՅԱՆ, ՍԱԹԵՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Մ.Թ.Ա. XV ԴԱՐԻ ԽԵԹԱԿԱՆ  
ՍԵՊԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

**ХЕТТСКИЕ КЛИНОПИСНЫЕ ИСТОЧНИКИ  
ОБ АРМЯНСКОМ НАГОРЬЕ**

**II**

**АРАМ КОСЯН, РОБЕРТ КАЗАРЯН, МАРИАМ ХАНЗАДЯН,  
САТЕНИК МАРТИРОСЯН**

**ХЕТТСКИЕ КЛИНОПИСНЫЕ ИСТОЧНИКИ  
ОБ АРМЯНСКОМ НАГОРЬЕ  
XV ВЕКА ДО Н.Э.**

ЕРЕВАН 2018

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

**CUNEIFORM HITTITE SOURCES  
ABOUT ARMENIAN HIGHLAND**

**II**

ARAM KOSYAN, ROBERT GHAZARYAN, MARIAM KHANZADYAN,  
SATENIK MARTIROSYAN

**THE XV CENTURY HITTITE CUNEIFORM  
SOURCES ABOUT THE ARMENIAN  
HIGHLAND**

YEREVAN 2018

1368117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԽԵԹԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ**

II

**ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ, ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ, ՄԱՐԻԱՄ  
ԽԱՆԶԱՂՅԱՆ,  
ՍԱԹԵՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**Մ.Թ.Ա. XV ԴԱՐԻ ԽԵԹԱԿԱՆ  
ՍԵՊԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ**

1103600

ԵՐԵՎԱՆ  
«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2018





ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Մ 660

**Գիրքը տպագրվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ**

Մ 660 Մ.թ.ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրները Հայ-  
կական լեռնաշխարհի մասին/ Ա. Քոսյան, Ռ. Ղազարյան, Մ.  
Խանզադյան, Ս. Մարտիրոսյան.- Եր.: «Գիտություն» հրատ.,  
2018. Մաս II.- ... էջ:

Կոլեկտիվ մենագրությունը ներկայացնում է Հայաստանի հնագույն պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից մ.թ.ա. XV դարի խեթական սեպագրական տեքստերի գիտական հրատարակությունը՝ կից պատմագիտական հետազոտությամբ: Աշխատության մեջ տեղ են գտել խեթական տերության և Վերին Եփրատի ավազանի երկրների միջև կնքված երկու պայմանագրեր, ինչպես նաև դրանց հետ առնչվող մի շարք տեքստեր:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ Գիտության կոմիտեի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (15T-6A182, 2015-2017 թթ.):

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-1335-3

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018

Տպագրվել է ՀՀ ԿԳՆ պետական կոմիտեի ֆինանսական  
աջակցությամբ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԱՆ .....	7
ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ .....	9
KUB XXIII 72+ ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ .....	10
KUB XXIII 72+Ի ՀՆԱԳՐԱԿԱՆ-ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹՎԱԳՐՈՒՄԸ .....	12

### ԳԼՈՒԽ I. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

ՊԱԽԽՈՒՎԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ (KUB XXIII 72 +).....	14
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ (KUB XXXI 103) .....	44

### ԳԼՈՒԽ II. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՔՍԵՐ

ԹՈՒԴԽԱԼԻՅԱՍ ԻԻ-Ի ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	51
ԱՌՆՈՒՎԱՆԴԱՍ Ի-Ի ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	55
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹՈՒԴԽԱԼԻՅԱՍ ԻԻ-Ի ԵՎ ԿԻՑՑՈՒՎԱՆՆԱՅԻ ԱՐՔԱ ՍՈՒՆԱՍՍՈՒՐԱՅԻ ՄԻՋԵՎ (KBo I 5+) .....	57
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍԱՅԻ (?) ՄԻՋԵՎ (KBo XVI 45) .....	63
«ԱՐԵՎԵԼՅԱՆ» ՁԻՆՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ (KUB XXVI 62).....	69
ԿՈՒՄՄԱԽԱՅԻ ՁԻՆՎՈՐՆԵՐԸ ԽԱԹԹՈՒՍԱՍՈՒՄ (IBoT I 36)...	73
ԳԵՏԱՅԻՆ ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ (KUB XXXI 79) .....	75
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍՈՒՊՊԻԼՈՒԼԻՈՒՄԱՍ Ի-Ի ԵՎ ՄԻՏՏԱՆԻԻ ԱՐՔԱ ՀԱՏՏԻՎԱԶԱՅԻ ՄԻՋԵՎ (KBo I 1 ԵՎ I 2) .....	79
«ԻՍՈՒՎԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ» ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	85

### ԳԼՈՒԽ III. ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ Մ.Թ.Ա. XV ԴԱՐՈՒՄ	
ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. XV ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ .....	90
ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԽԱԹԹԻ	

ԿՈՂՄԻՑ .....	95
ԿՍՅ XXII 72+ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .....	101
ՊԱՆԽՈՒԿԱՅԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ .....	106
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՆԵՐԸ ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾԱԵՐՁԱՆՈՒՄ .....	108
ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐԸ .....	111
ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾԱԵՐՁԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	116
ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾԱԵՐՁԱՆԻ ԱՆՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	133
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>	<b>144</b>
<b>ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>	<b>156</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ .....</b>	<b>158</b>
<b>ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ .....</b>	<b>158</b>
<b>ԱՆՁԱՆՈՒՆՆԵՐ .....</b>	<b>162</b>
<b>ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ .....</b>	<b>165</b>

## ԱՌԱՋԱՐԱՆ

Մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսի խեթական սեպագրական աղբյուրներում պահպանվել են բավական մեծաքանակ տեքստեր, որոնք պարունակում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների պատմության վերաբերյալ կարևորագույն և իրենց տեսակի մեջ եզակի տեղեկություններ:

2013 թ. հեղինակային խումբը ձեռնարկեց վերոհիշյալ տեքստերի գիտական հրատարակությունը, որի արդյունքը 2016 թ. լույս տեսած «Խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին» շարքի առաջին մասն է: Այստեղ ամփոփված են մ.թ.ա. XIV դարի տեքստերը<sup>1</sup>: Այդ շարքի երկրորդ մասն ընդգրկում է ներկայումս Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների հետ խեթական տերության կնքած ամենավաղ պայմանագիրը, որտեղ հայաստանյան կողմը ներկայացված է Վերին Եփրատի ավազանի ավելի քան մեկ տասնյակ ցեղային պետականություններով (KUB XXIII 72+):

Հատորում ներառված են նաև մի շարք այլ տեքստեր, որոնք կամ անմիջականորեն կապված են այս պայմանագրի հետ, կամ առնչվում են խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների փոխհարաբերություններին: Դրանց շարքում են՝ խեթական արքայի կողմից վերինեփրատյան երկրների որոշ ցեղապետերին տրված հողի նվիրատվության մասին տեքստը (KUB XXXI 103), խեթական արքաներ Թուդիալիյաս II-ի և Նրա հաջորդ Անուվանդաս I-ի «Տարեգրությունները» (հատվածաբար), վերինեփրատյան երկրներից խեթական բանակում զինծառայության համար հավաքագրված զինվորների ցանկը (KUB XXVI 62), խեթական արքա Սուպալիլուլիումաս I-ի և Միտտանիի արքա Շատտիվազայի միջև կնքված պայմանագիրը (KBo I, II), ինչպես նաև գետային նավարկության մասին տեքստը (KUB XXXI 79), որը կարևոր տեղեկություններ է հաղորդում վերինեփրատյան տարածաշրջանի աշխարհագրության վերաբերյալ:

Այս տեքստերը, որոնք կազմված են մ.թ.ա. XV դարի երկրորդ կեսին - XIV դարի սկզբներին (բացառությամբ KBo I, II-ի), եզակի տեղեկություններ են պարունակում Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների պետական կազմավորումների պատմության վերաբերյալ: Հարկ է նշել, որ հինարևելյան այլ պետություններից նշված տարածաշրջանի և ժամանակաշրջանի մասին առայժմ որևէ գրավոր աղբյուր գոյություն չունի: Կարևոր է նշել նաև երկու հանգամանք: Հայագիտության մեջ

<sup>1</sup> Քոչյան 2016:

ավանդաբար KUB XXIII 72+ պայմանագիրը մինչև վերջին շրջանը թվագրվել է՝ հետևելով մինչև 1970-ական թվականների սկզբները շրջանավորը հնացած տեսակետին, մ.թ.ա. XIII դարի վերջին տասնամյակներով, ինչի հետևանքով Հայկական լեռնաշխարհի արևմուտքում տիրող քաղաքական իրավիճակը և զարգացումները սխալ են մեկնաբանվել: Նոր թվագրման շնորհիվ այս տեքստը հնարավորություն է ստեղծում նորովի մեկնաբանելու մ.թ.ա. XV-XIII դարերի պատմության խնդիրները:

Աշխարհագրական առումով վերոհիշյալ տեքստերը վերաբերում են Վանա լճից արևմուտք, ընդհուպ մինչև Եփրատի ակունքների և վերին հոսանքների շրջանում գոյություն ունեցած պետական կազմավորումներին, մասնավորապես Իսուվային (հայկական Ծովք), Հայասային և Ազգին, ինչպես նաև հարակից այլ շրջաններին:

Ուսումնասիրության առարկա տեքստերից կարևորագույն նշանակություն ունի KUB XXIII 72+-ը<sup>2</sup>, որը ներկայացնում է Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների հետ խեթական արքա Անուվանդաս I-ի (մ.թ.ա. XV դ. վերջ - XIV դ. սկիզբ) կնքած պայմանագիր-հրահանգը<sup>3</sup> դրան նախորդած քաղաքական իրադարձությունների համատեքստում:

Պայմանագրի տեքստը հայտնաբերվել է խեթական մայրաքաղաք Խաթթուասաի պեղումների վաղ փուլում գերմանացի հնագետ Հ. Վինկլերի կողմից: Ինչպես և այս վաղ փուլում ի հայտ եկած սեպագիր տեքստերը, դրա հայտնաբերման ճշգրիտ տեղը պարզ չէ: Նկատի առնելով կցաքելկոր 1684/ս-ի՝ «Մեծ տաճարի» L/19 տեղամասից հայտնաբերվելու փաստը, հնարավոր է, որ KUB XXIII 72+-ը նույնպես այստեղից գտնված լիներ<sup>4</sup>:

Պայմանագիրը ինքնագիր եղանակով հրատարակվել է 1929 թ. Ա. Գյոթցեի կողմից<sup>5</sup>: Տեքստի ընդարձակ հատվածներ թարգմանաբար հրատարակել են Ա. Սեյսը և Վ. Խաչատրյանը<sup>6</sup>, իսկ ամբողջությամբ՝ Օ. Գըրնիխ<sup>7</sup>: Վերջին շրջանում իրականացվեց պայմանագրի տեքստի ամբողջական գիտական հրատարակությունը՝ խիստ համառոտ տեքստաբանական մեկնաբանություններով<sup>8</sup>: Հեղինակի կողմից տեքստի վերոհիշյալ հրատարակությունից հետո ի հայտ եկան մի քանի փոքր կցաքելկորներ<sup>9</sup>, որոնք օգտագործվել են ներկա աշխատության մեջ:

<sup>2</sup> CTH 146.

<sup>3</sup> KUB XXIII 72-ը պայմանագիր չէ որպես այդպիսին, այլ նախկինում վերինեփրատյան կախյալ երկրների հետ կնքված պայմանագրի խախտման առնչությամբ վերջիններիս առաջնորդներին տրված հիշեցում-հրահանգ է (տե՛ս ստորև տեքստում, Գլուխ III):

<sup>4</sup> Hoffner 1976: 60. այստեղից են հայտնաբերվել KUB XIV 1 + KBo XIX 38-ը («Մադդուվատտասի մեղանշանքը») և Թոտլիսալիյաս II-ի «Տարեգրությունների» մի քելկորը (վերջինս՝ հարևան L/18 տեղամասից):

<sup>5</sup> KUB XXIII (A.Götze).

<sup>6</sup> Sayce 1930: 5ff. (ԴԿ 1-11, 23, 28, 31, 34-40, ՀԿ 1-36); Խաչատրյան 1998: 87-94.

<sup>7</sup> Gurney 1948: 32ff.

<sup>8</sup> Kosyan 2006; Reichsmuth 2011.

<sup>9</sup> KBo L 66, 216, 218, 238, Bo 8742 (տե՛ս ստորև տեքստի կառուցվածքը).

## KUB XXIII 72+- ՏԵՔՄՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տեքստը բաղկացած է երկկողմ գրությանը (ամեն կողմում մեկական սյունակ) մեկ աղյուսակից: KUB XXIII 72+-ը («հիմնական օրինակ») հավաքված է չորս բեկորներից (Bo 2540 + 2558 + 2822 + 3961): Այն պահպանվել է զգալի կորուստներով: Դիմային կողմում (այսուհետև ԴԿ), որն առավել վնասվածն է, պակասում է ավելի քան 40 տող (ամբողջությամբ), չհաշված մյուս հատվածների՝ տարբեր չափի վնասված հատվածները, իսկ Հակառակ կողմում (այսուհետև ՀԿ) շատ են վնասվածքները հատկապես 42-52 և 68-80-րդ տողերում:

ԴԿ-ն բաղկացած է շուրջ 96 տողերից. 49-րդ տողից հետո առկա է, ըստ հրատարակչի, շուրջ 16 տող կազմող կորսված մաս: Այդ իսկ պատճառով տեքստի գիտական տառադարձման մեջ, 66-րդ տողից սկսած, համարակալումը տրվում է աստղանիշերով, քանի որ պարզ չէ վնասված տողերի ճշգրիտ քանակը. ՀԿ-ում տողերի քանակը հասնում է 80-ի:

Տեքստի ոչ մի տող ամբողջությամբ չի պահպանվել. աղյուսակի իրական չափերի և վերականգնման մասին կարելի է առաջարկել հետևյալ նկատառումները:

ԴԿ-ում ոչ մի տողասկիզբ չի պահպանվել և ենթադրվում է, որ այստեղ մոտավորապես պակասում է շուրջ 15-16 նշան: ՀԿ-ում վիճակը ավելի բարվոք է և տողավերջում ենթադրելի է շուրջ 5-6 նշանի առկայություն: Տողերի նշանների նախնական քանակը հնարավոր է պարզել տեքստի առավել լավ պահպանված ՀԿ-ի առանձին տողերի վնասված մասերի վերականգնմամբ: Ստորև ներկայացվող աղյուսակում տրված է առկա և վերականգնված նշանների քանակը ՀԿ-ի որոշ տողերում.

Nr.	առկա	վերականգնված	=
27	40	5-6	45-46
28	38	-	43-44
29	43	-	48-49
30	38	-	43-44
32	37	-	42-43

Այսպիսով, մեկ տողում հնարավոր է ենթադրել միջին հաշվով 44-45 նշան:

KUB XXIII 72+-ի ինքնագիր հրատարակությանը կցված ծանոթա-

գրությունում նշվում է, որ ԴԿ-ի առաջին տողերին պիտի նախորդեր աղյուսակի լայնության 1/3-ից քիչ պակաս հատված: Հիմնական տեքստին 1684/ս կցաբեկորի միակցումից հետո նույնքան է պակասում ԴԿ 40-45-ում<sup>10</sup>:

Պայմանագիրը պահպանվել է, ըստ է. Նոյի և Յ. Քլինգերի, Առնոլանդաս I-ի օրոք կատարված քնագրով<sup>11</sup> և առ այսօր հայտնի չէ որևէ պատճեն: Սակայն տեքստի քննությունը կարող է թույլ տալ ենթադրելու, որ KUB XXIII 72+-ը, որպես վերինեփրատյան երկրների ներկայացուցիչների հետ տարբեր ժամանակներում կնքված պայմանագրերի կամ նրանց տրված հրահանգների համահավաք, այնուամենայնիվ այսպես կոչված «աշխատանքային օրինակ» է: Այդ մասին կարող է վկայել ՀԿ-ի երկու հատվածներում արդեն գրված տողերի միջև հավելյալ տողերի ներդրումը (31 և 32 և 54 ու 55). Այդ հավելյալ տողերը մենք համարակալել ենք համապատասխանաբար 31ա և 54ա: Թերևս նույն պատճառով է նաև նախորդ՝ ԴԿ-ից սկսվող տողի շարունակությունը գրվել ՀԿ 35-րդ տողից հետո՝ հակառակ գրությամբ: Երեք դեպքերում էլ արձունի գրիչը հավելում է կատարել դեռևս նախքան աղյուսակի չորանալը:

Կցաբեկորների դիրքը KUB XXIII 72+-ում այսպիսին է.

KBo L 66 (1684/ս + 141/ա) <sup>12</sup>	-	ԴԿ 35-45 և ՀԿ 61+67
121/ա	-	ԴԿ 34-41
KBo LVII 238 (306/ս)	-	ԴԿ 24-30
KBo L 218 (122/ա)	-	ԴԿ 33-41
Bo 8742 <sup>13</sup>	-	ՀԿ 5-12
KUB XL 10 (Bo 7700) <sup>14</sup>	-	ՀԿ 37-40
KBo L 216 (66/ա)	-	ՀԿ 55-63

\*Ըստ հրատարակչի, պայմանագրի մաս կարող է լինել KUB XL

<sup>10</sup> Hoffner 1976: 61.

<sup>11</sup> Neu 1979: 68; Klinger und Neu 1990: 143. KUB XXIII 72+-ի որոշ նշանների գրության ձևեր (tar, ak, ik, uru, fi և այլն) վկայված են միայն «միջին խեթերեն» տեքստերում (idem):

<sup>12</sup> Հրատարակվել է գիտական տառադարձմամբ Հ. Հոֆների (Hoffner 1976: 60ff.):

<sup>13</sup> Այս կցաբեկորը ի հայտ է եկել միայն վերջերս և տեղ չի գտել KUB XXII 72+-ի առ այսօր առկա հրատարակություններում (Soysal 2014: 145ff.):

<sup>14</sup> Կցաբեկորը ներառված է տեքստի մեջ Հ. Օտտենի և Բ. Ռյուստերի կողմից (Otten und Ruster 1977: 53f.):



11-ը<sup>15</sup>, սակայն այն առայժմ հնարավոր չէ կցել տեքստի որևէ հատվածի:

## KUB XXIII 72+-Ի ՀՆԱԳՐԱԿԱՆ-ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹՎԱԳՐՈՒՄԸ

Մինչև 1960-ական թթ. վերջերը KUB XXIII 72+-ը միանշանակ թվագրվում էր մ.թ.ա. XIII դ. երկրորդ կեսով և վերագրվում Առնուվանդաս անունը կրող վերջին արքային (Առնուվանդաս III/IV)<sup>16</sup>: Ի թիվս մի մեծ խումբ պատմական քնույթի տեքստերի, լեզվական-հնագրական հենքի վրա այն հետազայում վերաթվագրվեց մ.թ.ա. XIII դ.՝ այսպես կոչված «վաղ կայսրության» փուլով (Թուդխալիյաս II - Առնուվանդաս I)<sup>17</sup>: Այս շրջանի տեքստերի լեզուն պայմանականորեն կոչվում է «միջին խեթերեն»<sup>18</sup>: Ինչպես «հիմնական օրինակը», այնպես էլ դրա բոլոր կցարեկորների նշանները քնորոշ «միջին խեթական» փուլն են նշում:

Առաջարկվել է KUB XXIII 72+-ը թվագրել Առնուվանդաս I-ի ինքնուրույն կառավարման<sup>19</sup> շրջանով<sup>20</sup>, այս ենթադրությունը ամրապնդվում է նաև տեքստի հնագրական և որոշ կիրառական բառերի գրության առանձնահատկությունների վերլուծությամբ: Օրինակ, *appa* «ետ», \**ap-pan* «կրկին» *maḫḫan* «երբ», *natta* «ոչ», *le/UL* (ժխտ.) բառերի համադրումը CTH 147-ի հետ վկայում է «միջին խեթերեն» տեքստերի շարքում այս երկուսի սերտ կապի մասին<sup>21</sup>:

<sup>15</sup> KUB XL. IV («գիրը և կալը նման են KUB XL 11-ին»):

<sup>16</sup> Sayce 1930: 5ff.; Forrer 1931: 7,20; Gotze, RIA I: 153; Kammenhuber 1969: 256ff. և այլն:

<sup>17</sup> Otten 1969a; 1969b; Carruba 1969: 226ff.; idem 1973: 37ff.; idem 1977: 137ff.; Houwink ten Cate 1970; Neu - Rüster 1973: 221ff. և այլն: Այդ տեքստերից են՝ KUB XIV 1 + KBo XIX 38 (CTH 147 = «Մադդուվատտասի մեղանշանը»), KUB XXVI 41 + KUB XXIII 68 (CTH 133 = «Պայմանագիր Իսմերիզայի հետ») և այլն:

<sup>18</sup> Այս տերմինի փոխարեն Ա. Կամմենհուբերն առաջարկում էր «վաղ նոր խեթերեն» («Frühjung-hethitisch») կամ «արխայիկ նոր խեթերեն» («Archaischjung-hethitisch») (Kammenhuber 1969: 281):

<sup>19</sup> Թուդխալիյաս II-ի կառավարման վերջին շրջանում Առնուվանդասը հանդիսանում էր նրա որդեգիրը և գահակիցը (Beal 1983: 116ff.; Beckman 1986: 23): Կարծիք է հայտնվել այն մասին, որ Առնուվանդասը Թուդխալիյասի որդին էր նախորդ կնոջից, իսկ նրա կինը՝ ապագա թագուհի Ասունիկվալը՝ գործող թագուհի Նիկկալմատիի դուստրը նախորդ ամուսնությունից (Miller 2004: 356):

<sup>20</sup> Houwink ten Cate 1970: 61f.

<sup>21</sup> Idem: 10ff.

a-ap-pa	EGIR-pa		a-ap-pa-an	EGIR(-)-an
CTH	6	1	-	5
CTH	15	4	-	8

	ma-a-ah-ja-an	ma-ah-ja-an	na-at-ta	Ս-ՍԼ
CTH	1		3	- 15
CTH	-		10	- 19

\*Հնարավոր է, այս երկու տեքստերը միևնույն գրչի ստեղծագործությունն են:

### Պայմանական նշաններ

[ ] - կորսված կամ ջնջված հատված:

\* \* - մասնակիորեն վնասված դժվարընթեռնելի հատված:

< > - գրչի կողմից բաց թողնված բառ կամ նշան

ԳԼՈՒԽ I

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

ՊԱՆԽՈՒՎԱՅԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ (KUB XXIII 72+)

ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱՂԱՐՁՈՒՄ

ԴԿ

§ 1

- 1) [.....] <sup>u</sup>ú-ša-a-'pa-an' ú-up-pa-'an'-zi ...<sup>u</sup>Pi-i]g-ga-n[an-na.....] A-NA <sup>u</sup>Mi-i-ta!
- 2) [.....]x nu ka-a-aš a-pa-a-aš <sup>u</sup>Lu-'pa'-ki-u-ut-ta-a[š.....-ut]-ta-aš <sup>u</sup>Ar-zi-u-ut-ta-aš
- 3) [.....-u]t-ta-aš <sup>u</sup>Wa-ar-ti-i-la-aš 2 LÚ<sup>MES</sup>  
[..... <sup>u</sup>]ju-wa-aš-ša-a-ta-aš BE-EL GŠTUKUL
- 4) [.....] y]a?-la-a-aš <sup>u</sup>Ha-te-e-eš :KI-MA 2 LÚ<sup>MES</sup>  
[..... <sup>u</sup>x(-)]k-ki-na-a-aš-sa DUMU <sup>u</sup>ú-ša-a-pa
- 5) [.....<sup>URU</sup>]Pa-a]j-ju-wa nu-uš <sup>URU</sup>Ha-at-tu-ši  
[..... ha]l-zi-ú]-en

§ 2

- 6) [.....da]-'i'-ú-en ka-a-ša <sup>u</sup>Mi-i-ta-aš [li-in-ga-in li-i]n-ki-iš-ki-it nu-za ŠA-PAL NI-IŠ DINGIR<sup>MES</sup>
- 7) [ki-iš-ša-an da-iš nu A-NA <sup>u</sup>UTU<sup>Š</sup> ku-iš ku-u-ru-u]r am-mu-ug-ga-wa-ra-aš  
A-NA <sup>u</sup>[Mi-i-ta ku-u-r]u-ur nu-wa-ra-aš-mu LÚKUR-YA nu-wa-ra-an
- 8) [..... nu A-NA <sup>u</sup>UTU<sup>Š</sup> ku-iš ta-ak-šu-ul am]-mu-ug-ga-wa-ra-aš A-NA  
<sup>u</sup>Mi-[i-ta ta-ak-š]u-ul nu-wa-za ka-a-ša ú-uk <sup>u</sup>Mi-i-ta-aš
- 9) [.....URU.DIDL<sup>ME.A7</sup> ku-it] xx ŠA <sup>u</sup>UTU<sup>Š</sup> ha-r-m[i nu <sup>URU</sup>A-pár]-ju-u-la-an <sup>URU</sup>hur-la-an <sup>URU</sup>hal-mi-iš-na-an
- 10) [<sup>URU</sup>Pa-a]j-ju-u-ra-an ..... nu ÉRIN<sup>MES</sup>-YA ŠJA <sup>u</sup>UTU<sup>Š</sup> ÉRIN<sup>MES</sup> [.....  
k]i-ša-an-ta-ru

§ 3

- 11) [.....]x[.....]-an  
ju-u-ma-an-ta-an an-da ar-nu-mi nu-wa-ra-[.....]xx[...?]
- 12) [.....-i]š-kán  
da-a-ya-aš-kán-na nu-wa a-pa-a-at-ta x[..]x

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԿ

### § 1

- 1) [.....] Ուսապային հանձնեց ..... Պիզ-  
գան[ային էլ ...] Միտային
  - 2) [.....] Այժմ տեսեք, Լուպակիուտտա[սը, .....-ուտ]-  
տասը, Արծիուտտասը,
  - 3) [..... -ուտ]տասը, Վարտիլասը, երկու անձինք [.....] Խուվա-  
սաուտասը՝ BE-EL <sup>66</sup>TUKUL-ը,
  - 4) [.....-ի]ալասը, Խատեսը, այդ երկու մարդիկ [.....-ի]կկինան  
էլ, Ուսապայի որդին,
  - 5) [.....] Պախխուվա: Եվ Խաթթուասա [.....կան-  
չեցի]նք:
- 

### § 2

- 6) [Եվ այսպես նրան երգման տակ դրե]ցինք: Տեսեք, Միտասը [երդ]վեց  
և աստվածային երգման տակ
  - 7) [այսպես դրեց. «Ով Արևին թշնամ]ի է, ինձ՝ [Միտասին էլ] թշնամի  
(կլինի), նա իմ թշնամին է: Նրա դեմ
  - 8) [ես կուվեմ: Ով Արևին բարեկամ է, ի]նձ՝ Մի[տասին էլ բարե]կամ է:  
Տես, այժմ ես՝ Միտաս
  - 9) [.....] Արևի [քաղաքները], որ ես պահում ե[մ՝ Ապար]խուլան,  
Խուրլան, Խալմիսնան,
  - 10) [Պախխուրան ..... Եվ իմ գորքը] Արևի գորքը [.....թ]ող լինի:
- 

### § 3

- 11) [.....] այդ ամբողջը ես ետ կրերեմ: Եվ  
.....
- 12) [.....-ց]ված և գողացված է, դա նույնպես  
կ[տա]մ:

- 13) [.....] na]-an a-  
pé-el <sup>LÚ</sup>TE-*MI I-NA KÁ-YA Ú-UL* t[ar-na]-it-ti
- 14) [.....] na-aš *I-NA*  
<sup>URU</sup>Pa-ab-ḫu-wa a- ar-aš na-aš-ta li-in-g[a-a-u]š šar-ra-at-ta-at
- 15) [.....]x  
i-ya-at nu *IT-TI* <sup>UTU</sup>im-ma [7]-*TI KUR* <sup>URU</sup>ḫa-at-ti
- 16) [me-ek-ki wa-aš-ta-aš-ki-it nu-z]a ŠA <sup>LÚ</sup>KÚR ŠA \*Ú-ša-a-pa  
DUMU.MUNUS-ŠU [A-N]A DAM-ŠU d[a]-aš

#### § 4

- 17) [.....]Š]- \*TU' KUR <sup>URU</sup>ḫa-at-ti-wa-kán ḫu-wa-it [n]u-  
wa-mu-uš-[ša-an]
- 18) [.....]š]a-an an-da *A-NA* \*Mi-i-ta x[.....] ma-a-an  
<sup>UTU</sup>ma
- 19) [.....]x up-pí a-pa-a-ša-aš pí-ra-an [ar-ḫa m]u-  
un-na-a-it nu ki-iš-ša-an te-et ú-u[g-ga-wa-ra]n ša-a-ku-it [Ú-UL u-uh-  
hu-un?]
- 20) [.....]Ú]-UL ku-i-uš-ga u-uḫ-ḫ[u-un <sup>URU</sup>Pa-ab-ḫu]-  
wa Ú-UL ku-iš-ki ú-it

#### § 5

- 21) [.....]Ú]-UL ku-it-ki pa-[iš nu <sup>URU</sup>Pa-ab-ḫ]u-wa-ya *I-NA*  
KUR <sup>URU</sup>l-š-u-wa
- 22) [.....]x Ú-UL ku-it-[ki.....] <sup>UTU</sup>ya-az  
ku-i-uš
- 23)[.....<sup>URU</sup>Pa]-ab-ḫu-wa-ma [.....ku-i-u-u]š LÚ  
<sup>URU</sup>l-š-u-wa an-da pa-[iz]-zi
- 24) [.....] x(-)i]š-ḫa-a-[.....]-ša?-[zi?]  
na-aš-š-u an-tu-uḫ-ša-an ar-nu-zi
- 25) [.....] x an-t[u-.....d]a-a-ya-u-wa-ar ar-nu-zi
- 26) [.....]na\*-aš-ma lu-te-[.... a-p]a-a-ša-aš-ši-iš-ša-  
an nam-ma KASKAL-an
- 27) [.....nam-ma-wa-aš-ši-kán] ki-iš-ša-an kap-pu-u-uš-ki-iz-zi

#### § 6

- 28) [.....]-\*ra\* a-us-zi n[a.....] ú-wa-u-e-ni ku-in <sup>EGIR</sup>EGIR-pa šar-ni-  
in-ke-eš-ki-u-e-ni
- 29) [..... nu] <sup>URU</sup>\*ḫal\*-mi-iš-na-a]n <sup>URU</sup>Pa-ab-ḫu-u-ra-an  
<sup>URU</sup>ḫur-la-an <sup>URU</sup>A-pár-ḫu-u-la-an

- 13) [.....] այդ մարդու բանագնացին իմ դարպասի մոտ չ[թող]նես:
- 14) [.....] եվ նա] Պախխուվա գնաց և եր[դում]ը դրժեց:
- 15) [.....] նա արեց: Եվ Արևիս ու Նույնիսկ Խաթթիի դեմ
- 16) [.....] թշնամի Ուսապայի դստերը կնության վ[երցր]եց:

§ 4

- 17) [.....] ով Խաթթիից փախել էր և ինձ մոտ [էր]
- 18) [եկել .....] Միտային [.....] Երբ ես, Արևս,
- 19) [.....] «Ուղարկիր», նա նրանց թաքցրեց և այսպես ասաց. «Ես [.....] աչքերովս [չեմ տեսել],
- 20) [.....] ոչ մեկին [չեմ տեսել], ոչ ոք [Պախխուվա չի եկել]:»

§ 5

- 21) [.....] ոչ]ինչ չտ[վեց]: Եվ Պախխուվայից դեպի Իսուվա
- 22) [.....] ոչ]ինչ [.....] Արևիցս ով
- 23) [.....] բայց [Պախխուվա իսուվացիների] մոտ նա գն[ա]ց:
- 24) [.....] xxxxxx [.....] նա կամ մարդ էր բերում
- 25) [.....] xxxxx [.....] ավար էր բերում:
- 26) [.....] և նա կրկին [.....] իր համար ճանապարհ
- 27) [.....] այդպես ծրագրում էր:

§ 6

- 28) [.....] նա տեսավ և [.....] մենք կգանք և ամեն մեկի համար կփոխհատուցենք:
- 29) [.....] և] Խալմիսեա, Պախխուրա, Խուրլա, Ապարխուվա քաղաքները



- 30) [.....]x \*EGIR\*-an ša-ra-a zi-ik-ki-it  
nu KUR<sup>URU</sup>I-šu-wa
- 31) [..... an-da pa-a-an]-za nu-kán pa-a-ir  
ŠA KUR<sup>URU</sup>Kum-ma-a-ha URU.DIDL<sup>TRA</sup>A ku-e-nir
- 32) [.....]-ta Ú LÚ<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Ti-im-mi-  
ya na-at-ša-an an-da
- 33) [.....]x ku-wa-pí ku-wa-pí  
ŠA \*UTU<sup>SI</sup> LÚ<sup>KUR</sup>

## § 7

- 34) [.....-]x-za x[-.....]-\*ša\*-ri nu-za-kán URU-ri ša-  
ra-a a-pu-u-un tar-na-i nu ka-a-ša
- 35) [.....pé-r]a-an kat-t]a .....]-\*u?\*-uš ka-a-ša  
\*UTU<sup>SI</sup> li-in-ga-nu-nu-un nu a-ap-pa I-NA<sup>URU</sup>Pa-ah-]ju-wa
- 36) [.....] UGULA 10<sup>UT-TA</sup> [ .....k]u-\*iš\* \*Pi-ig-ga-na-a-  
aš nu \*Mi-i-ta-aš me-ek-ki ku-it wa-aš-ta-aš-ki-it
- 37) [.....]x nu a-pa-\*a\*-[as .....] i-đa-\*a\* -lu-uš an-tu-wa-  
ah-]ja-aš NI-IŠ<sup>E</sup> DINGIR<sup>TRA</sup>kán a-pa-a-aš-ša šar-ra-aš-ki-it
- 38) [.....]x LÚ<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Ma-x[.....]xx ARAD<sup>MES</sup> \*UTU<sup>SI</sup> za-ah-  
]ji-ya-at nu-za-kán A-BU-ŠU ŠUM-an ]jal-za-iš nam-ma-aš-za
- 39) [.....]x u-ug nam-\*ma\* ŠA \*UTU<sup>SI</sup> ku-i-uš URU.DIDL<sup>TRA</sup>A \*Mi-i-  
ta-aš a-pa-a-aš-ša ]jar-kán-zi URU]jal-mi-iš-na-an ku-i-uš
- 40) [.....im-ma ku-i-uš .....] nu-wa-ra-aš \*]Ja-aš-ša-a-na-aš ku-iš ]jar-  
ta nu-wa-ra-aš LÚ<sup>KUR</sup>Š, e-eš-ta ú-ga-wa-az Ú-UL im-ma LÚ-aš nu-wa-ra-aš  
Ú-UL pi-ib-]ji

## § 8

- 41) [.....QA-D]U \*DAM<sup>MES</sup> ŠU-NU DUMU<sup>MES</sup> ŠU-NU  
DUMU.DUMU<sup>MES</sup> ŠU-NU SAG.GÉME.ARAD<sup>MES</sup> ŠU-NU GU<sup>TRA</sup> ŠU-NU  
UDU<sup>TRA</sup> ŠU-NU QA-DU MI-IM-MI-ŠU-NU ar-nu-ut-tén
- 42) [ap-pa ŠIG<sup>MA</sup>ma-iš-ta]-an ma-ši-wa-an-ta-an le-e ap-te-ni É \*Ka-li-mu-na-ya  
QA-DU DAM-ŠU DUMU<sup>MES</sup> ŠU GU<sup>TRA</sup> ŠU UDU<sup>TRA</sup> ŠU
- 43) [ANŠE.KUR.RA<sup>TRA</sup> ŠU(?) pa-ra-a pi-i]š-tén ŠA \*UTU<sup>SI</sup> ya A-NA GŠTUKUL  
ku-i-e-eš pi-ra-an ar-]ja iš-pár-te-er LÚ<sup>MES</sup> URU<sup>URU</sup>A-ar-]ji-i-ta
- 44) [.....] ku-iš šu-ma-a-aš A-NA LÚ<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Pa-ah-]ju-wa an-da ú-wa-  
an-za na-an ]ju-u-ma-an-ta-an an-da
- 45) [ar-nu-ut-tén nu DAM<sup>MES</sup> ŠU-]U DUMU<sup>MES</sup>[-ŠU-NU ...]x šu-me-en-za-an  
kán URU-ri ku-e-da-ni-ik-ki EGIR-an
- 46) [.....]-e/ya an-da pa-a-an-za na-an-ša-an ku-e-da-ni

- 30) [.....]x հետո նա նրանց վրա դրեց:  
Եվ Իսուվա երկիրը
- 31) [.....] նա մոյալ? Նա գնաց և հարվածեց Կում-  
մախայի քաղաքներին:
- 32) [.....] և Տիմմիայի ժողովրդին  
և
- 33) [.....] որտեղ որ Արևին թշնա-  
մի կար:

## § 7

- 34) [.....] xxx [.....] xxx Եվ այդ մարդուն նա քաղաք էր թող-  
նում: Իսկ այժմ տես.
- 35) [.....] xxx [.....] xxx Տես. Ես, Արևս, նրան երդ-  
վեցրի և նրան ետ, դեպի Պախտուվա
- 36) [.....] տասնյակի հրամանատար [.....] որ  
Պիզգանան էր: Եվ ինչպես Միտան խիստ մեղանչել էր,
- 37) [.....] և այ[ս] չար մարդն էլ աստվածային երդումը  
նույնպես դրժեց:
- 38) [«.....] Մա-x[.....] քաղաքի բնակչությանը, Արևիս  
ծառաների վրա նա հարձակվեց: Եվ նա նրա հորը անունով էր  
դիմում: Հետո նա
- 39) [.....] Իսկ Արևիս քաղաքները, որ Միտան և նա  
պահում էին՝ Խալմիսան, որը
- 40) [.....] «Խասսանասը, ով պահում էր, նա կառա-  
վար էր, արդյոք ես մարդ չեմ, ես դրանք չեմ վերադարձնի»:

## § 8

- 41) [.....] իրենց կանանց, որդիների, թոռների,  
արական և իգական սեռի ծառաների, կովերի, ոչխարների, ունեց-  
վածքի հետ միասին հանձնեց:
- 42) [Բրդի] մի կտոր էլ չպահեց: Կայիմունայի տունը իր կնոջ, որդիների,  
կովերի, ոչխարների հետ միասին
- 43) [ծիերի(?) հետ տվ]եց: Արևիս զենքից ուլքեր փայտան՝ արխտա-  
ցիներին,
- 44) [.....] ուլքեր եկան քո մոտ, պա[խտուվա]ցիներին, նրանց  
բոլորին
- 45) [բռնեք և իրեն]ց [կանանց], որդիների [հետ միասին]: Ձեր որ քաղաք  
էլ
- 46) [.....] նա գա, որ



- 47) [URU-ri EGIR-an na-an-ša]-an A-NA ʹUTU<sup>5</sup> a-pu-u-un URU-an kat-ta ta-a-wa-na  
 48) [.....ar-nu-ut]-tén? pa-ra-a ʃu-u-da-a-ak na-iš-tén

---

§ 9

- 49) [.....] x x x  
 x [.....]x x[.....]  
 50) [  
 51) [  
 52) [  
 53) [  
 54) [  
 55) [  
 56) [  
 57) [  
 58) [  
 59) [  
 60) [  
 61) [  
 62) [..... ku-it ʃa-a]p-pí-ra-a-an nu-kán a-pa-a-at-ta IŠ-TU KUR [.....]-  
 a?-ap-pa wa-a-aš-tén na-at pa-ra-a pí-iš-tén  
 63) [  
 64) [  
 65) [  
 66) x[  
 67) ma-a-na-a[š  
 68) \*ka-ru-u\* [  
 69) \*kat-ta-an\* [  
 70) \*me-eg-ga\* [  
 71) \*ú-e šu\*-[  
 72) xx [

---

§ 10

- 73) nu-uš-š[ a-an..... ]  
 74) ud-ʹ da ʹ-[ a-ar ..... ]  
 75) pa-aḫ-[..... ]  
 76) na-aš [  
 77) [  
 78) [

47) [քաղաքում էլ դուք գտնեք] նրան, այդ քաղաքը Արևիս արդարա-  
մտությամբ

48) [.....րոն]եք, անսիջապես վերադարձրեք»:

---

**§ 9**

49-61') ամբողջապես կորսված է:

62) [«..... ինչը վաճառվել է, նաև գնեք դրանք այդ  
երկրից և տվեք»:

63'-66') կորսված է:

67') եթե ն[ա] .....

68') նախկինում [.....

69') .....

70') շատ/հաճախ [.....

71') xxx

72') xxx

---

**§ 10**

73') եվ նա [.....

74') բա[ն] .....

75') xxx

76') եվ նա [.....

77'-85') գրեթե ամբողջությամբ կորսված է:

- 79) [ ..... ]  
 80) [ ..... ]  
 81) [ ..... ]  
 82) [ ..... ]  
 83) [ ..... ]  
 84) [ ..... ]  
 85) x[ ..... ]  
 86) \*a\*-ra-a[b- ..... ]  
 87) xx[ ..... ]  
 88) [ ..... ]  
 89) [ ..... ]  
 90) [ ..... ] x x x [ ..... ]  
 91) [ ..... ] x [ ..... ]  
 92) [ ..... ]<sup>URU</sup>Pa-a]b-ju-wa \*Pa-x[ ..... ]  
 93) [ ..... ] 15 LÚ<sup>MES</sup> ŠU.GI x[ ..... ]  
 94) [ ..... ] x \*Š]a-an-ta-LÚ-i[š ..... ]  
 95) [ ..... ] \*Mi-i-t[a ..... ]  
 96) [ ..... ] xxx [ ..... ] x [ ..... ]

#### ċ4

#### § 11

- 1) [A-NA \*A-r]i-i]b-pi-iz-zi-in-na [LÚ<sup>URU</sup>P[it-te-y]a-ri-ga \*A-i-iš-ši-ya LÚ<sup>URU</sup>Du-ug-ga-a-ma \*A-li-[..... LÚ<sup>URU</sup>.....]
- 2) nu-uš-ma-aš ŠA-PAL NI-IŠ DINGIR<sup>MES</sup> ki-i]š-ša-an da-i-ú-en ka-a-ša \*Mi-i-ta-aš wa-aš-ta-a[š-ki-it ŠA-PAL NI-IŠ DINGIR<sup>MES</sup>-ya]
- 3) ku-e ud-da-a-ar ti-ya-[a-an] e-eš-ta a-pa-a-ša-at-kán ju-u-ma-an-ta šar-ra-aš nu A-NA \*M[i-i-ta ku-e ud-da-a-ar]
- 4) pi-ra-an kat-ta te-eb-ju-un [na]-at šu-me-eš ju-u-ma-an-te-eš i[š]-ta-ma-aš-tén nu ka-a-ša \*UTU<sup>Š</sup> x[.....]
- 5) [A-NA] LÚ<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Pa-ab-ju-wa-ma [ba-a]t-ra-a-nu-un nu ma-a-an pa-a-an-z[i] LÚ<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Pa-ab-ju-wa ba-an-da-a-an-[zi? É \*Mi-i-ta]
- 6) [QA]-DU [DA]M-ŠU DUMU.MUNUS \*Ú-ša-a-pa DUMU<sup>MES</sup>-ŠU QA-DU MAR-ŠI-TI-ŠU QA-DU SAG.GÉME.ARAD<sup>MES</sup>-ŠU GU<sup>TR.A</sup>-ŠU UDU<sup>TR.A</sup>-ŠU ANŠE.KUR.RA<sup>TR.A</sup>-ŠU ...]
- 7) \*É\* \*ĥa-aš-ša-a-na É \*Ka-li-mu-na QA-DU DAM<sup>MES</sup>-ŠU-NU DUMU<sup>MES</sup>-ŠU-NU SAG. GÉME.ARAD<sup>MES</sup>-ŠU-NU GU<sup>TR.A</sup>-ŠU-NU UDU<sup>TR.A</sup>-ŠU-NU ANŠE.KUR.RA<sup>TR.A</sup>-ŠU-NU.....]

86) xxx

87-91)

92) [..... Պախխուվա Պա-անծնանվան սկզբնամաս  
է (Հեղ.).....]

93) [.....] 15 ավազներ [.....]

94) [..... Սյանթացիտիս .....

95) [..... Սխտ[ա .....

96) xxx

## Հ4

### § 11

- 1) [Արի]խպիցցիի՝ [պիտտեյ]արիգացու, դուզգամացի Ախսիի, [.....-ացի] Այի-.....] համար:
- 2) Նրանց համար աստվածային երդման տակ մենք [այս]պես դրեցինք: Տես, Միտան մեղան[չեց և այստվածային երդումը],
- 3) այդ բաները, որ նրա համար դր[վել] էին, նա դրանք բոլորը դրժեց: Եվ Միտայի դեմ [մեղադրանքները],
- 4) որ ես դրեցի, դուք բոլորդ լսեցինք: Հիմա տեսք, ես՝ Արևս [.....]
- 5) Պախխուվայի ժողովրդ[ին գր]եցի: Եթե Պախխուվայի ժողովուրդը գն[ա] և բռն[ի, Միտայի տունը]
- 6) իր [կնո]ջ՝ Ոսապայի դստեր, նրա որդիների, ունեցվածքի, արական և իգական սեռի ծառաների, կովերի, ոչխարների, [ծիերի ...հետ] [.....]
- 7) Խասսանայի տունը, Կայիմունայի տունը նրանց կանանց, որդիների, արական և իգական սեռի ծառաների, կովերի, ոչխարների [ծիերի] հետ

- 8) ar-nu-an-zi nu ʒu-u-ma-an pa-ra-a pí-an-zi a-ap-pa <sup>SIG</sup>ma-iš-ta-[an ma]-ši-wa-an-ta-an *Ú-UL* a[p-pa-an-zi]

§ 12

- 9) 5 SAG.DU<sup>MES</sup>-ya-kán ku-e ŠA <sup>U</sup>ša-a-pa I-NA URUPa-əḫ-ḫu-wa še-[er...] IT-77 DUMU.MUNUS-ŠU nu a-pé-e-ya [pa-ra-a pí-ya-an-zi]
- 10) ŠA <sup>U</sup>TU<sup>SI</sup>-ya ku-iš URU.DIDL<sup>TRA</sup> ḫar-kán-zi URUḫal-mi-iš-na-an URUḫur-lja-an URUPa-əḫ-ḫu-u-ra-an URUA-pá[r-ḫu-u-la-an.....]
- 11) ar-ḫa tar-na-an-zi DUMU <sup>U</sup>ša-a-pa-ya ap-pa-an-zi na-an pa-ra-a pí-an-zi ma-a-na-aš-kán URUPa-[əḫ-ḫu-wa pa-ra-a pí-ya-an-zi]
- 12) na-aš ku-wa-pí pa-a-an-za na-an <sup>U</sup>ša-an ku-e-da-ni URU-ri EGIR-an na-an-ša-an A-NA <sup>U</sup>TU<sup>SI</sup> kat-ta p[i-a-an-zi.....]

§ 13

- 13) ŠA KUR URUḫ-šu-wa-ya ku-it ku-it ḫar-kán-zi an-tu-uḫ-ša-an GU<sup>TRA</sup> UDU<sup>TRA</sup> ḫu-ya-an-za-aš-ša-aš-ma-aš-kán [ku-iš ku-iš]
- 14) an-da pa-a-an-za nu an-tu-wa-əḫ-ḫa-aš ku-iš a-ag-ga-a-an-za GU<sup>TRA</sup> UDU<sup>TRA</sup> ku-iš ar-ḫa a-da-a-an-[za *Ú-UL* du-ug-ga-a-ri]
- 15) ku-i-ša e-eš-zi-ma ša-a-ku-[w]a-at-kán du-ug-ga-a-ri nu ʒu-u-ma-a[n] pa-ra-a pí-an-zi a-ap-pa <sup>SIG</sup>ma-iš-ta-an ma-ši-wa-an-ta-an le-e ap-te-ni]
- 16) na-at pa-ra-a pí-an-zi ŠA <sup>U</sup>[TU<sup>SI</sup>]-ya ku-it tu-uz-zi-iš I-NA KUR URUKum-ma-a-ḫa e-eš-ta nu-[uš-ši ku-iš]
- 17) pí-ra-an ar-ḫa iš-pár-za-[aš-ta A]-NA LÚ<sup>MES</sup> URUPa-əḫ-ḫu-wa-ma-aš-kán an-da pa-it na-an ʒu-u-ma-an-ta-[an pa-ra-a pí-ya-an-zi]

§ 14

- 18) nam-ma ÉRIN<sup>MES</sup>-an MU-ti M[U-ti p]i-iš-kán-zi nu ma-əḫ-ḫa-an ÉRIN<sup>MES</sup> URUḫ-šu-wa šu-me-en-za-an-na ÉRIN<sup>MES</sup>-KU-NU ni-ni-in-[kán-ta]
- 19) ÉRIN<sup>MES</sup> URUPa-əḫ-ḫu-wa-ya an-da A-NA ÉRIN<sup>MES</sup>-KU-NU QA-TAM-MA i-ya-at-ta-ru wa-a-ar-ra-ša ut-tar šu-ma-a-aš ma-[əḫ-ḫa-an ʒu-ya-ad-du-ma]
- 20) wa-ar-ra-aš ud-da-[ni] šu-me-eš ma-əḫ-ḫa-an pa-ra-a ʒu-ya-ad-du-ma LÚ<sup>MES</sup> URUPa-əḫ-ḫu-wa-ya pa-ra-a QA-TA[M-MA ʒu-ya-an-ta-ru]
- 21) nu ku-iš A-NA <sup>U</sup>TU<sup>SI</sup> ku-u-ru-ur A-NA LÚ<sup>MES</sup> URUPa-əḫ-ḫu-wa-ya-at ku-u-ru-ur a-ša-an-du A-NA LÚKÚR<sup>MES</sup> ma LÚḫE<sup>MES</sup>-MI *Ú-UL* u-i-ya-an-zi]
- 22) ŠA LÚKÚR<sup>MES</sup>-ma-za-kán LÚḫE<sup>MES</sup>-MI I-NA KÁ-ŠU-NU *Ú-UL* tar-na-an-zi ku-i-ša-aš-ma-aš LÚKÚR<sup>MES</sup> LÚḫE<sup>MES</sup>-MI u-i-e-ez-zi a-pé-[e-el (LÚḫE<sup>MES</sup>-MI) ap-pa-an-zi]
- 23) [n]a-an A-NA <sup>U</sup>TU<sup>SI</sup> up-pí-an-zi a-ap-pa-ma-an-kán ZI-it *Ú-UL* ne-e-a-an-zi ku-i-ta-aš-ma-aš ut-tar ḫa-[at-ra-a-an-zi nu a-pa-a-at?]

8) բռնեն և ամբողջը տան, մի կտոր [ր ք]ուրդ էլ չպ[ահեն]:

---

**§ 12**

- 9) (Այն) հինգ անձինք էլ՝ Ոսապայի ծառաները, որ Պախխուվայում են, նրա դստեր հետ միասին, նրանց էլ [տան]:
- 10) Ե՛վ Արևիս քաղաքները որ պահում են, Խալմիսան, [Խուրվյան, Պախխուրան, Ապա[րխուլան .....]
- 11) ազատեն, բռնեն Ոսապայի որդուն և նրան տան, եթե նա Պախխուվայում է, հ[անձնեն],
- 12) եվ ուր էլ որ նա գնացել է, որ քաղաքում էլ որ (լինի), նրան Արևիս տ[ան]:

---

**§ 13**

- 13) Իսուվայի ինչ ունեցվածք որ պահում են, մարդ, կովեր, ոչխարներ, փախստականներ, [ովքեր]
- 14) գնացել են (նրանց մոտ): Մարդը ով մահացել է, կովերը (և) ոչխարները, որոնց կերել են, [կարևոր չէ],
- 15) (Բայց) ինչ որ մնացել է, դա կարևոր է: Այդ ամբողջը թող հանձնեն: [Մի կտոր բուրդ էլ չպահեն]:
- 16) Եվ այս ամբողջը հանձնեն: Եվ երբ Արևիս զորքը Կումմախայում էր, [ովքեր]
- 17) փախել էին և Պախխուվայի ժողովրդի մոտ էին գնացել, նրանց բոլորին թող վերադարձնեն):

---

**§ 14**

- 18) Այնուհետև, եթե նրանք ամեն տարի զորք տան, և ինչպես Իսուվայի զորքը և ձեր զորքը հավաքվում է],
- 19) Պախխուվայի զորքը ձեր զորքի պես թող արշավի, օգնության խոսքը ե[րբ հասնի] ձեզ,
- 20) ինչպես դուք օգնության խոսք[ի] դեպքում արշավում եք, պախխուվացիները նույն[պես պետք է արշավեն]:
- 21) Ով Արևիս թշնամի է, պախխուվացիներին նույնպես թող թշնամի լինի: Թշնամու մոտ եթե [բանազնաց չուղարկեն],
- 22) թշնամու բանազնացին իրենց դարպասից ներս չթողնեն, որ թշնամին էլ որ բանազնաց ուղարկի, նր[ան (բանազնացին) բռնեն]
- 23) [և] նրան Արևիս ուղարկեն, սեփական կամքով նրան ետ չուղարկեն, և ինչ բառեր էլ որ նա (այսինքն թշնամին - <եղ>) գրի, [այդ?]

- 24) [ք]անը Արևիս ճշգրտությամբ գրեն, չկեղծեն: Եթե պախխուվացիները [այդ բանը]
- 25) անեն, ապա նրանք Արևիս ծառաներն են: Բայց եթե պախխուվացիները այդ բանը չանեն և [.....]
- 26) իշխանությունը արհամարհեն և թշնամություն անեն, ապա մինչև իմ զորքը կգա, դու[ք հարվածե՞ք]:

---

### § 15

- 27) Այն օրը, երբ Պախխուվայի ժողովրդի թշնամության մասին կլսեք, այ[դ օրը Պախխուվա]
- 28) գնացեք և Պախխուվային հարվածեք, այնքան հարվածեք մինչև իմ զորք[ը կգա]:
- 29) պախխուվացիների արյունով ձեր ձեռքերը անմիջապես արյունոտեք: [Ու] որ պախխուվացիների արյունով [իդ ձեռքերը (անմիջապես)]
- 30) չարյունոտի, ապա ես՝ Արևս, Պախխուվա չեմ գնա, այլ անմիջապես նրա մոտ [կգնամ]
- 31) նրան անմիջապես կսպանեմ, հետո (միայն) Պախխուվա նույնպես ճակատամարտի կգնամ:
- 31ա) Սանթացիտիսը և Մուվատալլիսը՝ նրանց «մեծերը»:

---

### § 16

- 32) Վալվացիտին՝ Սուլլամայից, Կասիյարասը՝ Ցանցալիյայից, Արիտկուն՝ Լիլլիմայից, [.....-ն]
- 33) և Մախուիլուն՝ Խինծուտայից, Սանթասը Վատուարուսնայից, Խալպասը (և) Սիուսասը՝ Ա-xx-ից (քաղաքի անվան սկիզբն է - <եղ>),
- 34) Ուսապասը՝ [S]ախխիսայից, Պախաուվասը՝ Ալաթարմայից, Ակարկիսը՝ Պալիսնայից, Պիզգանասը՝ .....-ից]
- 35) Խուրուսը՝ Մարարխայից, Ազգասը՝ Տախիսնայից, Տախիսալլիսը՝ Խալմայից, սրա[նք.....]:

---

### § 17

- 36) [Ձեզ համար]՝ Իսուվայի ավազներ, Պախխուվայի ավազներ, Ցուխմայի ավազներ, Խ[ուրիի?] ավազներ,
- 37) [և] Մալդիայի ավազ[ներ], Պիտուիյարիզայից Արիխպիցցիի համար աստվածային երդումը թուր[ի համար այսպես?] դրեցինք:

- 24) [թ]անը Արևիս ճշգրտությամբ գրեն, չկեղծեն: Եթե պախխուվացի-  
ները [այդ բանը]  
25) անեն, ապա նրանք Արևիս ծառաներն են: Բայց եթե պախխուվա-  
ցիները այդ բանը չանեն և [.....]  
26) իշխանությունը արհամարհեն և թշնամություն անեն, ապա մինչև իմ  
զորքը կգա, դուք հարվածե՞ք]:
- 

#### § 15

- 27) Այն օրը, երբ Պախխուվայի ժողովրդի թշնամության մասին կլսեք,  
այ[դ օրը Պախխուվա]  
28) գնացեք և Պախխուվային հարվածեք, այնքան հարվածեք մինչև իմ  
զորքը[ը կգա]:  
29) պախխուվացիների արյունով ձեր ձեռքերը անմիջապես արյունոտեք:  
[Ով] որ պախխուվացիների արյունով [իր ձեռքերը (անմիջապես)]  
30) չարյունոտի, ապա ես՝ Արևս, Պախխուվա չեմ գնա, այլ անմիջապես  
նրա մոտ [կգնամ]  
31) նրան անմիջապես կսպանեմ, հետո (միայն) Պախխուվա նույնպես  
ճակատամարտի կգնամ:  
31ա) Սանթացիտիսը և Մուվատայիսը՝ նրանց «մեծերը»:
- 

#### § 16

- 32) Վալվացիտին՝ Սուլամայից, Կասիյարասը՝ Յանցալիյայից, Արիտ-  
կուն՝ Լիլլիմայից, [.....-ն]  
33) և Մախուիլուն՝ Խինծոտայից, Սանթասը Վատտարունայից, Խալ-  
պասը (և) Սիոսասը՝ Ա-xx-ից (քաղաքի անվան սկիզբն է - <եղ.․),  
34) Ոսապասը՝ [S]ախխիսայից, Պախաուվասը՝ Ալաթարմայից, Ակար-  
կիսը՝ Պալիսնայից, Պիզ[գանասը՝ .....ից]  
35) Խուրուսը՝ Մարարխայից, Ազգասը՝ Տախխնայից, Տախխալիսը՝  
Խալմայից, սրա[նք.....]:
- 

#### § 17

- 36) [Ձեզ համար]՝ Իսուվայի ավագներ, Պախխուվայի ավագներ, Յուխ-  
մայի ավագներ, Խ[ուրրիի?] ավագներ,  
37) [և] Մալդիայի ավագ[ներ], Պիտտիյարիզայից Արիխպիցցիի համար  
աստվածային երդումը բոլո[րի համար այսպես?] դրեցինք:



§ 18

- 38) [šu-me-eš ɥu-u-m]a-[a]n-te-eš ARAD<sup>MES</sup> ʹUTU<sup>Sr</sup> nu-uš-ša-an A-NA LUGAL MUNUS.LUGAL DUMU<sup>MES</sup> LUGAL DUMU.DUMU<sup>MES</sup> LUGAL kat-ta ɥa-a-aš-ša ɥa-an-za-aš-ša x[...]
- 39) [LUGAL MUNUS.LUGAL DUMU<sup>MES</sup> LU]GAL DUMU.DUMU<sup>MES</sup> LUGAL kat-ta ɥa-a-aš-ša ɥa-an-za-a-aš-ša A-NA BE-LU-TI-KU-NU ʹKUR URU<sup>URU</sup>ɥa-at-ti I-NA EG[IR.UD<sup>ME</sup> pa-aɥ-ɥa-aš-te-ni]
- 40) [nu ku-iš A-NA ʹUTU<sup>Sr</sup> ʹKUR šu-ma]-a-ša-aš ʹKUR-KU-NU e-eš-tu na-an ʹU[ʹTU<sup>Sr</sup> ma-aɥ-ɥa-a]n kar-ši za-aɥ-ɥi-ya-aɥ-ɥa šu-me-e-[ša-aš QA-TAM-MA]
- 41) [kar-ši za-aɥ-ɥi-ya-ad-du-ma-at na-a]t KÁ-KU-NU le-e tar-ši-ki-it-[te-ni ŠA ʹKUR] ʹKUR ʹku-ú-ša-an ʹga-i-[na-an .....]
- 42) [.....]x ʹKUR ʹTE<sub>MI</sub> le-[e.....a]t-ta ʹTE<sub>MI</sub> le-e [.....]
- 43) [.....]x[.....]x[.....]k]at-ti-iš-ši ú-iz-zi [ ]

§ 19

- 44) [.....]x[.....]
- 45) [.....]-\*a-ra-aš-ma-aš\*  
[.....]
- 46) [.....]x ta-ma-a-i ɥa-[at-ra-at-te-ni?.....]
- 47) [.....] le-e ɥa-at-ra-a-at-t[e-ni.....]
- 48) [.....za-aɥ-ɥi-ya-aš] pé-e-di ŠA ʹKUR an-tu-uɥ-š[a.....]
- 49) [.....]x ŠA NUMUN-ŠU ŠA MÁŠ-ŠU le-e ku-i[š-ki.....]xx[.....]xx
- 50) [.....ma]-a-an a-pé-ya-pat za-aɥ-ɥi-ya-aš pé-e-di ar-ɥa [.....] nam-ma-an mu-un-na-a-iz-zi
- 51) [.....a-a]p-pé-ez-zi-ya-an ar-ɥa tar-na-i ŠA ʹKUR-ya [.....t]én nu a-pé-e-el
- 52) [.....]-aš URU-ya-aš ša-ak-la-iš na-ak-ki-ša-[as ..... a-pé]-e-da-az na-ak-ki-iš
- 53) [.....]x PÚ<sup>UR</sup> KASKAL<sup>UR</sup> ma-aɥ-ɥa-an nu ɥu-u-ma-an e-la-[ni-ya-at-tén mu-un-na-at-tén le-e] ku-it-ki nu ma-li-iš-ku
- 54) [ut-tar le-e ta-aš-ša-nu-u]t-ta-ni ta-aš-šu-ma ut-tar le-e ma-li-iš-ku-nu-ut-ta-n[ i š]a-a-ku-wa-aš-šar me-mi-iš-tén

---

**§ 18**

- 38) Դուք բոլորդ Արևիս ծառաներն եք: Արքային, թագուհուն, արքայի որդիներին, արքայի թոռներին, նրա սերունդներին և հետևորդներին [.....]
- 39) [Արքային, թագուհուն], [արք]այի [որդիներին], արքայի թոռներին, նրա սերունդներին և հետևորդներին որպես ձեր իշխանություն և Խաթթի երկիրը ապ[ագայում պետք է պաշտպանեք]:
- 40) Ով Արևիս թշնամի է, ձեր թշնամին էլ պետք է լինի, եթ[ե] Ա[րևս] նրա դեմ կռվում եմ, դու[ք] էլ նույնպես] նրա դեմ
- 41) [պետք է կռվեք, և նրա]ն ձեր դադապսից ներս չթող[նեք], [թշնամու որդե[գրին .....]
- 42) [.....] թշնամու բանագնացին չ[.....]x, բանագնացին չ[.....]
- 43) [.....q]ա նրա հետ [...]
- 

**§ 19**

- 44) [.....]
- 45) [.....] xxxxx
- 46) [.....] ուրիշին գ[րեք? .....]
- 47) [.....] չգրե[ք .....]
- 48) [..... մարտա]դաշտում թշնամու զինվոր[ը .....]
- 49) [.....]x նրա սերնդից, նրա տոհմից ոչ մե[կը .....]
- 50) [..... ե]թե նրան մարտադաշտում [.....], հետո նրան թաքցնի:
- 51) [.....ս]տորին մարդուն ազատի, թշնամու [.....]-եք, այդ մարդու
- 52) [.....] քաղաքի օրենքը հարգվի [.....] դրանից/դրա պատճառով հարգվի,
- 53) [.....] ինչպես աղբյուրներն ու ճանապարհներն են, ամեն ինչ պետք է ամբողջությամբ նկա[րագրեք, չթաքցնեք]: Փոքր
- 54) բանը չմեծացն[եք], մեծ բանը չփոքրացնե[ք], [ճ]մարտությունն ասեք:
-

§ 20

- 55a) nu KASKAL<sup>LIM</sup> EGIR-an DAM LÚ-ši DUMU.MUNUS LÚ-ši le-e ša-ak-ku-ri-iš-ki-te-[ni ..... da]m-mi-iš-ḫi-iš-ki-te-ni
- 55) [nu ma-aḫ-ḫa-an šu-me-e-eš? ..... ]-it i-ya-ad-du-ma nu-za KASKAL<sup>LIM</sup> EGIR-an LÚ MUNUS DUMU.NITA DUMU.MUNUS ARAD GÉME GU<sub>4</sub> UDU ANŠU.[KUR.RA ANŠU.GIR.NU]N.NA ANŠU KÚ.BABBAR GUŠKIN
- 56) [AN.BAR(?) .....Z]ABAR Ú URUDU<sup>UR.A</sup> le-e ku-iš-ki da-a-ya-az-zi LÚ<sup>ḫu</sup>-ya-an-za-aš-ša-aš-m[a-aš LÚ<sup>pit</sup>-te-y]a-an-za-aš-ša ku-iš an-da
- 57) [i-ya-at-t]a-ri ma-a-na-aš EL-LUM ARAD GÉME na-an ap-pi-iš-ki-it-tén na-an MA-HAR<sup>UTU</sup> Ú-i-[da-a-at-tén] LÚ<sup>KUR</sup>-ma-an-za
- 58) [..... URU]-ya KUR-ya pa-ra-a le-e ku-e-da-ni-ik-ki ḫa-ap-pí-ra-at-te-ni IGI<sup>UR.A</sup>.ŠU-ya [I-NA ḪUR.SAG-i ]le-e na-iš-ta-ni
- 59) [ma-a-an i]-da-a-lu-un-ma me-mi-an ku-e-da-ni-ik-ki an-da iš-ta-ma-aš-te-ni na-aš-šu ŠA E.GAL<sup>LIM</sup> [.....] na-aš-ma ŠA LÚ<sup>KUR</sup>
- 60) [..... k]u-u-ru-ra-aš me-mi-aš na-an ap-pé-eš-ki-it-tén na-an MA-HAR<sup>UTU</sup> Ú-i-da-a-at-tén

§ 21

- 61) [ŠA LÚ<sup>KUR</sup>-ya ku-iš URU-aš ták-šu-li ú-iz-zi šu-me-ša-aš-ši KUR<sup>URU</sup>ḫa-at-ti pé-ra-a[n i-da-a-lu le-e me-m]a-at-te-ni
- 62) [nu-kán IGI<sup>UR.A</sup>.ŠU ḪUR.SAG-i le-e na-iš-te-ni A-NA KUR.KUR<sup>UR.A</sup>-ya pé-ra-an KUR<sup>URU</sup>ḫa-at-ti \*me-mi\*-ya-ni-it le[e te]ep-nu-uš-ki-te-ni
- 63) [nam-ma]-at le-e me-mi-iš-ki-te-ni ma-a-an a-pé-e-ez-zi-ya ku-iš A-NA KUR-KU-NU \*ma\*-an-ni-in-\*ku\*-w[a-...]x e-ep-zi
- 64) [.....] ŠA<sup>UTU</sup> ÉRIN<sup>MES</sup> ANŠE.KUR.RA<sup>UR.A</sup> na-a-ú-i a-ri šu-me-e-ša a-pu-u-un LÚ<sup>KUR</sup>\* ḫu-u-da-a-ak [za-aḫ-ḫi-ya-ad-d]u-ma
- 65) [na-an ḫu-u-da-a]-ak e-eš-ḫar-nu-ut-tén ma-a-aḫ-ḫa-an-ma-aš-ša-an ŠA<sup>UTU</sup> ÉRIN<sup>MES</sup> ANŠE.KUR.RA<sup>UR.A</sup> a-ri [nu-uš-ši wa]a-ar-ri-ya
- 66) [lam-mar(?).....KUR] <sup>URU</sup>ḫa-at-ti šu-me-e-eš-pát pé-ra-an ḫu-ya-at-tal-le-eš e[eš-té]n nu a-pu-u-un LÚ<sup>KUR</sup> šu-me-e-eš-pát[ ḫu-u-da-a-ak z]a-aḫ-ḫi-ya-ad-du-ma
- 67) [.....] <sup>UTU</sup>ḫal-zi-iḫ-ḫi nu LÚ<sup>SIG</sup> a-ap-pa le-e ku-iš-k[i pa-iz-zi] nu ma-a-[an] ..... LÚ<sup>MES</sup>EL-LU-TIM
- 68) [.....] ARAD<sup>LIM</sup> ma LÚ<sup>KUR</sup>ku-uš-ša-ni-ya-tal-la-aš-ša le-[e .....]

## § 20

- 55ա) Ճանապարհ գնալիս չառնանգ[ես] մարդու կնոջը, մարդու դատերը, [չ]վնասես նրան,
- 55) [.....] այդպես անեք, ճանապարհին տղամարդ, կին, պատանի, դեռահաս աղջիկ, տղամարդ ծառա, կին ծառա, կով, ոչխար, ձի, ցուրի, ավանակ, արծաթ, ոսկի,
- 56) [երկաթ? .... բրո]նզ և պղինձ ոչ ոք թող չգողանա: Իս[կ] դասալիքը և [փախս]տականը, ով
- 57) [կզ]ա, լինի նա ազատ մարդ, տղամարդ ծառա, թե կին ծառա, նրան բռնեք և Արևիս մոտ ուղարկեք: Թշնամուն
- 58) [.....] որևէ քաղաք, երկիր նրան չվաճառեք, Եվ նրա աչքը [դեպի լեռներ]ը չշրջեք:
- 59) Իսկ [եթե] որևէ մեկից չար խոսք լսես, լինի նա պալատական, [.....], թե թշնամի,
- 60) [.....թ]շնամական խոսք, նրան բռնեք և Արևիս մոտ ուղարկեք:

---

## § 21

- 61) Եթե թշնամական երկիրը խաղաղությամբ կզա, դուք նրան խաթթիի մասին չար բան չ[աս]եք:
- 62) Եվ նրա աչքը չշրջեք դեպի լեռները, խաթթիի երկիրը (ուրիշ) երկրների առջև խոսքով չ[նվա]ստացնեք:
- 63) [Շետո] այդ մասին չխոսեք, ինչ-որ ստորին մարդ եթե ձեր երկրին մոտ [.....]x բռնի:
- 64) [Եթե] Արևիս զորքը և մարտակառքերը դեռ տեղ չեն հասել, դուք այդ թշնամուն անմիջապես [կպատերազմ]եք:
- 65) [Նրան անմիջապ]ես արյունոտեք, իսկ երբ Արևիս զորքը և մարտակառքերը կզան, [նրան]ց օգնության
- 66) [անմիջապես? կզաք]: խաթթիի համար դուք առաջապահներ պետք է [լինե]ք, և այդ թշնամու դեմ պետք է [անմիջապես պ]ատերազմեք:
- 67) [.....]: Եթե Արևս կանչի, լինի նա ազնվական, ոչ մեկ[ը չզնա] հետ, ոչ էլ [..... ա]զատներ,
- 68) [.....] ծառան կամ վարձկանը թող չ[.....]
-

§ 22

- 69) [.....]x[.....]x LÚ<sup>URU</sup>X[.....]  
 a]n-na da-a-ra-ú-en
- 70) [.....] na-at pa-ab-ši
- 71) [.....]ŠA KUR<sup>URU</sup>ġa-at-ti
- 72) [.....]le]-e e-ep-ši
- 73) [.....]pé]-ra-an ar-ġa
- 74) [.....]EGIR?]-pa 1<sup>EN</sup> 1<sup>EN</sup>
- 75) [.....]UTU]Š GIM-an kar-ši
- 76) [.....]-i
- 

- 77) [.....] na-at iš-t[a-ma-aš- .....]Pit-te-ya-ri-[ga  
 ku-i]t-ma-an
- 78) [.....]x ud-da-a-ar Ú-U[L .....]t]u-uz-  
 zi-iš x[.....]x-zi
- 79) [.....]x-an ku-it nu-wa-[.....]
- 

80) [DU]B.1.KAM ŠA KUR<sup>URU</sup>Pa-ab-ġu-w[a li-i]n-ki-a-aš

**§ 22**

- 69) [.....] X քաղաքի մարդը [.....] x  
[.....]
- 70) [.....] և այն կպաշտպանես:
- 71) [.....] Խաթթիի
- 72) [.....] չլրոնես (կամ չպահես - Հեղ.)
- 73) [.....]
- 74) [.....] մեկը մյուսի ետևից
- 75) [.....] Արևիս երբ հավատարիմ
- 76) [.....]
- 

**§ 23**

- 77) [.....] Եվ այդ մասին լս[ես/եք?.....]  
Պիտոտիյարիզա [.. մին]չև
- 78) [.....] խոսքը չ[.....] զորքը [.....]
- 79) [.....] ինչը և [.....]
- 

80) Պախխուլայի [պայմանագրի] առաջին [աղյուսակը]:

ԴԿ

1-5: Առաջին հինգ տողերում, որոնցից հետո առկա է տողանջատիչ, դատելով ներկայացված են այն անձինք, ովքեր խեթական արքայի հանձնարարությամբ հավաքվել էին մայրաքաղաք Խաթթուսաս՝ կապված Պախխուվայում Միտայի ապստամբության հետ: Այնուհետև, վեցերորդ տողից սկսած ներկայացվում է Միտայի հետ նախկինում կնքված պայմանագիրը:

1: Տեքստի առաջին տողի համար առ այսօր առաջարկված վերականգնումներից է կախված դրանում արտացոլված իրադարձությունների մեկնաբանությունը: Հետևելով Օ. Գրոնսիին, մենք տեքստի առաջին հրատարակության մեջ Ուսապայից հետո առաջարկել էինք վերականգնել անձնանուն<sup>22</sup>: Այդ կարծիքին էր նաև Մ. Ջորջերին (բանավոր հաղորդում, 2001 թ. դեկտեմբեր): Սակայն անձնանվան դետերմինատիվի բացակայությունը, ինչպես նաև ենթատեքստը ստիպում են վերանայել այդ կարծիքը և այստեղ տեսնել սրբա-«ուղարկել, առաքել» բայը<sup>23</sup>: Արդյունքում կարելի է եզրակացնել, որ այստեղ խոսքը Պախխուվայի ապստամբության առաջնորդ Ուսապային և նրա որդի Պիզգանային խեթական արքային հանձնելու մասին է: Դա իր հերթին թույլ կտա ենթադրելու, որ Խաթթուսասի ժողովի պահին այս անձինք դեռևս գտնվում էին ազատության մեջ (ՀԿ 11-12-ում ուղղակի ասվում է Ուսապայի որդուն բռնելու և արքային հանձնելու մասին):

Օ. Գրոնսիի կարծիքով<sup>24</sup>, [...-i]g-ga-n[a ...]-ն նույնն է ինչ ԴԿ 4-ում, նույնպես պակասավոր ենթատեքստում հիշատակվող [... -i]k-ki-na-a-aš-ša DUMU "Ն-ša-a-pa-ն (idem): Սակայն նա կասկածում էր, թե սա և ԴԿ 36-ում հիշատակվող [...-i]g-ga-na-a-aš-ը կարող էին նույնական լինել, քանի որ, ըստ նրա, խեթական արքան հազիվ թե կախյալ կարգավիճակ տրամադրեր իր երգվյալ թշնամի Ուսապայի որդուն: Այդ նկատառումից ելնելով, նա հակված էր ԴԿ 35-ի վնասված մասում վերականգնելու մեկ այլ անձնանուն (տես նաև ստորև, ԴԿ 35-37): Այս տողում և ԴԿ 4-ում հիշատակվող անձնանունները, չնայած որոշ նմանության, ներկայացնում են տարբեր անձանց (տես Գլուխ III. «Վերինեփրատյան երկրների անվանաբանությունը» բաժինը): Բանն այն է, որ վնասվածքից անմիջապես առաջ խոսվում է երկու անձանց մասին և և վնասվածքում պետք է

<sup>22</sup> Kosyan 2006a: 72.

<sup>23</sup> Torri 2005: 387; Reichsmuth 2011: 112.

<sup>24</sup> Gurney 1948: 40.

ենթադրել մեկ լրիվ կորսված անուն և երկրորդի սկիզբը [...-i]k-ki-na-a-aš-ša անվան վերջում գրված է -a հոգնակիակերտ վերջածանցը:

Ինչ վերաբերում է տողասկզբի ընդարձակ վնասվածքին, ապա այստեղ տրամաբանական է ենթադրելու խեթական արքայի անունը և տիտղոսները:

2: Առաջին անձնանվան գրության մեջ երկրորդ նշանի pa ընթերցումը առաջարկել էր դեռևս Հ. Սեյսը<sup>25</sup> որպես \*Lu-pa-ki-u-ut-ta-a[š]: Օ. Գըրնին այդ վատ պահպանված նշանն ընթերցում էր ki և ստանում Lukiutta<sup>26</sup>, ընթերցում, որը սովորաբար ընդունվում էր մասնագետների կողմից: Նշենք, որ վերջին շրջանում Սեյսի ընթերցումը հարցականով ավելի հաճախ է շրջանառվում<sup>27</sup>: Այս և հաջորդ տողում առկա -uttaš անձնանվանակերտ վերջածանցով անունները քննարկվել են սույն աշխատության հեղինակներից մեկի կողմից<sup>28</sup>:

3: 2 LÚ.MEŠ-ից հետո առկա վնասված մասում պիտի ենթադրել նախորդող երկու անձնանունների կրողների սոցիալական կարգավիճակը կամ պաշտոնը նշող ինչ-որ տերմին: Այնուհետև այստեղ պիտի լինի մեկ անձնանուն և (-)hawaššataš-ին նախորդող LÚ դետերմինատիվ: Եթե իրոք (-)hawaššataš-ը անձնանուն չէ, այլ կապված է հաջորդող BEL<sup>29</sup>TUKUL-ի հետ, կազմելով վերջինիս սոցիալական կարգավիճակը բնորոշող ինչ-որ տերմին, ապա հնարավոր է ենթադրել, որ (-)hawaššataš BEL<sup>30</sup>TUKUL-ը կարող էր առնչվել hawaši- կոչվող սրբավայրի հետ<sup>29</sup>: BEL<sup>30</sup>TUKUL ինստիտուտը ներառում է սոցիալական տարբեր կարգավիճակներ՝ վարչական, ռազմական և այլն<sup>30</sup>, այնպես որ Օ. Գըրնիի թարգմանությունը (hawaššataš «արհեստավոր») առայժմ, մինչև ավելի հավաստի հիմնավորման ի հայտ գալուն, մնում է առկախ: Տեքստի այս հատվածում առաջարկվել է վերականգնել [...<sup>31</sup>]hawaššataš, այն է՝ անձնանուն<sup>31</sup>, ինչը նույնպես ընդունելի է:

4: Երկու անձնանուններին հաջորդող u նշանը (եթե այն իրոք u-է, այլ ոչ Glossenkeil), ենթադրաբար, կարելի է համարել 1) U շարկապ<sup>32</sup>

<sup>25</sup> Sayce 1930: 5.

<sup>26</sup> Gurney 1948: 33.

<sup>27</sup> Torri 2005; Kosyan 2006a.

<sup>28</sup> Քոսյան 2006: 248-253; Kosyan 2015:

<sup>29</sup> Imparati 1977: 39ff. hawaši- քառի վկայությունները և ստուգաբանությունը տես Puhvel 1991: 438ff.

<sup>30</sup> Beal 1988.

<sup>31</sup> Torri 2005: 388; Reichsmuth 2011: 112.

<sup>32</sup> Այս u նշանի այդպիսի կիրառության համար միջին ասորեստանյան և միջին բաբելոնյան տեքստերում տես von Soden 1981: 1397:



կամ 2) թեքությամբ գրված անձնանվան դետերմինատիվ: Սույն հրատարակության մեջ մենք պայմանականորեն ընդունում ենք Զ. Տորրիի կողմից այս նշանը որպես Glossenkeil դիտելու առաջարկը, սակայն այս վաղ փուլում դրա կիրառության այլ օրինակներ խեթական տեքստերում կարծես չկան: Հաջորդող բառը Զ. Տորրին դիտում է որպես աքքադերեն *ki-ma* «փոխարեն; այնպես ինչպես, նույնպես և այլն», որն ընդունելի է:

Նույն տողի հաջորդ լակունայում սկսվող թերի պահպանված անձնանվան կրողը ([...-i]k-ki-na-a-aš-ša, -a շաղկապով) «Ուսապայի որդին» է, սակայն առաջին տողում որպես նրա որդի հանդես է գալիս Piggana-ն: Անվանը կցված -a շաղկապը վնասված հատվածում ենթադրում է ևս մեկ անձնանուն:

5: Երկրորդ կորսված հատվածում *halziya-*, *halzai-* բայի վերականգնումը զուգահեռվում է նման ենթատեքստերով; օր.՝ *ka-a-ša ke-e-da-ni ʾud-da-ni-i LI-IM DINGIR<sup>mes</sup> tu-li-ya hal-zi-ú-en* «այս գործի համար 1000 աստվածների խորհրդի կանչեցինք» (KBo V 3 ԴԿ 39-40, «Պայմանագիր Սուպպիլուլիումաս I-ի և Խուկկանայի միջև»):

6: *lingain linkišk-* արտահայտությունը վկայված է ևս երկու տեքստերում՝ KBo IX 72 ԴԿ 2f.; KUB XXX 10 ԴԿ 12<sup>33</sup>; Զ. Տորրին տողակզբի վնասված մասում առաջարկում է վերականգնել *kiššan* «այսպես» բառը, որը նույնպես հնարավոր է:

7-8: 7-րդ տողի երկար լակունայում *kiššan daiš* արտահայտությունը վկայված է բազմաթիվ տեքստերում:

[ոս *ANA ʾUTU<sup>2</sup> kuiš kurur*]-ը վերականգնվում է ըստ հաջորդող հակադրության. «Ինձ՝ Միտայի հետ էլ թշնամի կլինի»: Նույն կերպ էլ 8-րդ տողում [*ANA ʾUTU<sup>2</sup> kuiš takšul*]-ը վերականգնվում է «Ինձ՝ Միտայի հետ էլ խաղաղ կլինի» արտահայտության շնորհիվ:

9: Առաջին վնասված մասում, հաշվի առնելով նախորդ տողի վերջում Միտայի կողմից իր հավատարմությունն ապահովող ինչ-որ գործողության հնարավորությունը, նաև O. Գըրնիի թարգմանությունը, մենք առաջարկել էինք վերականգնել «կովել» բայը<sup>34</sup>, որը պարտադիր չէ: Ինչ վերաբերում է [URU.DIDL<sup>34</sup>] «քաղաքներ» բառի վերականգնմանը, ապա այն պարտադրված է խեթական արքայի և չորս քաղաքների (մեկը՝ հաջորդ տողում) հիշատակությամբ:

10: Վնասված մասում «վերադարձնել» բայի, ինչպես նաև «իմ զորքը» վերականգնումը պարտադրված է ենթատեքստով (խեթերին պատ-

<sup>33</sup> CHD.L-N 1989: 63.

<sup>34</sup> Kosyan 2006a: 81.

կանող բնակավայրերի վերադարձնելը, «Արևի զորքը թող լինի» արտահայտությունը):

**11-12:** Այս երկու տողերում հղվում է Միտայի խոստումը վերադարձնելու խեթերին պատկանող ինչ-որ բան. Այդ մասին է վկայում da-a-ya-aš-kán «գողացված» բառը, որին նախորդում է մեկ այլ դերբայ, որիկց պահպանվել է միայն վերջավորությունը (-i]š-kán): Մենք նախորդ հրատարակության մեջ 12-րդ տողի վնասված մասում պայմանականորեն վերականգնել էինք «եվ այն ամենը ինչ» արտահայտությունը, ելնելով ենթատեքստից:

**13:** [arna] բայի վերականգնումը ըստ ՀԿ 22-ի զուգահեռ ենթատեքստի:

**16:** Հնարավոր է վնասված մասում [mekki waštaškit] «շատ մեղանչեց» վերականգնումը ըստ ԴԿ 36-ի զուգահեռ արտահայտության: ոս kiššan tet «Նա այսպես ասաց» արտահայտությանը պետք է հաջորդի Միտայի ուղիղ խոսքը, այդ իսկ պատճառով հաջորդող վնասված մասերում վերականգնել ենք այսպես. «Ես իմ աչքերով նրան չեմ տեսել»:

**17-18:** Այստեղ նշվում է նախկինում Խաթթիից Պախխուվա փախած անձանց մասին, որոնց, դատելով ենթատեքստից, Միտան խոստանում է վերադարձնել:

**20-21:** Պախխուվայի անվան վերականգնումը ըստ Օ. Գըրնիի<sup>35</sup>:

**24-30:** Այս յոթ տողերի սկզբնական մասերի համար վերջին շրջանում ի հայտ եկավ մի փոքր կցաբեկոր (KBo LVII 238, այն անհայտ էր մեզ 2006 թ. հրատարակության ժամանակ) և որը թույլ տվեց ճշգրտել առաջարկվող վերականգնումները: Մասնավորապես, պարզ դարձավ, որ իրավացի էր Օ. Գըրնին 29-րդ տողում <sup>URU</sup>Halmišna քաղաքի ընթերցման հարցում<sup>36</sup>: Սակայն, ընդհանուր առմամբ, այս կցաբեկորը շատ քիչ հնարավորություններ է ընձեռում տեքստի այս մասում կարևոր տեղեկատվություն ակնկալելու համար:

Երկրորդ կորսված հատվածում գրված, սակայն չպահպանված բայի խոնարհման վերջավորությունը [-zi] ըստ ենթատեքստի, որտեղ խոսվում է Միտայի արարքների մասին:

**25:** dayawar դերբայական ձևը բառացի պետք է թարգմանել որպես «գողացված», սակայն ենթատեքստը թույլ է տալիս այն ուղղակի թարգմանել որպես «ավար/ոսղանավար»:

**35-36:** Միտայի դաշնակից Պիզգանայի անվան վերականգնումը ըստ 1684/ս-ի (տես ծան. ԴԿ 1): 35-րդ տողից տեքստում սկսվում է մեկ

<sup>35</sup> Gurney 1948: 34.

<sup>36</sup> Ibid.

այլ պախխուվացու՝ Պիզգանայի մասին հատվածը, ում խեթական արքան Միտայի դավաճանությունից հետո ուղարկել էր այդ երկիր ապըստամբությունը ճնշելու նպատակով: Այս անձի զինվորական պաշտոնը (UGULA 10) առայժմ հստակ չի մեկնաբանված: Հնարավոր է, սա նույնական է UGULA 10 կամ UGULA 10 ŠA KARAS-ի<sup>37</sup> հետ: Այն, որ պախխուվացին ծառայում էր խեթական զորքում, զբաղեցնելով ոչ ցածր պաշտոն, տարօրինակ չէ, եթե նկատի ունենանք խեթական տեքստերում արևելյան երկրներից զինծառայության վերցվող անձանց մասին հիշատակությունները<sup>38</sup>:

**39-40:** Այս տողերում նկարագրվում է Պիզգանայի գործունեությունը: [<sup>URU</sup>Halmišna]-ից հետո O. Գըրնին վերականգնում էր ԴԿ 9-ում և 22-ում հիշատակվող մյուս երեք քաղաքների անվանումները: Սակայն կորսված հատվածի ենթադրվող չափսը թույլ չի տալիս այդքան նշան ենթադրել (առնվազն 18): Թերևս, մյուս երեք քաղաքները հիշատակվում են միայն հավաքական կերպով (URU.DIDL<sup>39,40</sup>): 38-ում նոր կցաբեկորի շնորհիվ ի հայտ եկած L<sup>mes</sup> URU<sup>40</sup>Ma-x[.....]-ը («Մա-[.....] քաղաքի մարդիկ») հատվածում, հնարավոր է, գրված է Մալոյիա քաղաքի անվանումը. վերջինս հիշատակվում է ինչպես մեր տեքստում (<Կ 37), այնպես էլ KUB XXXI 103 Ձախ եզրի 4-րդ տողում (<sup>URU</sup>Ma-al-ti-[ya ...]): 40-րդ տողի սկզբի վնասված մասում հնարավոր է ավելի վաղ (տող 29) հիշատակվող մյուս երեք քաղաքների վերականգնումը (Պախխուրա, Խուրլա, Ապարխուլա):

40-րդ տողի իմաստը հետևյալն է. Պիզգանան, հղելով ոմն Խասսանային (նրա մասին տես ստորև՝ տեքստի հակառակ կողմը) ցանկանում է ասել, որ եթե կառավար Խասսանան կարող էր պահել հիշյալ քաղաքները, ինչու ինքը չի կարող դա անել: Թերևս, Պիզգանայի՝ խեթական զորքում ունեցած պաշտոնը ավելի բարձր էր քան կառավար Խասսանայինը:

**41:** Տողսկզբի լակունայում O. Գըրնին վերականգնում էր հետևյալ կերպ. «[Այժմ տեսեք, ես գրեցի Պախխուվայի ժողովրդին այսպես. «Միտային և իր կնոջը»]: Մենք մեր նախորդ հրատարակության մեջ առաջարկել էինք ավելացնել նաև Պիզգանայի և Խասսանայի անունները: Այդպիսի տարբերակի օգտին է վկայում «նրանց» էնկլիտիկ դերանվան առկայությունը հանձնման ենթակա անձանց թվարկության մեջ (<sup>ŠUNU</sup>): Հնարավոր է, որ Խասսանան այդ ցուցակում չի եղել, չնայած տես ստորև տեքստի հակառակ կողմում նրա անվան հիշատակությունը:

<sup>37</sup> Այս զինվորական պաշտոնի մասին տես Beal 1992: 409f., 504ff.

<sup>38</sup> Տես ստորև տեքստում՝ Գլուխ II. 4 և 5:

42: Վերականգնումը ըստ Չիկագոյի խեթերենի բառարանի<sup>39</sup>, նաև ՀԿ 8, 15:

43: Մեր նախորդ հրատարակության մեջ տողակզքի վնասված մասում առաջարկել էինք վերականգնել ANŠE.KUR.RA<sup>40</sup>-ŠU «նրա ծիե-րի» բառը, ինչը պայմանավորված էր վնասվածքի խոշոր չափերով, ինչ-պես նաև վերջում «տալ» բայի առկայությամբ: Ամեն դեպքում, վնասված մասում պետք է առկա լիներ հանձնման ենթակա ինչ-որ բան. հնա-րավոր է նաև MI-IM-MI-ŠU-NU-ն «ունեցվածք», ինչը հիշատակվում է նա-խորդ տողում:

45: Վերականգնումը մերն է՝ ըստ ենթատեքստի:

46: Օ. Գըրնին տողակզքի վնասված մասում առաջարկում էր վե-րականգնել «բռնել» բայը, ինչպես նաև հանձնման ենթակա անձանց «կանանց և որդիներին» արտահայտությունը, ինչն ընդունելի է:

47: Վերականգնումը ըստ Օ. Գըրնիի:

62': ՀԿ-ում շրջված ուղղությամբ գրված տողի սկզբում Ս. Ռայխս-մուտը վերականգնում է [ku-it ħa-a]p-pi-ra-an, ինչն ընդունելի է ենթա-տեքստի նպատակահարմարության առումով:

95': =[Š]a-an-ta-LÚ վերականգնումը մերն է և հենվում է ՀԿ 31ա-ում այս անվան առկայության վրա:

## ՀԿ

Տեքստի այս մասից սկսվում է Պախխուվայի ապստամբների նկատմամբ արևելյան երեք քաղաքների կառավարիչների/ցեղապետերի, իսկ ՀԿ 32-ից՝ նաև արևելյան մեծաքանակ ցեղապետերի վրա դրվող պարտավորությունները նշող հատվածը: Հիշյալ անձինք պարտա-վորվում էին ապահովել Պախխուվայի հավատարմությունը, ինչպես նաև խեթական արքային հանձնել ապստամբության առաջնորդներին՝ նրանց ունեցվածքի հետ միասին:

1: Արիիպիցցիի քաղաքի անվանումը է. Ֆորրերը վերականգնել էր որպես Պատտեյարիգա<sup>40</sup>: Ա. Գյոթցեն հավկած էր առաջարկելու Իսմե-րիգա<sup>41</sup>: KUB XL 10 կցաբեկորի շնորհիվ հաստատվում է Պիտտեյարիգա ընթերցումը:

2-3: Երկրորդ տողում պետք է վերականգնել ոչ-պարիտետային պայմանագրերին բնորոշ ŠAPAL NIŠ DINGIR<sup>MEŠUM</sup> արտահայտությունը, իսկ երկրորդ տողի վերջին վնասված մասում, հնարավոր է, kue ušdar

<sup>39</sup> CHD. L-N 1989: 119.

<sup>40</sup> Forrer 1931: 20.

<sup>41</sup> Goetze 1940: 47.

«այդ բանը» (= «երդումը»): Ս. Ռայխսմուտը երկրորդ դեպքում ձեռնպահ է մնացել *kue addar*-ի վերականգնումից, սակայն տողավերջի վնասված հատվածը հազիվ թե տեղավորեր ընդամենը երկու նշան (Միտայի անվան գրության ավարտը - i-ta):

*addar/uttar* «բառ, բան» բառը տողասկզբում ավելի ճիշտ կլինի բարգմանել «բան, գործ և այլն», իսկ երկրորդ դեպքում՝ «մեղադրանք, գործ» իմաստով:

5: Կորսված հատվածում Միտայի անվան և *QADU* բառի համար տես ծան. ԴԿ 41): Նախորդ տողում խոսվում է Միտայի մասին և, քնականաբար, հանձնման ենթակա «կինը», «որդին» և այլն պիտի վերաբերեն նրան (դրանց կցված է փոխադարձ -*ŠU* դերանունը): Վնասված մասում *É* \*Mita վերականգնումը ըստ Օ. Սոյսայի<sup>42</sup>:

6-7: ANŠE.KUR<sub>4</sub>.RA<sup>6A</sup>-ն վերականգնվում է ըստ նման ենթատեքստերում անկա հեռաբանության՝ «կովեր - ոչխարներ - ձիեր»: Օ. Սոյսայը, հենվելով *Bo 8742* աղյուսակի վերագնման վրա, առաջարկում է *E-ŠI-TI-ŠU*-ի փոխարեն ընթերցել *MAR-ŠI-TI-ŠU* «նրա ունեցվածքը»<sup>43</sup>: Նույն տողի վերջում անկա վնասված հատվածում նա տեղադրում է *MI-IM-MI-ŠU-NU* *arnuanzi* «նրանց գույքը վերցրեք», նշելով ԴԿ 41-ի նման արտահայտությունը: Մենք առայժմ ձեռնպահ ենք մնում նախապատվությունը այս տարբերակներից որևէ մեկին տալուց:

8: Վերականգնումը ըստ ԴԿ 42-ի:

9,17: Տողասկզբի կորսված հատվածում ենթադրելի է Պախիսուվայում Ուսապային պատկանող «հինգ մարդկանց» բնորոշող մի բառ: Հազիվ թե խոսքը «որդիների» կամ «դուատրերի» մասին է, քանի որ նրա դուատրը և որդին հիշատակվում են այս տողից առաջ և հետո:

Վերջին վնասված մասում անկա բառի վերականգնումը ըստ ենթատեքստի: Այստեղ, դրանից առաջ և հետո, խոսվում է հանձնման ենթակա անձանց մասին, որը տեքստում գրված է *para piya-* (<Կ 8,11, 15,16):

10: URU.DIDL<sup>6A</sup> վերականգնումը պայմանավորված է վնասվածքից հետո անվանապես հիշատակվող չորս քաղաքների անկայությամբ:

11: DUMU «որդի» բառը՝ ըստ ենթատեքստի (Օ. Գըրնիի մոտ՝ թեականորեն): Օ. Սոյսայը տողավերջի վնասված մասում առաջարկում է URU.Pa-[ab]-hu-wa-az? ar-ha? ...]<sup>44</sup>: Վերջին վնասված մասում *para piya-*ի համար տես վերը՝ ծան. <Կ 9:

<sup>42</sup> Soysal 2014: 146f.

<sup>43</sup> Ibid.

<sup>44</sup> Ibid.

12: O. Սոյսալը na-<sup>2</sup>an<sup>2</sup>-ša-an-ի փոխարեն առաջարկում է na-<sup>2</sup>aš<sup>2</sup>-ša-an, ինչպես նաև տողավերջում՝ a[p-pi-an-zi ?]՝ p[i-a-an-zi.....]-ի փոխարեն (ibid.), նշելով ՀԿ 23-ում առկա արտահայտությունը:

14: Վերականգնումը ըստ հաջորդ տողի հետ հակադրության (UL duggari - duggari):

15: Վերականգնումը ըստ ՀԿ 15-ի և այլ տողերի նման ենթատեքստերի<sup>45</sup>: O. Գըրնին թարգմանում էր այսպես. «...մտան Պախխուսայի ժողովրդի տարածքը». վերջին բառն ավելորդ է:

16: Վերականգնումը ըստ ենթատեքստի:

17: Վերականգնումը ըստ ենթատեքստի: U. Ռայխսմուտը վերականգնում է anda arnuir «թող բռնեն»:

19: Վերականգնումը ըստ հաջորդ տողի համապատասխան արտահայտության՝ mahhan huyadduma «երբ/ինչպես դուք շտապ գալիս եք»:

20: Վերականգնումը պայմանական է՝ ըստ ենթատեքստի: Վնասված մասում մենք նախորդ հրատարակության մեջ առաջարկել էինք i-ya-at-tén. U. Ռայխսմուտն առաջարկում է hu-ya-an-ta-ru, ինչն ընդունելի է:

21-22: Վերականգնումը պայմանական է՝ ըստ ենթատեքստի: Տողավերջի վնասված մասում <sup>10</sup>TErMl «բանազնաց» բառը կարող է և չլինել:

23: Վնասված հատվածի վերջում [a-pa-a-at]-ը ցանկալի է, բայց ոչ պարտադիր:

24: wahnu- «շրջել, թեքել և այլն» բայը այս ենթատեքստում օգտագործված է «կեղծել, փոխել» իմաստով:

26: Վերականգնումը պայմանական է ըստ ենթատեքստի: Վնասված մասում բայ պիտի լինի, քանի որ նոր տողից սկսվում է հաջորդ նախադասությունը:

27: Վերականգնումը պայմանական է՝ ըստ ենթատեքստի:

29: [QA-7<sup>B</sup>A-ŠU]-ն՝ ըստ հաջորդ տողի զուգահեռ արտահայտության: Երկրորդ վնասված հատվածում hūdak-ը ցանկալի է, բայց քիչ հավանական՝ տեղի պակասի պատճառով:

30: Տողավերջի վնասված հատվածի չափսը դժվարացնում է na-an կամ nu վերականգնումը:

31: Այս կարճ տողում հիշատակվող երկու անձինք, դատելով զուտ խեթական անձնանուններից, նաև այն հանգամանքից, որ նրանց կից քաջակայում են տեղանունները, ինչը առկա է հաջորդ տողերում, որտեղ

<sup>45</sup> CHD.M 1983: 208.

ներկայացված են արևելյան ցեղապետերը, կարող էին լինել խեթական պաշտոնյաներ, ում դերը Պախխուվայի ապստամբության հարցում առայժմ պարզ չէ: GAL «մեծ» բառը, որ հիմնականում գրվում է դետերմինատիվով (<sup>46</sup>GAL), կոնկրետ պաշտոն չի նշանակում. այն սովորաբար ուղղակի թարգմանվում է որպես «առաջնորդ, հրամանատար»<sup>46</sup>:

32: Վնասված հատվածում ակնկալելի է մեկ անձնանուն՝ հաջորդ տողում հիշատակվող Խինձուտա քաղաքի ներկայացուցչի անունը:

33: Տողավերջի քաղաքանվան երկրորդ նշանը նման է an-ի (հնարավոր են՝ hal, pal/bal):

34: Վնասված հատվածի սկզբում [-ga-na-aš]՝ ըստ վերականգնումը ԴԿ-ում հիշատակվող \*Piggana-ի հետ նույնացման: Դրան պիտի հաջորդի քաղաքի անունը (ըստ վնասված հատվածի չափսի՝ 2-3 նշան):

35: ke-e LÚ<sup>ME5</sup>-.....] կարելի էր թարգմանել նաև որպես այս մարդիկ, սակայն մեր ենթատեքստում նպատակահարմար է «սրանք» բառը:

36-39: Տեքստի այս հատվածում թվարկվում են վերինեփրատյան այն քաղաքական միավորները, ում խեթական արքան երդման տակ է դնում իրեն հավատարիմ լինելու պահանջով:

36: O, Գըրնին տողասկզբի վնասված հատվածում վերականգնում էր [A-NA], սակայն, ելնելով դրա չափերից, <. Բլենգելն առաջարկել է [nu-uš-ma-aš]<sup>47</sup>:

<sup>KUR</sup>H[ur-ri] վերականգնումը պատկանում է Ֆ. Չոմմերին<sup>48</sup>, որն ընդունվում է մասնագետների կողմից: «Խուրրի երկիրը», եթե վերականգնումը ճիշտ է, հազիվ թե Միտտանին լինի (տես Գլուխ III):

37: [Ú LU<sup>ME5</sup>] վերականգնումը ըստ <. Բլենգելի<sup>49</sup>, վերջում [QA-TAM-MA?]՝ ըստ <. Բոսսերտի<sup>50</sup>:

38: Այս և հաջորդ տողում առկա է ոչ-պարիտետային պայմանագրերին բնորոշ՝ արքայի անձին, նրա ընտանիքին և սերունդներին հավատարիմ մնալու մասին տրաֆարետային արտահայտությունը: Բոլոր տեքստերում առկա է բաժ՝, բաժաժ՝ բայը: Հաճախ բային նախորդում է *AŠŠUM BELUTIM* (= EN<sup>70A</sup>) «հանուն իշխանության» («for the sake of lordship») արտահայտությունը<sup>51</sup>, սակայն վնասված հատվածն այդքան մեծ չէ:

<sup>46</sup> Tischler 2001: 224.

<sup>47</sup> Klengel 1965: 226.

<sup>48</sup> Sommer und Falkenstein 1938: 47; Gurney 1948: 37,43.

<sup>49</sup> Klengel 1965: 226.

<sup>50</sup> Bossert 1946: 18; Klengel 1965: 226.

<sup>51</sup> Տես, օրինակ՝ Friedrich 1930: 56 («Պայմանագիր Կուպանտա-Կուրունտայի հետ»):

39: O. Գըրնին տողակզքի ոչ մեծ վնասված հատվածում առաջարկել էր անվագն ութ նշան՝ [ոս .....? \*UTU<sup>52</sup> MUNUS.LUGAL DUMU<sup>53</sup>] LUGAL; վերականգնումը ցանկալի է, բայց քիչ հավանական՝ տեղի սղության պատճառով:

40: Վերականգնումը ըստ O. Գըրնիի:

41: Տողակզքի վնասված հատվածի վերականգնումը հիմնվում է որպես նախորդ տողում սկսված տրաֆարետային հակադրության երկրորդ մաս դիտելու մտայնության վրա:

O. Գըրնին տողակզքի վնասված խոշոր հատվածում դրել է թշնամու բանագնացի մասին տրաֆարետային արտահայտությունը, որը վկայված է ՀԿ 21-ում: Սակայն նախորդ տողում անկա վերջին բառը՝ *šume-e-[ša-aš.....]* ենթադրում է նույն բայով զործողություն կախյալ կառավարիչների կողմից, ինչպիսին նախորդ տողում է.

nan \*UTU<sup>52</sup> GIM-an] karši zahbiyahha šume[šaš .....]

Պարզ է, որ այստեղ թշնամու բանագնացի մասին խոսք չկա: Այս վերականգնումը հենվում է ՀԿ 41-ի վնասված հատվածին հաջորդող *KA-KUNU taršikit[teni]-*ն «ծեր դարպասին (մոտ) չթողնեք» արտահայտությունը:

48: *ŠA* <sup>10</sup>*ĶŪR* an-tu-ub-š[a] բառացի նշանակում է «թշնամու մարդ», սակայն ավելի նպատակահարմար է թարգմանել «թշնամու զինվոր»:

53-54: Վերականգնումը՝ ըստ Զիկագոյի խեթերեն բառարանի<sup>52</sup>: *mališku-* «թույլ» և *taššu-/daššu-* «ուժեղ» բառերի թարգմանությունը այնպես ինչպես որ դրանք անկա են բառարանում, հայերեն թարգմանության մեջ կարելի է վերահիմաստավորել որպես «փոքր» և «մեծ»:

56-57: Վերականգնումը ըստ՝ Զիկագոյի խեթերեն բառարանի<sup>53</sup>: <sup>10</sup>*ĶŪR*-ma-an-za [... .. URU]-ya *KUR*-ya արտահայտությունը պետք է այսպես մեկնաբանել. երկիր եկած դասայիցին կամ փախստականին արգելվում էր վաճառել թշնամական կամ որևէ այլ երկիր: *IGI<sup>54</sup>-ŠU*-ya [*NA ĴUR.SAG-i* ]je-e na-iš-ta-ni արտահայտությունը պետք է այսպես մեկնաբանել. չի կարելի թույլ տալ երկիր եկած փախստականին հեռանալ լեռներ, այն է՝ ազատվել նրա նախկին տիրոջ նկատմամբ պարտավորություններից:

61-63: Վերականգնումը ըստ՝ Զիկագոյի խեթերեն բառարանի<sup>54</sup>: 63-րդ տողի վերջին վնասված մասում *KBo L 216* կցաբեկորը ցույց է տալիս, որ մեր նախկին *p[ā-a-an-za* nu ku-u-ru-u]r վերականգնումը սխալ էր:

<sup>52</sup> CHD.M 1983: 130.

<sup>53</sup> Ibid.

<sup>54</sup> Ibid.



տրոս՝ քայլ թարգմանվում է որպես «փոքրացնել»․ այստեղ նպատակահարմար է «նվաստացնել» թարգմանությունը:

**64-65:** Վերականգնված է ըստ ՀԿ 29-ի և Օ. Գըրնիի թարգմանության:

**66:** Մենք ծնունդի ենք մնացել տառադարձման վերականգնումից, սակայն իմաստը միանգամայն պարզ է. խեթական արքան անմիջապես ռազմական աջակցություն է ակնկալում իրենից կախյալ երկրներից:

**69:** 68-րդ տողից հետո առկա երկու անջատիչ գծերի առկայությունը վկայում է այն մասին, որ տեքստի հաջորդ մասում արքայի խոսքն արդեն ուղղված է այլ անձանց (կամ ՀԿ 32-35-ում հիշատակվողներից ոմանք): Տողի միջին մասում և վերջում պահպանված [...]x LÚ<sup>URU</sup>x[...] և [........]x-na նշանները դրանց անունների և քաղաքների հետքերն են: Տողավերջի քայածնը չենք թարգմանել, քանի որ այդ քայի նշանակությունը առայժմ պարզ չէ: Բայն օգտագործված է սահմանական եղանակի անցյալ կատարյալի հոգնակի առաջին դեմքով, այսինքն խոսքը խեթական արքայի ինչ-որ գործողության մասին է:

**73:** Քանի որ քայլ կորսված է, այս նախդիրների թարգմանությունը անիմաստ է:

**82:** Վերջին բառի ([li-i]n-ki-a-aš) վերականգնումը կամայական է. վնասվածքից հետո պահպանված նշանները այնքան էլ նման չեն մեր վերականգնմանը, սակայն ենթատեքստը այդպիսի լուծում է ակնկալում:

### ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ (KUB XXXI 103)

Այս տեքստը<sup>55</sup>, որն իրենից ներկայացնում է խեթական արքայի և մի շարք վերինեփրատյան երկրների հետ կնքված պայմանագիր, անմիջականորեն առնչվում է KUB XXIII 72+-ին: Հատկանշական է, որ այն ունի հողի նվիրատվության ակտերին համապատասխան կառուցվածք<sup>56</sup>: Սա կարող է ակնարկել հօգուտ այն ենթադրության, որ, հնարավոր է, KUB XXIII 72+-ի կնքմանը նախորդել է վերինեփրատյան տոհմային ազնվականության որոշ ներկայացուցիչներին հողատարածքների հատ-

<sup>55</sup> CTH 212.1 (ինվեստ. համար՝ 202/a). գիտական տառադարձմամբ և թարգմանաբար հրատ.՝ Torri 2005: 391ff. (հատվածական); Devecchi 2015: 95f.

<sup>56</sup> Արյուսակի վրա պահպանվել են արքայական կնիքի հետքեր, ինչը վկայում է այն մասին, որ KUB XXXI 103-ը հողի նվիրատվության ակտ է ներկայացնում: Այդպիսի ակտերի մասին տես Easton 1981; նաև Wilhelm 1988:

կացումը (ինարավոր է, խեթական արքան ուղղակի ճանաչել է նրանց ժառանգական իրավունքները)՝ որպես ապագայում այդ անձանց հավատարմության երաշխիք:

Այստեղ հիշատակվում են KUB XXIII 72+-ում վկայված մի շարք տեղանուններ՝ Պախխուական, Խուրրի երկրները, Մաղիա քաղաքը, նաև Իսուվայում և հարակից շրջաններում գործող հակախեթական ուժերից մեկի առաջնորդը (ոմն Խասասանա): Վերջինիս ներկայությունը այս պայմանագրում կարևոր է այն առումով, որ KUB XXIII 72+-ում նա հանդես է գալիս որպես Պախխուվայի ապստամբության ժամանակ հակախեթական ուժերի առաջնորդներից մեկը, ում ունեցվածքը և ընտանիքի անդամներին Առնուվանդաս I-ը պահանջում էր հանձնել իրեն (տես վերը՝ KUB XXIII 73+ Հ4 7, նաև Գլուխ 3. «Պախխուվայի ապստամբությունը»): Անհրաժեշտ է նշել, որ ի դեմս Խասասանայի և միևնույն ենթատեքստում հիշատակվող Կալիմունայի՝ Պախխուվայի խեթական կառավարիչներ լինելու ենթադրությունը<sup>57</sup> քիչ հավանական է:

Դատելով այս զգալիորեն տուժած տեքստի պահպանված հատվածներից, խեթական արքան վերինեփրատյան երկրներից անկնկալում էր հավատարմություն և որոշակի պարտավորություններ (աջակցություն արքային պատերազմի ժամանակ, այլ պետությունից եկած բանագնացի ձերբակալություն և այլն):

Կարծիք է հայտնվել այն մասին, որ հենց այս տեքստն է իրենից ներկայացնում խեթական արքայի և վերինեփրատյան տարբեր «երկրների» հետ կնքված պայմանագիրը կամ պայմանագրերից մեկը, ի տարբերություն KUB XXIII 72+-ի, որտեղ հղվում է նախկինում կազմված պայմանագիրը<sup>58</sup>:

Պահպանվել է աղյուսակի ձախ կողմը, ստորին եզրը և ձախ եզրը. աջ կողմը (գրեթե կեսը) ամբողջությամբ կորսված է:

<sup>57</sup> Torri 2005: 391. Ավելի տրամաբանական է թվում Յ. Դելեքքի ենթադրությունը այն մասին, որ սրանք կարող էին լինել տեղական ազնվականության ներկայացուցիչներ, ովքեր տուժել էին ապստամբության ընթացքում (Devecchi 2017: 284 n.7): Այս խնդրի վերաբերյալ ավելի հանգամանորեն տես Գլուխ 3 («Պախխուվայի ապստամբությունը» բաժինը):

<sup>58</sup> Torri 2005: 393 Anm.28; Devecchi 2017: 290ff.

ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄ

ԴԿ

- 1) [.....
  - 2) [.....]x-իս
- 
- 3) [.....-n]a-ձա
  - 4) [.....n]a-aձ <sup>Ս</sup>UL
  - 5) x x x EGIR?-pa <sup>Ս</sup>iz-zi
  - 6) a-ap-pa-ya-aձ [.....
- 
- 7) an-da-ma ku-e-da-ni DUMU-<sup>Տ</sup>U a-aձ-ձ[u-li?.....
  - 8) <sup>Ս</sup>A-NA \*ի-a-aձ-ձa-a-na nam-ma k[u-....
  - 9) nu-uձ-ma-aձ ka-a DAM<sup>ՄԵՏ</sup>-<sup>Տ</sup>U-NU DUMU<sup>ՄԵՏ</sup>-<sup>Տ</sup>U-NU GUD<sup>ԻՐԱ</sup>-<sup>Տ</sup>U-NU  
UDU<sup>ԻՐԱ</sup>-<sup>Տ</sup>U-NU an-da/a-ap-pa]
  - 10) <sup>Ս</sup>i-ի-կան-տա-րս A-NA MA-իAR <sup>Ս</sup>UTU<sup>Տ</sup> .....
- 
- 11) nam-ma ձu-ma-a-aձ pi-ra-an i-d[a-a-lu-un me-mi-ya-an me-ma-i]
  - 12) ku-ի-ձa-ma-aձ me-e-ma-i-ma [.....
  - 13) te-ek-ku-uձ-nu-ut-tén ki-nu-un [.....
  - 14) ku-in ÉRIN<sup>ՄԵՏ</sup>-it-ma ta-ma-a-aձ [.....
  - 15) pi-ra-an i-da-a-lu-un me-mi-[ya-an me-ma-i ..?]
  - 16) da-at-ra-ab-ի ձu-me-ձa-an x[.....

Ստորին եզր

- 17) [k]u-ի-ձa A-NA <sup>Ս</sup>UTU<sup>Տ</sup> ku-u-ru-ur [e-es-zi(?) ...]
- 18) [<sup>ԿՈՍՈՍՈՍ</sup>]իur-ri-ձa-ma-aձ ku-u-ru-ur [a-ձa-an-du/e-eձ-du?]
- 19) [n]a-an za-ab-ի-ya-at-tén A-NA [<sup>Ս</sup>U<sup>Ս</sup>K<sup>Ս</sup>UR-YA-ma .....
- 20) [Z]i-it իa-lu-ki le-e [ku-is-ki pi-e-ez-zi .....
- 21) [IGI?]<sup>ԻՐԱ</sup>-it le-e ku-e-da-[ni-ik-ki pi-ya-u-e-ni(?)]

ՀԿ

- 22) \*<sup>Տ</sup>U? \*<sup>ԻՐԱ</sup>-it le-e iձ-ka"-[.....
- 
- 23) ma-a-an a-<sup>Ս</sup>ri-aձ iձ-իa-a-[aձ .....
  - 24) a-pa-a-ձa Zi-it le-e [.....
  - 25) na-aձ-kán EGIR-an ar-իa <sup>Ս</sup>d[a-.....
  - 26) nu-uձ-ձi ma-a-an DI-<sup>Տ</sup>U x[.....
  - 27) an-da-ma ku-ի <sup>Ս</sup>U-tar i-e-ez-[zi .....
  - 28) <sup>Ս</sup>U<sup>Ս</sup>ER-MI-<sup>Տ</sup>U e-ep-zi n[a- .....

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԿ

- 3') [.....] նա [.....]  
4') [.....] նա չ[.....]  
5') [.....] նա թող? զնա [.....]  
6') և նա [.....]
- 

- 7') Եվ հետո, նրան ում համար իր որդին սիրելի է .....  
8') և խասսանասին կրկին [.....]  
9') նրանց իրենց կանանց, որդիներին, [կովերին, ոչխարներին? Վերա-  
դարձրե՞ք?]  
10') նրանք պետք է գան Արևիս առջև [.....]
- 

- 11') Այնուհետև, [ով] ձեր ներկայությամբ չ[ար խոսք ասի .....]  
12') բայց ով խոսի ձեզ հետ [.....]  
13') դուք պետք է տարբերեք: Այժմ [.....]  
14') մեկին, ում [դուք] զորքով [կճնշեք? Եթե ձեր]  
15') ներկայությամբ [նա] չար խոսք [ասի] և  
16') դրդի [.....] դուք նրան [.....]
- 

### Ստորին եզր

- 17') Ով Արևիս թշնամի է, [ձեզ էլ թող թշնամի լինի]  
18') խուրրի երկիրը ձեզ թշնամի [թող լինի] .....  
19') Նրա դեմ կովեք: [Թշնամու մոտ .....]  
20') իր կամքով ոչ [մեկը] դեսպան [թող չուղարկի] .....  
21') [աչքերով?] ոչ մեկի վրա [.....]
- 

ՀԿ

- 22') ձեռքերով չ[.....]
- 

- 23') Եթե սահմանը հսկող կառավարիչ[ը] .....  
24') եվ նա չպետք է իր հայեցողությամբ [.....]  
25') Հետո նա դուրս կբ[երի? .....]  
26') Եթե նրա համար իր պալատի [.....]  
27') Բայց հետո ով առնական գործ կատար[ի] .....  
28') նրա բանագնացին բռնի [.....]

- 29) pi-ya-na-a-mi na-an KUR <sup>URU</sup> .....  
 30) e-ep-zi-ma nam-ma-an ar-[ba .....  
 31) uš-kán-du na-aš-ma-aš-še-eš-t[a .....  
 32) u-i-e-ez-zi le-e wa-[.....

- 33) ma-a-an <sup>UTU</sup> "xxxx" [.....  
 34) "xxxx" [.....

### Զախ եզր

- 1) na-aš-ta ma-a-an LÚ<sup>MES URU</sup> Pa-a[h-tu-wa NI-IŠ DINGIR<sup>LM</sup>] .....  
 2) [ša]r-ra-an-zi nu IT-TI <sup>UTU</sup> .....]  
 3) nu <sup>UTU</sup> IŠ-TU NI-IŠ DINGIR<sup>LM</sup> pâr-[ku-iš .....]  
 4) Ú A-NA LÚ<sup>MES URU</sup> Ma-al-ti-[ya .....]  
 5) QA-DU ÉRIN<sup>MES</sup> ŠU-NU Ú [.....]  
 6) pa-an-kur-še-[et .....]

29) ես նրան կպարզեցատրեմ և նրան երկիր(ը) [.....

30) եթե նա բռնի և հետո նրան ազատ արձակի .....

31) նրան կտեսնեն կամ նրան [.....

32) նա ուղարկի, չ[.....

---

33) եթե Արևս [.....

34) .....

### **Ձախ եզր**

1) եթե Պա[խխուվայի մարդիկ աստվածային երդումը]

2) [դ]րժեն և Արևիս դեմ [.....

3) Արևս [ազատ [կ]ինի աստվածային երդումից [.....

4) և Մաղի[յայի] մարդկանց համար [.....

5) նրանց զորքի հետ միասին և [.....

6) նրանց ազգակիցները [.....

9': Վնասված մասում «կովեր, ոչխարներ» վերականգնումը կամայական է և հենվում է KUB XXIII 72+-ում առկա հատվածի հետ համադրման վրա (<Կ 6-7, տես վերը):

11': Վերականգնումը մերն է:

15': Վերականգնումները ըստ տեքստի առայժմ ամենավերջին հրատարակության<sup>59</sup>:

17': Վերականգնումը ըստ բազմաթիվ նման տեքստերի զուգահեռների<sup>60</sup>:

17'-18': Վերականգնումը ըստ նմանօրինակ զուգահեռների: Տողի սկզբում KUR կամ URU դետերմինատիվի վերականգնումը որոշ կասկածների տեղիք է տալիս: Այստեղ հնարավոր է նաև LÚ «մարդ» դետերմինատիվը, եթե նկատի առնենք Թուդխալիյաս II-ի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի միջև կնքված պայմանագրում «Միտտանիի արքա»-ի փոխարեն LÚ Խur-ri «խուրրի մարդ (խուրրի)» բառակապակցության կիրառությունը<sup>61</sup>: < Քլենգելը, թերևս, նույն մտայնությամբ թեակա-նորեն առաջարկում էր վերականգնել LÚ Խur-ri<sup>62</sup>:

19': Ե.Դեվեքքիի մոտ վնասված մասում առկա է KUR «երկիր» դետերմինատիվը:

21': Վերականգնում է մերն է:

**Ձախ եզր 1:** pankur բառի իմաստային երանգների քննարկումը տես <.Գ. Գյուտերբոկի հետազոտությունը, որտեղ հեղինակը փորձում էր տարբերակել դրա նախնական և խորհրդանշական իմաստները: Նրա կարծիքով, այս բառի հիմքում ընկած է «կաթը», որտեղից էլ սույն տեքստի pank/gur բառը պետք է նշանակեր «կաթնեղբայր»<sup>63</sup>:

<sup>59</sup> Devecchi 2017: 291.

<sup>60</sup> Stü Puhvel 1984: 487f.

<sup>61</sup> Stü Գլուխ II. KBo I 1 ԴԿ 11,12,20,25,28,30-32:

<sup>62</sup> Klengel 1978: 102 Anm.50.

<sup>63</sup> Güterbock 1964: 102f.

**ԳԼՈՒԽ II**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆԶՎՈՂ ՏԵՔՍԵՐ**

**ԹՈՒԴԻՍԱԼԻՅԱՍ II-Ի ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Թուդիսալիյաս II-ի «Տարեգրությունները» չեն պահպանվել ամբողջական տեսքով: Դրանք ներկայումս մեզ են հասել մի շարք տարբեր չափերի թեկորների տեսքով<sup>64</sup>, որոնք այսպիսի կազմ ունեն.

1. KUB XXIII 27 (= ԴԿ I-21)

2.Ա. KUB XXIII 11 (= ԴԿ II և III, նաև աղյուսակի ստորին եզրակողմը)

Բ. KUB XXIII 12 (= ԴԿ II 10-28, ՀԿ III 1-14)

3. KBo XII 35<sup>65</sup>

4. KUB XXIII 18<sup>66</sup> (կոլոֆոնի շարունակությունը - CTH 211,7/123,9)

Տեքստի մասն են կազմում նաև հետևյալ կցարեկորները՝

KUB XXIII 16 (211,6/123,8), KUB XXIII 63 (211,10/135,3)<sup>67</sup>, KUB XXIII 36 + XXXI 35 (61 III 4/123,11<sup>68</sup>), KUB XXVI 83 (211,14/123,17)<sup>69</sup>.

Թուդիսալիյաս II-ի «Տարեգրություններում» ներկայացված են արքայի կառավարման առաջին վեց տարիների իրադարձությունները, որտեղ հստակ առանձնացված են երեք տարբեր ուղղություններով իրականացված արշավանքները՝

Արևմտյան Փոքր Ասիա - ԴԿ I և II, ՀԿ III 1-10:

Կասկերի դեմ արշավանքը Փոքր Ասիայի հյուսիսում - ՀԿ III 10-27:

Վերին Եփրատի ավազանում Իսուվայի և այլ երկրների նվաճումը - ՀԿ III 10-28-35<sup>70</sup>:

Հարկ է նշել, որ այս մեզ համար մեր ուսումնասիրության նպատակների տեսանկյունից մեծ կարևորություն ներկայացվող վերջին մասը

<sup>64</sup> = CTH 142: Բեկորների միակցումը և առաջին զիտական հրատարակությունը իրականացրել է Օ. Կարրուբան՝ Carruba 1977: 156ff.

<sup>65</sup> Carruba 1977: 164 (տառադարձում).

<sup>66</sup> KUB XXIII 18 (ՀԿ I և IV.) = Carruba 1977: 164 (տառադարձում).

<sup>67</sup> Carruba 1977: 164 (տառադարձում).

<sup>68</sup> Սրանք նույնականացման համար տես Meriggi 1962: 80ff.; Houwink 1970: 80:

<sup>69</sup> Carruba 1977: 165 (տառադարձում).

<sup>70</sup> Մինևույն իրադարձությանն է նվիրված Թուդիսալիյասի հաջորդ Անտուվանդաս I-ի «Տարեգրությունների» մի հատվածը (տես ստորև հաջորդ բաժնում):



պահպանվել է խիստ վնասված, հատվածական տեսքով:

Տարեգրությունների մասը կազմող բնկորներից KUB XXIII 16-ը ներկայացնում է ներքաղաքական իրադարձությունները, մասնավորապես Թուղխալիյասի իշխանության գալու հանգամանքները՝ կապված նախորդ արքա Մովսատայլիս I-ի սպանությունից հետո նրան հավատարիմ անձանց դեմ մղվող քաղաքացիական պատերազմի հետ<sup>71</sup>:

---

<sup>71</sup> Այդ մասին հանգամանորեն տես Գյուլս III:

## ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄ

## ՀԿ III

- 27) [EGIR-pa-an-n]a-mu [.....]x KUR-e-an-za ku-u-ru-ur IS-BAT  
 28) [nu LUGAL KUR<sup>URU</sup>-š-u-wa ... ku-u-ru-ur] IS-BAT nu-uš-ši LUGAL<sup>URU</sup> Hur-ri  
 29) [an-da wa-ar-re-eš-še-eš-ta? .... ú-ga-aš "Tu-ut-ḫa-li-ya-aš LUGAL.GAL  
 I-NA KUR<sup>URU</sup>-š]u-wa la-aḫ-ḫi-ya-u-wa-an-zi pa-a-u-un  
 30) [.....] KUR<sup>URU</sup>-š-u-wa za-aḫ-ḫi-ya-aḫ-ḫa-at  
 31) [.....] ú-it nu-mu KUR-e EGIR-an  
 32) [.....] ta-la-aḫ-ḫu-un na-aš-ta GIM-an  
 33) [.....] ú-ga-aš-ta šal-li KUR-e KUR<sup>URU</sup>-š-u-wa  
 34) [.....-]x É<sup>TM</sup> ku-e-nu-un
- 
- 35) [.....] x [.....]

Այստեղ աղյուսակի մակերեսը ամբողջությամբ ընդված է:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՀԿ III

- 27) [Հետո] իմ դեմ [.....] ընակչությունը թշնամություն սկսեց,  
 28) [Եվ Իսուվայի արքան թշնամություն?] սկսեց, և նրան Իսուրիի արքան  
 29) [զգևության եկավ: Ես Թուդխայիասը, Մեծ արքան, Իսուվա պատե-  
 րազմի գնացի:  
 30) [.....] Իսուվային ես հաղթեցի:  
 31) [.....] ես եկա: Եվ ինձ երկիրը հետո  
 32) [.....] ես թողեցի: Եվ երբ  
 33) [.....] եվ ես մեծ երկիր Իսուվան  
 34) [.....] տունը ես ավերեց

\* Հաշվի առնելով քեկորի հատվածական վիճակը, կրկնօրինակների և կցաքեկորների բացակայությունը, աղյուսակի վնասված հատվածներում որևէ հիմնավոր վերականգնում հնարավոր չէ: Այդ պատճառով մենք բավարարվել ենք միայն տեքստի հրատարակիչ Օ. Կարրուբայի՝ ենթադրական մակարդակով վերականգնումները ներկայացնելով: Օրինակ, 29-րդ տողում an-da wa-ar-re-eš-še-eš-ta? «օգնության եկավ» արտահայտությունը, որն ընդամենը քիսում է ենթատեքստից: Սակայն հաշվի առնելով նույն վնասված մասում նրա կողմից առաջարկված ընդարձակ հատվածի վերականգնումը (Թուդխալիյասի անունը և տիտղոսը), դժվար կլինի ընդունել աղյուսակի սկզբում այդքան մեծ քանակով նշաններ ենթադրել:

**28:** Տողի սկզբում առկա վնասված մասում LUGAL KUR<sup>URU</sup>-šu-wa («Իսուվաի արքա») վերականգնումը տեղին չէ: Խեթական աղբյուրներում Իսուվայում միասնական արքայական իշխանության մասին որևէ ակնարկ չկա ընդհուպ մինչև մ.թ.ա. XIII դարի կեսերը, այն է՝ հաթթուսիլիս III-ի ժամանակները: Իսուվայում Թուդխալիյաս II-ի օրոք նույնիսկ դրանից շատ ժամանակ անց հիշատակվում են նոմային տիպի մեծաքանակ քաղաքական միավորներ (տես վերը, Գլուխ I, KUB XXIII+):

**34:** Այս տողում վնասված մասին հաջորդող É<sup>TM</sup> «տուն» բառի սեռ. հոլովածնի առկայությունը դժվար է մեկնաբանել: Պարզ չէ, թե ինչի մասին է խոսքը:

**30-34:** Որոշակի բարդություն կա նաև այս չորս տողերի հարցում: Արդյոք այստեղ ներկայացվում է դեպի Իսուվա ուղղված մեկ արշավանք, թե երկուսը: 33-րդ տողում առկա šalli KUR-e KUR<sup>URU</sup>-šu-wa «մեծ երկիր Իսուվա» արտահայտությունը միակն է խեթական տեքստերից, որտեղ Իսուվան հորջորջվում է այդպես: Թե ինչով էր դա պայմանավորված, դժվար է ասել: Հնարավոր է, խեթերի տեսանկյունից Իսուվա տերմինը մի կոնկրետ քաղաքական միավորի անվանում չէր, այլ ընդամենը վերնեփրատյան տարածաշրջանի ընդհանրական անվանումը: Այսպիսի ենթադրության օգտին է վկայում KUB XXIII 72+-ում այս նույն արածաշրջանում մեծաքանակ մանր քաղաքական կազմավորումների առկայությունը, որոնց հետ խեթական արքան հարաբերվում էր կախյալ պայմանագրերի միջոցով (այս խնդրի մասին տես ստորև տեքստում՝ Գլուխ 3):

## ԱՌՆՈՒՎԱՆԴԱՍ Ի-Ի ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առնուվանդաս Ի-ի «Տարեգրությունները» պահպանվել են մի քանի տարբեր չափսերի բեկորների տեսքով՝

KUB XXIII 21	KUB XXIII 116
KUB XXIII 14	KUB XXIII 49
KUB XXIII 116	KUB XXIII 26
KUB XXIII 49	KUB XXIII 65
KUB XXIII 14	

Սրանց նույնականացումը և մասնակի հրատարակությունը իրականացրել են Ա. Գյոթցեն և Օ. Կարրուբան<sup>72</sup>:

Առնուվանդասի «Տարեգրություններից» միայն KUB XXIII 14-ն է վերաբերում վերինեփրատյան տարածաշրջանի «երկրների» և Խեթական տերության փոխհարաբերություններին: Այս տեքստում արքան սկզբում անդրադառնում է հոր՝ Թուդիտալիյաս II-ի գործունեությանը (ԴԿ II), այնուհետև շարադրվում է իր գործունեությունը (ՀԿ III):

### KUB XXIII 14

#### ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄ<sup>73</sup>

##### ԴԿ II

- 1) na-at-kán A-NA <sup>m</sup>Ša-u[š-ša-tar?.....
- 2) ne-e-an-ta-ti nu-u[š .....  
3) a-pé-el ŠA KUR <sup>URU</sup>Ḫur-[ri .....  
4) na-aš-kán an-da I-M[A ...  
5) ÉRIN<sup>MES</sup> ANŠE.KUR.RA<sup>MES</sup> ŠA [.....  
6) an-da i-mi-ya-an-t[a-ti? .....  
7) at-ta-aš-mi-iš IŠ-ME [.....  
8) na-aš I-NA KUR <sup>URU</sup>I-šu-w[a .....  
9) ŠA KUR <sup>URU</sup>A-aš-šu-wa-ma [.....  
10) ú-da-aš ÉRIN<sup>MES</sup>-az <sup>URU</sup>Ḫa-a[t-ti? .....  
11) [...] ḫa-a-an-ti tu-[uz-zi-in? .....

Պահպանվել է միայն երեք նշանների վերին մասը:

<sup>72</sup> = CTH 143. Götze 1928: 156ff.; Goetze 1940: 56ff.; Carruba 1977: 166ff.

<sup>73</sup> Տառադարձումը և թարգմանությունը տես Carruba 1977: 172:

ԴԿ 11

- 1) Եվ նա/այդ Սաու[սաստարին .....]
- 2) Նրանք շրջվեցին և նա [.....]
- 3) դրա/նրա խուրրի երկրի .....
- 4) և նա [.....]
- 5) [.....]-ի զորքը և մարտակառքերը [.....]
- 6) կխառ[նեն? .....
- 7) հայրս լսեց [.....]
- 8) և նա դեպի Իսուվ[ա .....]
- 9) սակայն Աստուվայի [.....]
- 10) նա բերեց: Խա[թթիի] զորքը [.....]
- 11) [...] առջև զոր[քը]?:...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տարեգրությունների» վերը հղված հատվածը որևէ հիմնավոր մեկնաբանության հնարավորություն չի ընձեռում: Այստեղ հիշատակվող տեղանունները (խուրրի, Իսուվա, Աստուվա, Խաթթի), ինչպես նաև Միտտանիի արքա Սաուստարի անունը ընդամենը կարող են ակնարկել Թուղխայիյաս II-ի ռազմաքաղաքական ձեռնարկումների ուղղության մասին, այն է՝ Միտտանիև և Իսուվան: Ամենայն հավանականությամբ, խոսքը այն նույն իրադարձությունների մասին է, որոնք անհամեմատ ավելի հիմնավոր կերպով ներկայացված են նույն Թուղխայիյասի և Կիցցովատնայի արքա Սունաստուրայի միջև կնքված պայմանագրում (տես ստորև՝ հաջորդ բաժինը):

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹՈՒԴԻՆԱԼԻՅԱՍ ԵՎ ԿԻՑՑՈՒՎԱՏՆԱՅԻ ԱՐՔԱ  
ՍՈՒՆԱՍՍՈՒՐԱՅԻ ՄԻՋԵՎ (KBo I 5+)**

Թուդիսայիյաս II-ի և Կիցցուվատնայի արքա Սունաստուրայի միջև կնքված պայմանագիրը պահպանվել է երկու լեզուներով՝ խեթերեն և արքադերեն (յուրաքանչյուրը մի քանի տարբերակներով)<sup>74</sup>: KBo I 5+-ը պայմանագրի արքադերեն տարբերակն է (CTH 41.I), որտեղ էլ ներկայացված է ընդարձակ տեղեկատվություն Իսուվայի նվաճման վերաբերյալ: Նախկինում այս պայմանագիրը վերագրվում էր Սուպիլիուպիումաս I-ին, սակայն հետագայում վերաթվագրվեց ավելի վաղ շրջանով<sup>75</sup>:

Պայմանագրի ներածականում խեթական արքան, որպես նախադեպ, հիշատակում է Իսուվայի նվաճման հետ կապված մի իրադարձություն: Ըստ նրա, Իսուվան խեթական տիրապետության տակ էր գտնվել, սակայն հետագայում քնակչության մի մասը ապստամբել էր ու խեթական զորքի առաջխաղացման ժամանակ հեռացել էր Խուրրի երկիր (Միտտանի): Վերջինիս արքան հրաժարվել էր վերադարձնել փախստականներին, ավելին, միտտանական զորքը մտել և ասպատակել էր Իսուվան: Այս տեղեկությունը կարող է վկայել հոգուտ այն ենթադրության, որ նախքան խեթական նվաճումը Իսուվան պետք է դաշնակցային հարաբերությունների մեջ գտնվեր իր հարավային հարևան Միտտանիի հետ կամ առնվազն միտտանամետ դիրքորոշում ունենար:

<sup>74</sup> CTH 41 և 131. հրատ.՝ Weidner 1923: 88ff.; Götze 1924; Del Monte 1981: 215ff.; Beckman 1996: Nr.2, p.13ff. (թարգման.); Altman 1990: 177ff.; 2001: 12ff. (հատված. թարգմանություն և պատմագիտական մեկնաբանություն); Аветисян 1984: 59-60 (ԴԿ 8-13, 20-23):

<sup>75</sup> Wilhelm 1988; նաև Del Monte 1981: 219f. և Beal 1986:

74

1) [N]A<sub>4</sub>.KIŠIB \*mTu\*-u[t]-b[a-li-y)a ..... ]

2) \*e\*-nu-ma \*KI\* it-ti \*x[.....]

3) i-na bi-ri-šu-nu ni-i[š<sup>7</sup> DINGIR<sup>MES<sup>7</sup></sup> .....]

4) ri-ik-sa<sub>20</sub>-am an-nê-\*e\*-[am] i-na \*bi\*-ri-šu-nu ir-ku-\*su\*

5) pa-na-nu-um a-na pa-n[*i*] a]-bi a-bi-ya KUR<sup>URU</sup>Ki-iz-zu-wa-at-ni

6) ša KUR<sup>URU</sup>Ĥa-at-t[*i*] i]b-bá-ši EGIR ar-ká-nu-um KUR<sup>URU</sup>Ki-iz-zu-w[a-a]t-ni

7) a-na KUR<sup>URU</sup>Ĥa-a[t-t]i ip-čú-ur a-n[a K]UR Ĥur-ri is-ĥu-ur

8) šum-ma x-[...]na KUR<sup>URU</sup>l-šu-[wa ...] \*D\* UTU-ši it-ti <sup>D</sup>UTU-ši

9) nu-kúr-ta[m iš-b]a-tú <sup>D</sup>UTU-ši a-n[a ...]-š<sup>i</sup>-š<sup>i</sup>-nu al-\*li-ik\*

10) KUR<sup>URU</sup>[<sup>U</sup>]- \*š<sup>i</sup>\*-wa el-e-e-š<sup>i</sup>ú ú UR[U ...-š]u a-na pa-ni <sup>D</sup>UTU-ši

11) ip-pár-š<sup>i</sup>-du i-na KUR Ĥur-ri ú-r[*i*]-i-du <sup>D</sup>UTU-ši a-na LÚ Ĥur-ri

12) um-te-e-er ÍR<sup>MES</sup>-ya te-e-er-mi ú LÚ Ĥur-\*ri\* a-na ar-ka

13) a-na <sup>D</sup>UTU-ši ke-e-a-am um-\*te\*-e-er \*la\*

14) URU<sup>DU</sup>URU<sup>RA</sup> an-mu-ut-tim pa-na-a-nu a-na pa-ni a-bi a-bi-ya a-\*na\* KUR Ĥur\*-ri

15) il-li-ku-um-mi aš-ra-a-nu uš-bu-um-mi ú ap-pu-n[a-a]m-\*ma\*

16) [E]GIR ar-ká a-na KUR<sup>URU</sup>Ĥa-at-ti a-na LÚ<sup>MES</sup>mu-un-na-ab-\*tú-ti\*

17) il-li-ku-um-mi i-na-an-na-mi ap-pu-na-am-ma GUD<sup>DU</sup>[\*]·A\*

18) É GUD<sup>RA</sup>·š<sup>i</sup>-nu ú-wa-ad-du-nim-mi ap-pu-na-am-ma

19) i-na KUR-ya il-li-ku-um-mi

20) LÚ Ĥur-ri ÍR<sup>MES</sup>-ya a-na <sup>D</sup>UTU-ši ú-ul ú-te-er-ma \*ÉRIN·MES·š<sup>i</sup>

21) ANŠE.KUR.RA<sup>RA</sup>·š<sup>i</sup>ú iš-pur KUR<sup>URU</sup>l-š<sup>i</sup>-wa ina ar-ki <sup>D</sup>UTU-ši

22) \*e\*-eĥ-bu-tú-nim mi-na-am-me-e NAM.RA<sup>RA</sup> GUD<sup>RA</sup> UDU<sup>RA</sup> ik-š<sup>i</sup>-du

23) \*a\*-na KUR Ĥur-ri uš-te-ri-bu <sup>D</sup>UTU-ši a-ša-ar ša-ni-im-ma

24) [a-n]a LÚKÚR a-na ta-ĥa-az-zi ú-š<sup>i</sup>-ib

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԿ I

- 1) [Թ]ու[դ]խ[ախյ]այի՝ [Մեծ արքայի, Խաթթիի արքայի?] կնիքը:
  - 2) [Ե]րբ [.....] հետ [.....]
  - 3) միմյանց հետ [աստվածային?] երդում? .....
  - 4) և [մի]մյանց հետ այս պայմանագիրը կնքեց[ին]:
- 
- 5) Նախկինում, իմ պապի օրոք Կիցցուվատնան
  - 6) ընկավ Խաթթիի տիրապետության տակ, բայց հետո Կիցցուվատնա երկիրը
  - 7) Խաթթիից ազատվեց և շրջվեց դեպի Խուրրի երկիր:
- 
- 8) Երբ Իսուվայի ժողովուրդը՝ Արևիս [ենթակաները], Արևիս դեմ
  - 9) թշնամություն [սկսեցին], Ես, Արևս, [պատերազմ]մի գն[ացի] նր[անց] դեմ]:
  - 10) Ես հաղթեցի Իսուվային: [Իսուվացիները] իմ առջևից
  - 11) փախան: Նրանք Խուրրի երկիր գնացին: Ես, Արևս, Խուրրիի մարդուն (Խուրրի արքային - Հեղ.)
  - 12) (Նամակ) ուղարկեցի. «Կերադարձրու իմ ենթականերին»: Բայց Խուրրի[ի] մարդը հետ,
  - 13) Արևիս (Նամակ - Հեղ.) ուղարկեց ասելով «Ոչ»:
- 
- 14) «Այդ քաղաքների բնակիչները նախկինում՝ իմ պապի ժամանակ Խուրրի[ի] էին
  - 15) եկել և հաստատվել: Եվ իհարկե
  - 16) հետո նրանք Խաթթի երկիր որպես փախստականներ
  - 17) գնացին: Հիմա վերջապես կովերը
  - 18) իրենց ախոռն ընտրեցին: Իհարկե,
  - 19) նրանք իմ երկիր են եկել»:
- 
- 20) Խուրրիի մարդը իմ ենթականերին Արևիս չվերադարձրեց: Նա իր զորք[ը],
  - 21) իր մարտակառքերն ուղարկեց: Իսուվան Արևիս բացակայության ժամանակ
  - 22) թալանեցին, գերիներ, կովեր և ոչխարներ վերցրեցին,
  - 23) Խուրրի տարան: Արևս այդ ժամանակ
  - 24) ուրիշ թշնամու (դեմ) ճակատամարտի էի (գնացել - Հեղ.):
-



- 25) [LÚ] Hur-ri ni-iš DINGIR<sup>MES</sup> i-te-ti-iq <sup>0</sup>UTU-ši a-na LÚ Hur-ri ke-e'-e'-a-am  
 26) um-te-e-er-ma šum-ma-mi 'a'-na ka-a-šum KUR<sup>0</sup>-tum a-i-ú-u(m-m)a  
 27) iš-tu it-ti-ka i-pát-ťá-ar-mi a-na KUR<sup>URU</sup>Ĥa-'at'-ti  
 28) i-sa<sub>20</sub>-aĥ-ĥu-ur-mi ú ki-i a-wa-tum a-nu-um-mu-um-mi LÚ Hur-ri  
 29) 'a'-na <sup>0</sup>UTU-ši ke-e-a-am um-te-e-er-ma lu-ú qa-tam-ma-mi

- 
- 30) i-na-an-na KUR<sup>URU</sup>Ki-iz-zu-wa-at-ni ša<sup>URU</sup>Ĥa-at-ti GUD<sup>ĤA</sup>  
 31) ú É GUD<sup>ĤA</sup>-šú-nu ú-wa-ad-du-nim it-ti LÚ Hur-ri  
 32) ip-tù-ru a-na <sup>0</sup>UTU-ši is-ĥu-ru LÚ Hur-ri it-ti KUR<sup>URU</sup>Ĥa-at-ti

- 25) Խուրրիի [մարդը] աստվածային երդումը խախտեց: Ես, Արևս, Խուրրիի մարդուն այսպես  
26) (Նամակ - Հեղ.) ուղարկեցի. «Եթե որևէ երկիր քեզնից  
27) ազատվի և դեպի Խաթթի  
28) շրջվի, այդ բանը ինչպես պետք է լինի»: Խուրրիի մարդը  
29) (Նամակ - Հեղ.) ուղարկեց ինձ այսպես. «Հենց նույնը»:

- 
- 30) Այժմ Կիցցուվատնա երկիրը Խաթթիի կույն է  
31) և ընտրել է իր ախոռը: Նրանք Խուրրիից  
32) ազատվել են և շրջվել են Արևիս կողմը: Խուրրի մարդը մեղանչել է  
Խաթթի դեմ:

## Պայմանագրի քաղաքական ենթատեքստը

Պայմանագրում Իսուվայի նվաճման հետ կապված տեղեկատվությունը քաղաքական ենթատեքստ ունի, որի նպատակը Կիցցուվատնայի խեթամետ կողմնորոշումն արդարացնելն է. Նախկինում այն միտտանամետ դիրքորոշում ուներ, սակայն խեթական տերության առաջխաղացման և նվաճումների համատեքստում խեթամետ դիրքորոշում ձեռք բերեց, ակնհայտորեն, Խաթթիի ճնշման տակ<sup>76</sup>:

Եթե պայմանագրում ներկայացված իրադարձությունները հավաստի են, ապա կարելի է վերականգնել դրանց հետևյալ հաջորդականությունը: Նախկինում (ըստ Սաուտատարի՝ նրա պապի օրոք, այն է՝ մ.թ.ա. XV դարի առաջին կեսին) Իսուվայի բնակչության ինչ-որ հատված, թերևս, ազնվականներ, հաստատվել էր Միտտանիում, այնուհետև ետ վերադարձել: Այդ նույն շրջանում կամ ժամանակագրորեն դրան մոտ Իսուվան կախման մեջ էր ընկել Խաթթիից: Հետո Իսուվան Միտտանիի օգնությամբ ազատվել էր խեթական գերիշխանությունից, իսկ նրա բնակչության մի մասը (հավանաբար, վերոհիշյալ անձանց սերունդները) փախել էր Միտտանի: Ամենայն հավանականությամբ, այս վերջին իրադարձությունների համատեքստում է (Թուդխալիյաս II-ի օրոք), Իսուվան վերջնականապես հայտնվել խեթերի գերիշխանության տակ:

<sup>76</sup> Պայմանագրի այս հատվածի ընդարձակ մեկնաբանությունը տես Altman 1990:

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԻ (?)  
ՄԻՋԵՎ (KBo XVI 45)**

խեթական սեպագիր տեքստերի կատալոգում այս տեքստը<sup>77</sup> թվարկված է «Անհայտ բովանդակության խեթերեն լեզվով գրված բեկորներ» պայմանական անվանումը կրող գլխաքառի տակ<sup>78</sup>: Դեռևս տեքստի հրատարակիչ Հ. Օտտենը կարծում էր, որ օգտագործված նշանների գրելաձևի հիման վրա կասկածից վեր է դրա պատկանելությունը «հին խեթական» փուլին<sup>79</sup>:

Տեքստի թվագրումը մ.թ.ա. XV դարի շրջանակներում ակնհայտ է հնագրական չափանիշների լույսի ներքո<sup>80</sup>, սակայն վերագրումը որևէ խեթական արքայի խնդրահարույց է: Թերևս այն կարող է տարվել Նույն դարի առաջին կես (հնարավոր է, Տելեպինոս արքայի կառավարման շրջանը): Նմանապես որոշակի կասկածներ կան դրա բնույթի կապակցությամբ (պայմանագիր թե հրահանգ): Նկատվել է, որ սա, այնուամենայնիվ, ավելի շուտ պայմանագիր է, քանի որ խեթական արքան դիմում է հայասացիներին հոգևակի թվի երկրորդ դեմքով, ինչը հիշեցնում է «Թուդխայիյաս II - Մարիյա+հայասացիներ» պայմանագրի ոճը<sup>81</sup>: Տեքստի կառուցվածքը և որոշ օգտագործված բառերի կիրառությունը վկայում են դրա պատկանելության մասին այսպես կոչված *išhiu* տիպի պայմանագրերին, որոնք հատկանշական են Առնուվանդաս I-ի շրջանին<sup>82</sup>:

Եթե KBo XVI 45-ը իրոք պայմանագիր է, ապա այն պետք է ոչ այնքան ծավալուն լիներ: Պահպանվել է ԴԿ-ի առաջին տողը և ՀԿ-ի եզրափակիչ տողը, ինչի վկայությունը երկու հորիզոնական տողանջատիչներն են: ՀԿ-ի սկիզբը կորսված է:

<sup>77</sup> CTH 832, ինվենտարային համարը՝ 2678/c.

<sup>78</sup> Laroche 1971. Ա. Կասյանը այն հարցականի տակ դիտում է որպես նամակ (Kassian 2002: 81).

<sup>79</sup> KBo XVI.V (Otten). Նույն կարծիքին է նաև խեթական սեպագրական տեքստերի կատալոգի կազմող Ա. Կոշակը (Koşak 2005.2: 166):

<sup>80</sup> Koşak 2005: 166.

<sup>81</sup> *Stu* Քոսյան 2004ա: 126. պայմանագիրը տես Քոսյան 2016ա: 60-67:

<sup>82</sup> Pecchioli Daddi 2002: 263; 2005: 286 Anm.51. Հեղինակը նշում է, որ Նույնատիպ ընդամենը մեկ տեքստ է առկա, որը կազմված է Առնուվանդաս I-ի օրոք (KUB XXVI 10): Նա նշում է տեքստում *EN/BE* <sup>NA</sup>KIŠIB «կնիքի տեր», որը չնայած վկայված է Տելեպինոսի շրջանից, սակայն պայմանագրի ոճը հիշեցնում է Առնուվանդասի շրջանը:

ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՉՈՒՄ

ԴԿ

- 1) [.....]x x x x-pí [.....]  
 2) [.....]x x me?-ma x-ma-za?-x[.....]  
 3) [.....]ša]-a-ak-ti URU]ġa-a-ya-ša-an-za URU.DIDL[<sup>URU</sup>.....  
 4) [.....]x-it URU]ġa-a-ya-ša-aš-ša x[.....
- 
- 5) [.....-tu]-ma-ti nu-za URU]ġa-at-tu-ša-aš ġa-at-[ra-a-ši? ]  
 6) [.....-y]a?- 'la'-an-da-a-e-ma le-e ša-ab-te-  
 [ni.....
- 
- 7) [.....]-tu-ma-ti nu ma-a-an ġa-an-da DUMU.MUNUS<sup>MES</sup>  
 [.....  
 8) [.....] Ú ġa-ni-ya-at-ta ke-a DUMU.MUNUS<sup>MES</sup> pí?-[.....  
 9) [.....] pi-i-e-er MA-ġI-İS ġa-pi-ya-na-ab(-)[.....  
 10) [.....] DUMU-KU-NU

- 11) [.....]x ma-a-an pâr-na-aš iš-ġi-i BE-EL<sup>NA</sup>KIŠ[IB .....  
 12) [.....na-aš-šu?] ġal-ki-iš na-aš-šu-ma GUD-uš UDU-uš nu-uš-š[si?.....  
 13) [.....]x KISLAġ-ŠU A.ŠĀ-ŠU<sup>GS</sup>KIRI<sub>6</sub>.GEŠTIN-ŠU [.....  
 14) [.....] šar-ni-ni-ik-tu nu e-eš-ġa-na-an-[za?.....  
 15) [.....]x-e Ú Ē-SÚ ta-la-a[t-ti? .....  
 16) [.....]x-an DINGIR<sup>MES</sup>-ŠU an-d[ā .....

- 17) [.....]x i-[.....

ՀԿ

- 1') [.....  
 2') [.....] ni? x-[.....
- 
- 3') [.....i]š-pâr-za-aš-za ap-pé-e-ez-zi-i[š? .....  
 4') [.....]x ú-iz-zi nu-uš-ša-ma-aš [.....  
 5') [.....]x LUGAL.GAL-uš ki-iš-ta- 'at' [.....  
 6') [.....-te]-e-ni ma-a-an-ša-ma-a[š.....  
 7') [.....]x-a-ak-ku-uš nu-za pu-u-ri-i[n.....  
 8') [.....] 'x-a' n-zi na-an pé-e-ra-aš-ša [.....  
 9') [.....]x

- 10') [.....]-iš x[.....  
 11') [.....]x DINGIR<sup>MES</sup> x[.....

---

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԴԿ**

- 1) [.....]
- 2) [.....]
- 3) [.....ի]մացիր: Հայաստայի քաղաք[ները/ին .....]

- 
- 4) [.....]x Հայասան էլ [.....]
  - 5) [.....] եվ Խաթթուասս գրու[մ ես/կգրես .....]
  - 6) [.....] իսկ xxxxxxx չնյու[թես/չծրագրես .....]

- 
- 7) [.....] եվ նույնիսկ ինչպես դուստրերը [.....]
  - 8) [.....] և Խանիյատտան, այդ դուստրերը/դուստրերին [.....]
  - 9) [.....] տանը հարվածեց: Խապիյանախը [.....]
  - 10) [.....] քո որդիները

- 
- 11) [.....]
  - 12) [..... լինի դա] հացահատիկ, կովեր (և) ոչխարներ, նրա[ն.....]
  - 13) [.....] նրա կալատեղերը, դաշտերը, խաղողի այգիները [.....]
  - 14) [.....] թող փոխհատուցեն և արյունից/արյան դիմաց [.....]
  - 15) [.....] նրա տունը [ես] հանգ[խտ կթողնեմ .....]
  - 16) [.....] նրա աստվածները [.....]

- 
- 17) [.....]

**ՀԿ**

- 1') [.....]
- 2') [.....]
- 3') [.....փ]ախան, ետին/ստորին [.....]
- 4') [.....] եկավ և նրանց [.....]
- 5') [.....] Մեծ արքա դու դարձար [.....]
- 6') [.....]-եք, եթե ձե[զ.....]
- 7') [.....] xxx եվ [ծեր/քո] շուրթ[ը]/շուրթ[երը] .....
- 8') [...եթե .....]-եք, քո/ձեր տներն էլ [.....]
- 9') [.....]

- 
- 10') [.....]

- 11') [.....] աստվածները [.....]

ԴԿ

1-2: Առաջին երկու տողերում թերի պահպանված նշանների կապակցված ընթերցումը հնարավոր չէ դրանց խիստ ուրվագծային վերարտադրման պատճառով: Հնարավոր է, 2-րդ տողում կարելի է տեսնել *mēma-/memi(ya)-* «խոսել, ասել, հայտարարել, հռչակել» բայը<sup>63</sup>:

3: Տողակզրի վնասված մասի վերջում ակնհայտորեն գրված է [...*ša*]-*ak-ti* «իմացիր» (*sak(k)-/sek(k)-* «զիտենայ, իմանալ»՝ *šakuwa-* «աչք» գոյականից): Սուպալիոյի մասնա I-ի Հայաստանի արքա Խուսկանայի միջև կնքված պայմանագրում առկա է այս բայի կիրառության մի օրինակ. *nam-ma-ma-za da-ma-in BE-LAM ku-i-e-ša-aš ku-iš* [UN-aš] *A-NA* <sup>64</sup>*UTU*<sup>65</sup> *EGIR-an ar-ḫa le-e ku-in-ki ša-a-ak-ti* «Բայց հետո ուրիշ տիրոջ, [ով] էլ որ լինի, Արևիս ետևում չճանաչես» (KBo V 3 ԴԿ I 14-15)<sup>66</sup>: Այս բայի նման կիրառության այլ ենթատեքստեր էլ կան պայմանագրերում: Նույն տողում անմիջապես հիշատակվող «Հայաստանի քաղաքներ» արտահայտությունը կարծես նշում է այն մասին, որ խոսքը իրոք պայմանագրի մասին է:

5: Տողի առաջին մասի վնասված մասի վերջում առկա է *-tu-ma-ti* (հրամ. եղ. հոգնակի երկրորդ դեմք), ինչը թույլ է տալիս ենթադրելու մի գործողություն, որը խեթական արքան ակնկալում է պայմանագիր կնքողի կողմից (նույնը նաև 7-րդ տողի սկզբում): Տողի երկրորդ վնասված մասից առաջ առկա են *ḫa-at-[.....]* նշանները, որոնք կարելի է վստահաբար դիտել որպես *hatrai-* «գրել» բայի առաջին երկու նշանները, մանավանդ որ այս բառին նախորդում է <sup>67</sup>*ḫattušaš*-ը: «Եվ խաթթուսաս [դու] գրե[ցիր]»:

6: Այս տողի բարգմանությունը որոշակի բարդությունների հետ է կապված, չնայած ընդհանուր իմաստը պարզ է: *šanḫ-/šah-* «փորձել, ձգտել, հետաքրքրվել, նյութել և այլն» բայը *le/UL* ժխտական նախդիրով պայմանագրերում և նմանօրինակ տեքստերում սովորաբար ինչ-որ բացասական գործողության վրա դրվող արգելք է նշանակում: Օրինակ,

KBo IV 3 I 44-45.

*nu-uš-ma-aš me-na-aḫ-ḫa-an-da i-da-a-lu le-e* [*ša*]-*an-aḫ-ti*

«Նրանց դեմ չար բան մի փորձի անել»:

KBo IV 3 IV 12.

*nu IT-TI* <sup>68</sup>*UTU*<sup>69</sup> *ḪUL-lu ša-an-aḫ-ti*

<sup>63</sup> CHD.L-N: բայի համար տես p. 254.

<sup>64</sup> Sbu *Քոսյան* 2016ա: 20-21:

«Եվ դու Արևիս դեմ դավ եյութես»:

Սակայն տողի սկզբում առկա վնասված մասից հետո կասկածելի է նախ որոշակորեն վնասված ևս նշանի ընթերցումը, այնուհետև բավական լավ պահպանված հաջորդ նշանները որևէ հայտնի խեթերեն բառի վերականգնման հնարավորություն չեն ընձեռում, քանի որ դրա սկզբնական նշանները բացակայում են: Այդ պատճառով մենք նախընտրել ենք ձեռնպահ մնալ որևէ մեկնաբանությունից:

**7:** Տողասկզբի վնասված մասի վերջում պետք է գրված լիներ ինչ-որ բայ, որի վերջավորությունը առկա է նաև 5-րդ տողում (տես վերը): *ma-a-an ha-an-da* բառակապակցության առկայությունը ևս մի փաստարկ է մեր տեքստի վաղ թվագրման օգտին: Ավելի ուշ շրջանի տեքստերում հաճախակի հանդիպում ենք *mahhanda* ձևին («նույնիսկ ինչպես»)՝<sup>85</sup>: Հավանաբար, խոսքը հայաստական կողմի դուստրերի մասին է, որոնք անվանապես հիշատակվում են 8-9-րդ տողերում: Նույնը վկայում է նաև 9-րդ տողում «տուն» բառի գրությունը (*pi-i-e-er*). ավելի ուշ շրջանում այս բառը, որպես կանոն, գրվում է *É* գաղափարագրով:

**7-10:** Տեքստի այս հատվածում խոսվում է «դուստրերի» և «որդիների» մասին. դժվար է կասկածի առնել այն, որ խեթական արքան նկատի ունի հայաստական կողմի ինչ-որ անձի կամ անձանց սերունդներին: Այստեղ առավել կարևոր է թվում երկու իզական անունների հիշատակությունը (*Haniyatta* և *Hapiyanah*[-?]): Սույն անձնանունները խեթական տեքստերում այլևս վկայված չեն: Սրանցից առաջինը Յ. Տիշլերը ժամանակին համեմատել էր Նուզիից հայտնի խուրրիական արական սեռի անձնանուն *\*Haniate*-ի հետ՝<sup>86</sup>: 8-րդ տողի սկզբի պակասող մասում պետք է գրված լիներ առնվազն մեկ այլ դաստեր անուն, քանի որ պահպանված անունից (*Haniyatta*) առաջ դրված է *Ú* «և» շաղկապը. Արդյոք դա հաջորդ տողում հիշատակվող *Hapiyanah*-ն է, պարզ չէ:

Երկու կանանց անվանապես հիշատակությունը եզակի դեպք է խեթական տեքստերում՝ Վերին Եփրատի ավազանի քաղաքական միավորներին առնչվող տեքստերի համար: Այլևս ոչ մի տեքստում վերինեփրատյան երկրներից որևէ իզական անձնանուն հայտնի չէ. միակ բացառությունը Իսուվայի Վատարուսնա քաղաքից խաթթի բերված քրմուհու անունն է՝ *\*AMA-iš* (*Anniš*, HT II C4 V 9):

**11:** *BE-EL* <sup>MAKIS</sup>[18] «կնիքի տան տեր/զվխավոր» պաշտոնի անվանումը խեթական տեքստերում այլևս վկայված չէ: Ֆ. Պեքքիլի Դադիին այն մեկնաբանում է որպես «պահեստապետ» կամ դրան մոտ ինչ-որ

<sup>85</sup> Այս բառի կիրառությունների համար տես Puhvel 2004: 41f.:

<sup>86</sup> Tischler 1982: 442.



պաշտոն, որը կապված է Խեթական տերության տարբեր քաղաքներում տեղակայված «կնիքի տներին» (É<sup>84</sup>KIŠIB) հետ<sup>87</sup>:

12: Տողասկզբի վնասված մասում našša վերականգնումը ըստ ենթատեքստի, վնասվածքից հետո թվարկվում են «ոչխարներ», «կովեր», իսկ հաջորդ տողում՝ «կալատեղեր» և «խաղողի այգիներ»:

15: ta-at-r[a-a]b-bi? ] «դրդի (ներկա ժամ. եզ. III դեմք)» վերականգնումը հստակ չէ և ավելի շատ հենվում է KUB XXXI 103 ԴԿ 11'-16'-ում առկա ենթատեքստի վրա (տես վերը, Գլուխ I), որտեղ խոսվում է պայմանագրի հնարավոր խախտման մասին (դրդել որևէ մեկին հանդես գալ խեթական արքայի դեմ)<sup>88</sup>: Թերևս, մեր համատեքստին ավելի նպատակահարմար է dāša-/tāša- «թողնել, հեռանալ, հանգիստ թողնել, խաղաղության մեջ թողնել» բայի<sup>89</sup> վերականգնումը (dalatti - ներկա ժամ. եզ. II դեմք): Բային նախորդում է Ú É-SÚ «և նրա տունը», որը կարծես վկայում է վերը նշված երկրորդ բայի առկայության օգտին:

#### ՀԿ

3': išpart/z- «փախչել, լքել, հեռանալ» բայի վերականգնումը հաստատ է: Այս բայը վաղուց ի վեր համադրվել է հայերենի սպրդեմ «փախչել» բայի հետ, որն ընդունվում է մասնագետների կողմից<sup>90</sup>:

5': Այստեղ «արքա» (haššuš) բառին հաջորդում է kis- «լինել, դառնալ» բայը, սակայն բառի գրության մեջ չորրորդ նշանի սկիզբը մի փոքր վնասված է և թերևս դա at-ն է. դա թույլ է տալիս վերականգնել kištat բառաձևը (անցյալ ժամանակի եզակի երկրորդ դեմք), ինչը մեր ենթատեքստում բավական տարօրինակ է («(Եթե) մեծ արքա դու դառնաս»): Պարզ չէ, թե ում մասին է խոսքը՝ խեթական արքայի թե՛ նրա, ում հետ կնքվել է պայմանագիրը: Այնուամենայնիվ, մենք այդպես էլ վերականգնել ենք, մեկնաբանությունները թողնելով հետագա ուսումնասիրություններին:

6': [-te]-e-ni-ն ներկա ժամանակի հոգնակի երկրորդ դեմքի վերջավորությունն է, ինչը թույլ է տալիս վնասված մասում ենթադրել խեթական արքայի հետ պայմանագիր կնքող անձանց հետ կապված (կամ նրանց պարտադրված) ինչ-որ գործողություն:

<sup>87</sup> Pecchioli Daddi 1982: 109 («signore del magazzino; impiegato del magazzino»).

<sup>88</sup> Այս բայի կիրառության և ստուգաբանության մասին տես Kloekhorst 2008: 857:

<sup>89</sup> Բայի համար տես Kloekhorst 2008: 816ff.:

<sup>90</sup> Канайца 1931: 48; Puhvel 1984: 450; Kloekhorst 2008: 410.

8': [.....] x-a n-zi-ն ներկա ժամանակի հոգնակի երկրորդ դեմքի վերջավորությունն է: Այստեղ խոսքը պայմանագիր կնքող կողմի ինչ-որ բացասական գործողության մասին է:

### «ԱՐԵՎԵԼՅԱՆ» ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ (KUB XXVI 62)

Այս տեքստն իրենից ներկայացնում է հնթական տեղության ազդեցության ուլորտում ընկած Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան շրջանների (կասկական ցեղերի տարածքը) և վերինեփրատյան երկրների առանձին բնակավայրերից զինձառայության վերցված զինվորների ցուցակ<sup>91</sup>:

Հիշատակվող տեղանուններն են՝ Սալա, Էրխիտա (Նախորդ տեքստում Արխիտա), Լիտտա, Տեմիյա (Նախորդում՝ Տիմիյա), որոնցից երեքը հայտնի են նաև այլ աղբյուրներից: Մասնավորապես, Արխիտա քաղաքը (բառասկզբում a:e հերթագայությամբ) հիշատակվում է KUB XXIII 72+-ում որպես հակախեթական դիրքորոշում ունեցող Պախխուվայի դաշնակիցը, ինչպես նաև խեթա-հայասական մի պայմանագրում (KUB XXVI 39) հանդես է գալիս Արխիտայի Ամպրոպի աստվածը<sup>92</sup>: Իսկ Տեմիյան նույնն է ինչ միևնույն տեքստում պախխուվացիների հարձակումներից տուժած Տիմիյան<sup>93</sup>: Ինչ վերաբերում է Սալային, ապա այն վկայված է մեկ այլ տեքստում որպես հնթական տեղության ազդեցության գոտու արևելյան շրջանների սահմաններին ընկած բնակավայր<sup>94</sup>:

<sup>91</sup> CTH 140.1. Այս և նմանատիպ տեքստերի մի մասի հրատարակությունը տես Von Schuler 1965: 134ff.: Ստորև հղվող հատվածի գիտական տառադարձումը տես S.145:

<sup>92</sup> Տեքստի հրատարակությունը և մեկնաբանությունները տես Քոսյան 2004գ:

<sup>93</sup> Տեմիյա-Տիմիյայի առնչությամբ առաջարկվել է համադրությունը անտիկ աղբյուրների Ցիմենոսի և հետագայի հայկ. Ջիմին բնակավայրի հետ Երզնկայի դաշտում (կարծիքների համար տես Քոսյան 2004ա: 97, նաև Գլուխ 3. «Վերին-եփրատյան տարածաշրջանի քաղաքական աշխարհագրությունը»):

<sup>94</sup> Տես Քոսյան 2004ա: 84:

## Հ 4 IV

- 26') 50 ÉRIN<sup>MES URU</sup> Mu-ut-ḫa-l[i?....  
 27') 50 ÉRIN<sup>MES URU</sup> Ta-at-t[a?....  
 28') ŠU-ŠI ERIN<sup>MES URU</sup> Ki-i[l-....  
 29') 1 ME ÉRIN<sup>MES URU</sup> Ta-x-[-  
 30') 10 ÉRIN<sup>MES URU</sup> Aš-du-he-e-r[a(-)...  
 31') ŠU.NIGIN 60 ME 35 ÉRIN<sup>MES</sup> KUR URU ...  
 32') \*Wa-al-ta-ḫi-iš LÚ URU Ḫa-x-[-  
 33') \*Ku-u-wa-aš LÚ URU Ša-a-la n[u-za? li-in-ki-ya-  
 34') LÚ URU E-er-ḫi-ta nu-za li-in-k[i-ya(-)...  
 35') LÚ URU Li-it-ta nu-za li-in-ki-ya(-)...  
 36') \*Ḫ[i]-i-n[i]-iš LÚ URU Te-mi-ya Ú-U[L ....  
 37') L[Ú DJUB.SAR I-NA URU Ḫa-at-ti  
 38') \*Ka-a-ši-ya-ra DUMU \*Ta-ra-aš-ku-il DUMU \*A?-[-....  
 39') \*Pát-tal-li-ya DUMU \*U-ra-wa-al-ku-i(-)[-....  
 40') DUMU \*Pa-a-ta \*Kal-ma-ḫa-zi-ti DUM(U) ....  
 41') \*Tar-ḫu-un-da-zi-ti DUMU \*Ku-uk-ku(-)[-...  
 42') x{....  
 43') Š[U.NIG]IN 6+{x....

ՀԿ IV

- 26) «50 զինվոր Մուտխալ[ի(-)] քաղաքից, [
- 27) 20 զինվոր Տատտ[ա?(-)] քաղաքից, [
- 28) 60 զինվոր Կի[(-)] քաղաքից, [
- 29) 100 զինվոր Տա-ա[ ] քաղաքից, [
- 30) 10 զինվոր Աշդուխեր[ա(-)] քաղաքից]
- 31) Ընդամենը՝ [...] երկրի 635 զինվոր:
- 32) Իա-ա[...] քաղաքից Վալտախիսր,
- 33) Սալա քաղաքից Կուվասը: Ն[ա երդվեց?: ...-ը]
- 34) Էրխիտա քաղաքից: Եվ [նա] երդվեց: ...ը]
- 35) Լիտտա քաղաքից: Նա երդվեց:]
- 36) Իխն[ի]սը Տեմիյա քաղաքից չ[երդվեց:]
- 37) [Գ]րիչր Իաթթասասում [.....]:
- 38) Կասիյարան՝ Տարասկուիլի որդին, Ա-[.....]-ի որդին, [....
- 39) Պատտալիյան՝ Ուրավալկուի(-)[...] որդին, [...
- 40) Պատայի որդին, Կալմախացիտին՝ [.....]-ի որդի[ն, ....
- 41) Թարխունդացիտին՝ Կուկկու(-)[...] -ի որդին, [
- 42)...
- 43) Ընդամենը 6[... զինվոր]»:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձինվորների ցուցակը կազմված է երեք տարրեր սկզբունքներով.

**26'-31'**: Տեքստի այս հատվածում զինվորները թվարկվում են ոչ անվանապես, այլ ըստ բնակավայրերի: Արդյունքում նշված 635 թիվը, ակնհայտորեն, ընդգրկում է նաև տեքստի կորսված հատվածում և նախորդ տողերում հիշատակվող զինվորների ընդհանուր քանակը:

**32'-37'**: Այստեղ արդեն ցուցակն ընթանում է անվանապես: Վերջին տողում նշվող «գրիչը» կարող էր լինել մայրաքաղաք Խաթթուասում այս ցուցակն արձանագրողը (ինարավոր է նաև այլ բացատրություն):

**38'-41'**: Այս հատվածում թվարկումը կատարվում է այլ սկզբունքով՝ զինվորն ըստ հայրանվան:

Առաջին և երրորդ ցուցակները գրեթե հնարավորություն չեն ընձեռում որևէ պատկերացում կազմելու զորահավաքի աշխարհագրության վերաբերյալ: Առաջին ցուցակում հիշատակվող բնակավայրերը խեթական մյուս տեքստերում այլևս վկայված չեն: Ինչ վերաբերում է երրորդին, ապա անձնանունների առկայությունը կարող է վկայել միայն տվյալ տարածքի էթնիկական բովանդակության մասին (այդ մասին ստորև՝ Գլուխ III):

Երկրորդ ցուցակի տեղանունները հինգն են, որոնցից ամբողջությամբ պահպանվել են չորսը, իսկ մեկից՝ առաջին նշանը և երկրորդ սեպախմբի սկիզբը (երկու հորիզոնական սեպեր):

Տեքստը<sup>95</sup> լեզվա-հնագրական հիմքի վրա թվագրվում է այսպես կոչված «միջին խեթական դարաշրջանով»<sup>96</sup>, խեթական արքա Թուդխալիյաս II-ից մինչև մոտավորապես Թուդխալիյաս III. առավել հավանական է Անուվանդաս I-ի շրջանը<sup>97</sup>: Այս ընդարձակ տեքստը ամբողջությամբ նվիրված է խեթական արքայի պալատում թիկնապահ ջոկատի ամենօրյա պահակային ծառայողական պարտականությունների նկարագրությանը: Արքայական թիկնազորի կազմում, ըստ տեքստի, գտնվում էին նաև տերության արևելյան շրջանների զինվորներ:

#### Հ4 III

- 35) ma-a-an a-ra-aḫ-zi-na-an-ma ku-in-ki ÉRIN<sup>MES</sup>-an na-aš-šu ÉRIN<sup>MES URU</sup>Qa-a-aš-ga ku-u-ru-ra-aš  
 36) na-aš-ma ÉRIN<sup>MES URU</sup>Kum-ma-ḫa ku-i-na-an im-ma ku-in ÉRIN<sup>MES</sup> LUGAL-uš ḫal-za-a-i  
 37) nu LÚ<sup>MES</sup> ME-ŠE-DI-TIM EGIR-an-da ḫu-u-ma-an-te-eš pa-a-an-zi ma-a-[a]n-[š]a-ma-aš  
 38) G<sup>S</sup>SUKUR<sup>TR.A</sup>-ma te-pa-u-e-eš-zi na-aš-ta A-NA LÚ<sup>MES</sup> SUKUR<sup>TR.A</sup>-G<sup>S</sup>SU[KUR<sup>TR.A</sup>]  
 39) ar-ḫa ta-an-zi na-at EGIR-an-da pa-a-an-zi na-at-za ḫu-u-la-li-ya-u-wa-ar  
 40) ḫal-zi-iš-ša-an-zi

<sup>95</sup> Տեքստի ամբողջական գիտական հրատարակությունը տե՛ս Jakob-Rost 1965: 166ff.; Güterbock and Van den Hout 1991, իսկ առանձին ընդարձակ հատվածները՝ Atp 1940: 6ff.; Atp 1983: 10f., 106ff.; սույն հատվածը տես Քոսյան 2002թ: 229:

<sup>96</sup> Այս տերմինի համար տես Neu 1979: 82; Houwink ten Cate 1970: 3f.; Ա. Կամմենհուբերն առաջարկում էր «վաղ նոր խեթերեն» «Frühjungghethitisch» կամ «արխայիկ նոր խեթերեն» «Archaischjungghethitisch») (Kammenhuber 1969: 281):

<sup>97</sup> Ֆ. Հուսթինք տես Կատեն այս տեքստը գիտում է որպես «Հնարավոր է միջին խեթական» (1970: 6), մոտավորապես Թուդխալիյաս I-ից մինչև Թուդխալիյաս III-ի կառավարումը ներառյալ:

- 35 ) «Իսկ երբ ինչ-որ օտար ջոկատներ թշնամի կասկերի ջոկատներ,  
 36 ) Կումմախայի ջոկատներ կամ ինչպիսի ջոկատներ էլ որ լինեն, արքան կանչի,  
 37 ) ապա բոլոր պահակները կհետևեն նրանց: Բայց եթե նրանց համար  
 38 ) նիզակները պակասեն, նրանք նիզակակիրներից նիզակներ  
 39 ) կվերցնեն և կհետևեն (նրանց): Նրանք դա շրջափակում են  
 40 ) անվանում»:

Այս տեքստի վերը հղված հատվածը կարևոր է այն առումով, որ KUB XXVI 62-ից<sup>98</sup> զատ, լրացուցիչ և ուղղակի տեղեկատվություն է պարունակում Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների բնակչության շարքերից գինվորների հավաքագրման վերաբերյալ: Ընդ որում այստեղ մասնավորեցված է այդ գինվորների գինձառայության ոլորտը՝ խեթական մայրաքաղաք Խաթթուսասում գտնվող արքայական պալատը: Վերինեփրատյան կախյալ երկրների վրա դրված պարտականությունների շարքում պայմանագրերում հստակ նշվում է խեթական արքային անհրաժեշտության դեպքում գինուժով աջակցելու պահանջը<sup>99</sup>: Սակայն պայմանագրերում խոսվում է միայն ռազմական գործողությունների ընթացքում զորաջոկատների տրամադրման մասին, իսկ մեր տեքստը և KUB XXVI 62-ը վկայում են, թերևս, երկարաժամկետ գինձառայության մասին:

<sup>98</sup> Տես վերը սույն գլխում:

<sup>99</sup> «Պայմանագիր Աուպպիդուլիումասս Ի-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև» (Քոսյան 2016ա: 26-27 [ԴԿ II 26-31]), «Պայմանագիր Թուդխայիյաս III-ի և Մարիյասի ու Հայասայի ժողովրդի միջև» (Քոսյան 2016: 62-63 [34'-40']):

Այս տեքստը<sup>100</sup> նամակ է գրված խեթական արքայի կողմից թագուհուն, որտեղ ներկայացվում է ինչ-որ գետով ազգությամբ կասկ աշխատողներին մթերք հասցնելու մասին: Այստեղ նկարագրվում է Պիտտիյարիզա քաղաքից նավերով կամ լաստերով մինչև Սամուխա հացի առաքումը: Ճանապարհին հիշատակվում է Արծիյա քաղաքը, որտեղից ևս լրացուցիչ մթերք էր բեռնվել:

Մինևույն նավարկելի գետի ափին վերոհիշյալ քնակավայրերի գտնվելու փաստը կարևոր է ինչպես ցննարկվող ժամանակաշրջանի պատմական աշխարհագրության խնդիրների, այնպես էլ վերինեփրատյան տարածաշրջանում խեթական տերության արտաքին քաղաքականության լուսաբանման տեսանկյունից: Խնդիրն այն է, որ ներկայումս դեռևս լուծված չէ սույն գետի նույնականացման հարցը (Եփրատ կամ Հալիս)<sup>101</sup>:

<sup>100</sup> CTH 188. հրատ. Garstang and Gurney 1959: 33f. (թարգման.); Cornelius 1958: 37f.; Hagenbuchner 1989: 136ff. (գիտական տառադարձում և թարգմանություն); Hoffner 2009: 81ff. (թարգման.); Marizza 2009: 123ff.

<sup>101</sup> Եփրատ = Bilgiç 1945-1951: 29f.; Houwink ten Cate 1970: 62 n.31; Χαχατριαν 1971: 54տ.; Ünal 1974: 209f.; Laroche 1985: 91f. և այլն; Հալիս = Garstang and Gurney 1959: 33ff.; Forlanini 1979: 184 n.105 և այլն:



74

- 1') [.....]x[.....]  
 2') [..... ɸa-at-r]a-a-nu-un ki-nu-na [.....]  
 3') [.....] xxx É <sup>GIS</sup>ša-ma-ma-na-aš x [.....]  
 4') [nu A-NA <sup>GIS</sup>MÁ<sup>TR.A</sup> URUPít-te-ya-ri-ga-za ɸal-ku-eš-šar <sup>URU</sup>Ša-mu-u-[ɸa]  
 5') [ku-it U-UL?] 1-ŠU pé-e-te-er nu ɸa-an-te-ez-zi KASKAL-ši ki-iš-ša-a[n da-  
 i-e-er]  
 6') [4 ME 50 NINDA ERÍN<sup>MES</sup> 10-ti-li-iš 6 ME NINDA ERÍN<sup>MES</sup> URUQa-aš-qa 16  
 PA ZÍD.DA KU;  
 7') [.....] x nu wa-a-tar te-pu ku-it e-eš-ta nu-uš-ša-an A-NA <sup>GIS</sup>MÁ  
 8') [... a]-pád-da da-i-e-er ki-nu-na-aš-ša-an u-i-te-e-ni ne-e-a-at  
 9') [nu <sup>GIS</sup>MÁ<sup>TR.A</sup> URUPít-te-ya-ri-ga nam-ma da-iš-te-i-e-er  
 10') [nu-uš-ša-a]n A-NA <sup>GIS</sup>MÁ<sup>TR.A</sup> ki-iš-ša-an da-i-e-er  
 11') [1 ME 30 PA ZÍZ] 1 ME 20 PA ŠE nu ŠU.NIGIN-ma I-NA 2 KASKAL<sup>NE</sup> 1 ME  
 30 PA ZÍZ  
 12') [1 ME 20 PA ŠJE 1 LI-IM 50 NINDA ERÍN<sup>MES</sup>  
 13') [ɸa-an-t]e-ez-zi pal-ši-ya <sup>GIS</sup>MÁ TUR <sup>URU</sup>Ar-zi-ya-za da-iš-te-ya-an-zi  
 14') n[u-uš-š]a-an ki-iš-ša-an ti-ya-an-zi 50 PA ŠE 6 ME NINDA ERÍN<sup>MES</sup> [.....]  
 15') [(nu) ŠU.NIG]IN.GAL ki-iš-ša-an <sup>GIS</sup>MÁ<sup>TR.A</sup> ku-it ka-(ru-u ɸal-ku-eš-šar)  
 16') [<sup>URU</sup>Ša-mu-u-ɸa pé-e-ɸu-te-er [1 LI]-IM 6 ME 50 [NINDA ERÍN<sup>MES</sup>

**Ստորին եզր**

- 17') ŠÁ.BA 4 ME 50! NINDA ERÍN<sup>MES</sup> 10-ti-li-[iš] 1 ME 30 PA ZIZ [1 ME 70 PA  
 ŠE]  
 18') [n]a-at 3 ME PA ZÍZ ŠE-[ya]  
 19') [ki-nu-na?] <sup>GIS</sup>MÁ<sup>TR.A</sup> URUPít-t[e-ya]-ri-ga nam-ma x[.....]  
 20') [na]-aš-[t]a? a-pí-ya da-iš-te-ya-an-zi

ԴԿ

- 1') [.....]
- 2') [.....ես գր]եցի: Այժմ [.....]
- 3') [.....] xxx «սեզամի տունը» [.....]
- 4') [Եվ] նավերը Պիտտիյարիզայից Սամուխա սննդամթերք
- 5') մեկ անգամից [չեն] տանում: Առաջին ուղևորության ընթացքում այսպես են անում.]
- 6') [450 զինվորական] [հաց], որ տասնապատիկ է (քաշ ունի?), 600 կասկական զինվորական հաց, 16 PA (= parisu) քաղցր ալյուր
- 7') [.....]: Եվ եթե/երբ ջուրը քիչ է, նրանք այն (մթերքը/բեռը - Հեղ.) դնում են
- 8') [.....] նավերի վրա: Եվ նրանք շարժվում են:
- 9') Եվ այսպես [նավե]րը Պիտտիյարիզայում բարձում են:
- 10') [Նրան]ք նավերը այսպես են բարձում.
- 11') 130 parisu կորեկ, 120 parisu գարի: Ընդամենը- երկու ուղևորության ժամանակ՝ 130 parisu կորեկ,
- 12') [120 parisu գա]րի և 1050 զինվորական հաց:
- 13') [Առա]ջին ուղևորության ժամանակ Արցիյայից փոքր նավ են բարձում:
- 14') Եվ [նրա վրա] այսպես են տեղավորում. 50 parisu գարի (և) 600 զինվորական հաց [...]
- 15') [Եվ ամբ]ողջը միասին այսպես է. երբ նավերով նախ[կինում մթերքը]
- 16') Սամուխա էին տանում, այսքան էր. [1]650 [զինվորական հաց]:

**Ստորին եզր**

- 17') Այդ թվում՝ 450 զինվորական հաց, որ տասնապատիկ է (քաշ ունի?), 130 parisu կորեկ, [170 parisu գարի]:
- 18') [Եվ]դա (միասին) 300 parisu կորեկ (և) գարի է:
- 19') [Այժմ?] նավերը Պիտտիյարիզա են [վերադառնում?]:
- 20') Եվ այնտեղ (կրկին) բեռնվում են:

3': Չիկագոյի խեթերենի բառարանում  $^{66}\text{Sa}(m)\text{ma}(m)\text{ma}$ -ն թարգմանվում է որպես կաղնու ծառի և դրա պտղի ինչ-որ մի տեսակ<sup>102</sup>։ Նախկինում առաջարկվել էր «սեզամ» թարգմանությունը, որին հետևում է Ա. Հագենբուխները:

4': *halkeššar* բառը թարգմանվում է որպես սենդամթերք, սակայն նկատի առնելով դրա արմատը (*halki-* «հացահատիկ»<sup>103</sup>), պարզ է, որ խոսքը հացամթերքի մասին է:

4'-5': Այս երկու տողերի մեկնաբանությունը որոշակի խնդիրներ է առաջացնում: 5-րդ տողի սկզբում առկա վնասված մասում բացասական *UL* մասնիկ վերականգնելու դեպքում<sup>104</sup> բեռնափոխադրման գործընթացը նոր իմաստ է ստանում, ի տարբերություն նախկինում առկա թարգմանությունների: Այսինքն, մթերքը Պիտոփյարիզայից հնարավոր չէր տեղափոխել Սամուխա մեկ ուղևորության ընթացքում կապված գետի ջրի ցածր մակարդակի հետ. նույն տողի շարունակությունը հաստատում է այս վերականգնումը:

5': Տողավերջի լակունայում վերականգնումը կամայական է: *kiššan* բայի առկայությունը կարող է թույլ տալ առաջարկել «անել» բայը. Ա. Հագենբուխները առաջարկում է [*նալի վրա*]: երկու դեպքում էլ իմաստը նույնն է:

6': Ավելի վաղ շրջանի հրատարակություններում երկու հացատեսակները չէին տարբերակվում: Մասնավորապես, ենթադրվում էր, որ *6 ME NINDA ERIN*<sup>105</sup> *URUQašqa*-ն նշանակում էր «600 զինվորական հաց ազգությամբ կասկ աշխատողների համար»<sup>106</sup>, այնինչ խոսքը կասկերի եղանակով թխված հացի մասին է:

7': Ա. Հագենբուխները տողի սկզբում առաջարկում է վերականգնել «պատրաստել/թխել» բայը:

8': *ueteni neya-* «ջրով/ջրի վրայով շարժել, շրջվել». նկատի ունի, որ նաև՞ը գնում է դեպի իր մեկնակետը:

10': Այս նախադասության բառացի թարգմանությունը այսպես է. «Նրանք նավերի վրա այսպես են դնում»:

19': Տողակզբի վնասված մասում *kinuša* «այժմ» բառի վերականգնումը Ա. Հագենբուխների կողմից ենթատեքստում դժվար է տեղավորել:

<sup>102</sup> CAD S: 114f.

<sup>103</sup> Puhvel 1991: 35ff.

<sup>104</sup> Hagenbuchner 1989: 136.

<sup>105</sup> Garstang and Gurney 1959: 33.

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍՈՒՊՊԻԼՈՒԻՈՒՄԱՍ Ի-Ի ԵՎ ՄԻՏՏԱՆԻ ԱՐՔԱ  
ՇԱՏՏԻՎԱԶԱՅԻ ՄԻՋԵՎ (KBo I 1 ԵՎ I 2)**

Այս պայմանագիրը<sup>106</sup> կնքվել է խեթական արքա Սուպպիլուլիումաս I-ի կողմից Միտտանիի նվաճումից հետո իր իսկ կողմից վերջինիս արքա հռչակված Շատտիվազայի հետ: Չնայած այս տեքստը կազմված է մ.թ.ա. XIV դարի երկրորդ կեսին, սակայն դրանում կարևոր տեղեկություններ են հաղորդվում Սուպպիլուլիումասի հոր՝ Թուխտալիյաս III-ի կառավարման շրջանում (ամենայն հավանականությամբ՝ սկզբնական փուլի) տեղի ունեցած մի իրադարձության մասին, որի ենթատեքստում հիշատակվում է Իսուվան: Խոսքը Հայկական լեռնաշխարհին արևմուտքից հարող Խաթթիի արևելյան շրջանների քնակչության փոխուստի մասին է դեպի Իսուվա: Մասնագիտական հրատարակություններում պայմանագրի այս հատվածը պայմանականորեն ստացել է «Իսուվական ցուցակ» անվանումը:

Սույն իրադարձությունը ժամանակագրորեն հեռու չէ Առնուվանդաս I-ի միանձնյա կառավարման շրջանում Հայկական լեռնաշխարհի արևմուտքի քաղաքական միավորների և խեթական տերության փոխհարաբերություններն արտացոլող տեքստերից<sup>107</sup>: Թուխտալիյաս III-ի կառավարման շրջանում Տերության ծայրաստիճան ծանր վիճակի, ինչպես նաև վերինեփրատյան ավազանի երկրների անջատողական միտումների մասին առկա են մի շարք տեքստեր<sup>108</sup>:

Սուպպիլուլիումաս I-ի և Միտտանիի արքա Շատտիվազայի միջև կնքված պայմանագիրում հաղորդվող տեղեկությունները էական ներդրում կարող են ունենալ Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների պատմության և աշխարհագրության ուսումնասիրման տեսանկյունից:

Պայմանագրի տեքստային կազմն այսպիսին է.

Աքքադերեն - KBo I 1; KBo I 2; KUB III 1a-d + KBo XXVIII 111 + 112 + 114 (+)113.

Խեթերեն - KUB XXI 28 (+) KUB XXVI 34.

Պայմանագրի խեթերեն տարբերակը պահպանվել է խիստ վնասված տեսքով, այդ իսկ պատճառով ստորև կներկայացնենք դրա քրքա-

<sup>106</sup> CTH 51. հրատ.՝ Weidner 1923: 2ff. [աքքադերեն տարբերակը]; Laroche 1969 [խեթերեն տարբերակը]; Beckman 1996: 38ff., N.6a (թարգմանաբար).

<sup>107</sup> Տես վերը՝ Գլուխ I. KUB XXIII 72+- և KUB XXXI 103:

<sup>108</sup> Այդ տեքստերը հրատարակվել և ուսումնասիրվել են տարբեր մասնագետների կողմից (տեքստերի գիտական հրատարակությունը և պատմագիտական մեկնաբանությունները տես Քոսյան 2016ա: 68-107):

դերն տարբերակը հատվածաբար: KՅօ I 2-ը (ինվենտ. համար՝ VAT 13024), որը KՅօ I 1-ի պատճենն է, խիստ վնասված է, ըստ այդմ ստորև տրվում է առավել լավ պահպանված KՅօ I 1-ը (ինվենտ. համար՝ Ծօ 69/299):

- 10) ..... a-na tar-ši a-bi-šu ša LUGAL KUR URU<sup>URU</sup>Ha-at-ti  
KUR URU<sup>URU</sup>I-šu-wa it-ta-kir
- 11) ÉRIN<sup>MES</sup> ša KUR URU<sup>URU</sup>Ha-at-ti i-na KUR URU<sup>URU</sup>I-šu-wa i-te-er-bu ÉRIN<sup>MES</sup>  
URU<sup>URU</sup>Gur-ta-li-iš-ša ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>A-ra-wa-an-na KUR URU<sup>URU</sup>Za-az-<zi>-ša
- 12) KUR URU<sup>URU</sup>Ka-la-aš-ma KUR URU<sup>URU</sup>Tim-na URU<sup>URU</sup>SAG<sup>URU</sup>Ha-li-wa URU<sup>URU</sup>SAG<sup>URU</sup>Kar-na  
ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Dur-mi-it-ta KUR URU<sup>URU</sup>Al-ḥa KUR URU<sup>URU</sup>Hu-ur-ma URU<sup>URU</sup>SAG<sup>URU</sup>Ha-ra-  
na
- 13) mi-iš-lu ša KUR URU<sup>URU</sup>Te-ga-ra-ma ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Te-pu-ur-zi-ia ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Ha-  
az-ga ú ÉRIN<sup>MES</sup> KUR URU<sup>URU</sup>Ar-ma-ta-na tar-ši a-bi-ia it-ta-ak-ru
- 14) ú URU<sup>URU</sup>UTU-ši Šu-up-pi-lu-li-u-ma LUGAL GAL UR.SAG LUGAL KUR URU<sup>URU</sup>Ha-  
at-ti na-ra-am URU<sup>URU</sup>id-du-uk-šu-nu-ti
- 15) a-ni-na ÉRIN<sup>MES</sup> ša i-na ŠU-ia iš-ti-ú ÉRIN<sup>MES</sup> an-nu-ú i-na KUR URU<sup>URU</sup>I-  
šu-wa i-te-ru-ub ú mi-nu-me-e ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>an-nu-tu<sub>4</sub>
- 16) ú KUR.KUR<sup>MES</sup> an-nu-tu<sub>4</sub> i-na tar-ši a-bi-ia it-ta-ak-ru ú e-bir-ti KUR  
URU<sup>URU</sup>I-šu-wa i-na ŠA-bi URU<sup>URU</sup>KUR aš-bu

- 17) ú URU<sup>URU</sup>UTU-ši Šu-up-pi-lu-li-u-ma LUGAL GAL LUGAL KUR URU<sup>URU</sup>Ha-at-ti  
UR.[SAG] na-ra-am URU<sup>URU</sup>at-ta-la-ak a-na mu-ul-tar-ri-ḥu-ut-[ti-š]u
- 18) [š]a URU<sup>URU</sup>Tu-uš-rat-ta LUGAL URU<sup>URU</sup>UD.KIB.NUN.NA e-te-bi-ir-ma a-na KUR URU<sup>URU</sup>I-  
šu-wa at-ta-lak ú KUR URU<sup>URU</sup>I-šu-wa i-na š[a-nu-ut]-ti-šu
- 19) el-te-e-šu-nu-ti i-na ša-nu-ut-ti-ia a-na ARAD<sup>MES</sup>-ia ut-te-er-šu-nu-ti  
ÉRIN<sup>MES</sup> ú KUR.KUR<sup>MES</sup> ša tar-ši a-bi-ia
- 20) i-na ŠA-bi KUR URU<sup>URU</sup>I-šu-wa i-te-er-bu ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Gur-ta-li-iš-ša ÉRIN<sup>MES</sup>  
URU<sup>URU</sup>A-ra-wa-an-na KUR URU<sup>URU</sup>Za-az-zi-ša KUR URU<sup>URU</sup>Te-ga-ra-ma!
- 21) KUR URU<sup>URU</sup>Tim-mi-na URU<sup>URU</sup>SAG<sup>URU</sup>Ha-li-wa URU<sup>URU</sup>SAG<sup>URU</sup>Kar-na ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Dur-mi-it-  
ta KUR URU<sup>URU</sup>Al-ḥa KUR URU<sup>URU</sup>Hu-ur-ma URU<sup>URU</sup>SAG<sup>URU</sup>Ha-ra-na
- 22) ½ ša KUR URU<sup>URU</sup>Te-ga-ra-ma ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Te-pu-ur-zi-ia ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Ha-az-  
ga ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>Ar-ma-ta-na ÉRIN<sup>MES</sup> an-nu-tu<sub>4</sub> ú KUR.KUR<sup>MES</sup>
- 23) ul-la-tu<sub>4</sub> al-te-e-šu-nu-ti a-na KUR URU<sup>URU</sup>Ha-at-ti ut-te-er-šu-nu-ti  
KUR.KUR<sup>MES</sup> ša al-qú-ú um-te-eš-šer-šu-nu-ti a-na aš-ri-šu-nu-ma
- 24) it-ta-aš-bu ú mi-nu-me-e ÉRIN<sup>MES</sup> ša ú-me-eš-šer-ru a-na ÉRIN<sup>MES</sup> URU<sup>URU</sup>šu-nu-  
ma i-te-er-bu ú KUR URU<sup>URU</sup>Ha-at-ti aš-ri-šu-nu-ma iš-ša-bat

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

- 10) ..... խաթթիի արքայի հոր օրոջ Իսուվան թշնամացալ:
  - 11) խաթթիի բնակչությունը գնաց Իսուվա՝ Գուրտալիսսայի զորքը, Արավաննայի զորքը, Չազգիսան,
  - 12) Կալասման, Տիմնան, Խալիվան, Կարնան, Դուրմիտտայի զորքը, Ալխան, Խուրման, Խարանա լեռը,
  - 13) Թեզարամայի կեսը, Տեպուրգիայի զորքը, Խազգայի զորքը [և] Արմատանայի զորքը իմ հոր օրոջ թշնամի դարձան:
  - 14) Եվ ես՝ Արևը, Սուպալիլուլիումասը, հեբոսը, խաթթիի արքան, Ամպրոպի աստծո սիրելին, հաղթեցի նրանց:
  - 15) Հիմա զորքերը, ովքեր փախան իմ ձեռքից, այդ զորքերը մտան Իսուվա և բոլոր այդ զորքերը
  - 16) և այդ երկրները, որոնք իմ հոր օրոջ թշնամացել էին [և] ապրում էին Իսուվայից այն կողմ՝ թշնամիների մեջ:
- 
- 17) Եվ ես՝ Արևը, Սուպալիլուլիումասը, հեբոսը, խաթթիի արքան, Ամպրոպի աստծո սիրելին, դուրս եկա Տուշրատտա արքայի
  - 18) մեծամտության դեմ: Ես անցա Եփրատը և դեպի Իսուվա գնացի և երկրորդ անգամ Իսուվային
  - 19) հաղթեցի, երկրորդ անգամ նրանց իմ ստրուկները դարձրեցի: Այն զորքերը և երկրները, որոնք իմ հոր օրոջ
  - 20) գնացել էին Իսուվա՝ Գուրտալիսսայի զորքը, Արավաննայի զորքը, Չազգիսան, Կալասման!,
  - 21) Տիմնիան, Խալիվան, Կարնան, Դուրմիտտայի զորքը, Ալխան, Խուրման, Խարանան,
  - 22) Թեզարամայի կեսը, Տեպուրգիայի զորքը, Խազգայի զորքը, Արմատանայի զորքը, այս զորքերին և երկրներին
  - 23) ես հաղթեցի և նրանց խաթթի վերադարձրեցի: Այն երկրները, որոնք գրավեցի, ես ազատ արձակեցի, նրանք իրենց նախկին բնակավայրերում
  - 24) հաստատվեցին: Բոլոր ժողովուրդներին ում ես ազատեցի, իրենց ժողովուրդների մոտ գնացին և խաթթին միացրեց և նրանց տարածքը վերցրեց:

**11:** ÉRIN<sup>MES</sup> «զորք, ջոկատ; ռազմական ճամբար; բազմություն»<sup>109</sup> բառը (խեթ. *tuzzi-*) սովորաբար թարգմանվում է «որպես ջոկատ, զորք», ինչը մեր տեքստի պարագայում այնքան էլ նպատակահարմար չէ կիրառել. *tuzzi-*-ի համար առ այսօր առաջարկված հնդեվրոպական զուգահեռները (զոթ. *piuda* «ժողովուրդ», հին իլլանդ. *tuath* «ժողովուրդ, ցեղ» և այլն)<sup>110</sup>, անկախ որոշ լեզվաբանների ժխտողական վերաբերմունքին, առավել քան համոզիչ են: Կաղ պետականության փուլում կենտրոնի ենթակայության տակ ապրող տոհմացեղային հասարակությունում համայնքի յուրաքանչյուր անդամ թե երկրագործ ու անասնապահ էր, թե անհրաժեշտության դեպքում զինվոր: Կարծում ենք, որ իրավացի են այն մասնագետները, ովքեր ÉRIN<sup>MES</sup>-ը թարգմանում են որպես «ժողովուրդ»<sup>111</sup>:

Այլ հարց է, թե ինչու թվարկվող տեղանունների քնակչությունը մասամբ նշվում է որպես «ժողովուրդ» (ÉRIN<sup>MES</sup>), մասամբ էլ տրվում է միայն տեղանունը (երկիր կամ լեռ): Ենթադրելի է, որ պատճառը վերոհիշյալ շրջանների քնակչության սոցիալական կազմակերպման աստիճանն է, ինչը աղբյուրների անբավարարության պատճառով առայժմ դժվար է մեկնաբանել: Կամ, հնարավոր է, գրիչը ÉRIN<sup>MES</sup>-ով նշված շրջանները ներկայացված են եղել, խաղաղ քնակչությունից զատ, նաև զորացրկատներով (կամ միայն զորացրկատներով), այնինչ այս գաղափարագրի բացակայությունը վկայում է, որ որոշ դեպքերում Իսուվա էր փախել ողջ քնակչությունը:

**12, 21:** Տեքստի երկու հատվածներում միևնույն տեղանունը տարբեր կերպ է գրված՝ KUR <sup>URU</sup>Tim-na և KUR <sup>URU</sup>Tim-mi-na: Հնարավոր է, այդ տարբերությունը բացատրվում է սույն տեղանվան արտասանական առանձնահատկություններով, այլ ոչ գրչի բացթողումով:

**16:** ·ù· e-bir-ti KUR <sup>URU</sup>·l·-zu-wa i-na ŠÁ-bi <sup>LU</sup>KÚR aš-bu «[և] ապրում էին Իսուվայում՝ թշնամիների մեջ»: Գ. Բեքմանը այսպես է թարգմանել այս հատվածը, ինչը կասկածի տակ է առնում Ա.Ալտմանը, գտնելով, որ, հնարավոր է, խոսքը հենց Իսուվայի մասին է, այն է՝ գետից (Եփրատից) այն կողմ: Տեքստում «գետ» բառը բացակայում է, ինչը լուրջ խոչընդոտ է նման ենթադրության համար:

<sup>109</sup> Tischler 2001: 222.

<sup>110</sup> Քննարկումը տես Kloekhorst 2008: 908:

<sup>111</sup> Weidner 1923: 5; Altman 2001: 16 և այլն:



**20:** Այս տողում գրված է KUR <sup>180</sup>Te-ga-ra-ma, սակայն մինևույն ցուցակի առաջին ներկայացման դեպքում (տողեր 11-13) նրա փոխարեն առկա է KUR <sup>180</sup>Ka-la-aš-ma, ընդ որում Թեգարաման 22-րդ տողում թվարկվում է իր իսկ տեղում, այնինչ Կալասման բացակայում է. Սա միանշանակ գրչի վրիպումն է:

**23-24:** Այստեղ ներկայացված իրադարձությունը պարզ է, չնայած առկա է մեկ անորոշ ձևակերպում: Խոսքը հաթթիից փախած բնակչության՝ իրենց նախկին բնակավայրեր վերադարձնելու մասին է, սակայն ինչ կարող է նշանակել նվաճված երկրները ազատ արձակել, պարզ չէ:

Տեղանունների այս ընդարձակ ցուցակը<sup>112</sup> կարևոր է մի շարք նկատառումներով: Սրանց մեծ մասը, հաշվի առնելով դրանց հիշատակությունները խեթական այլ տեքստերում, պետք է գտնվեր վերինեփրատյան գոտու անմիջական հարևանությամբ (կամ առնվազն առաինյա գոտուց ոչ շատ հեռու)՝ Եփրատի մեծ կեռմանից հարավ ընկած գծից արևմուտք (ընդհուպ մինչև Հայկական Տավրոսի հարավ-արևմտյան հատվածը), ներառելով ժաման. էջիստանի շրջանը: Դրանք հետևյալներն են՝ Arawanna, Zazziša, Alha, Hurma, Harana, Tegarama, Armatana, չնայած նախկինում սրանց տեղադրության հարցում կային տարածայնություններ<sup>113</sup>: Սրանց կարելի է ավելացնել Terpurziya-ն<sup>114</sup>, որը հայտնի է միջինասորեստանյան տեքստերից և Karna-ն, որը պետք է նույնական լիներ ուրարտական տեքստերի Karniše լեռնանվանը<sup>115</sup>:

Մնացած տեղանուններից Kalašma-ն և Durmitta-ն, խեթական մյուս տեքստերի լույսի ներքո ավելի շուտ նշում են Փոքր Ասիայի հյուսիսային, հյուսիս-արևմտյան շրջանները: Ինչ վերաբերում է մյուս երեքին (Halwa, Gurtališša, Timna/Timina), ապա սրանք այլ տեքստերում այլևս վկայված չեն:

Տեքստի քննարկվող հատվածի մեկնաբանության տեսանկյունից կարևոր են երկու նկատառումներ:

**Ա. Խաթթիի բնակության մուտքը Իսուվա.** Այս խնդիրը հանգամանորեն քննարկող Ա. Ալտմանը գտնում է, որ տեքստում ոչ մի խոսք

<sup>112</sup> Ցուցակում ներկայացված տեղանունների քննարկումը տես Cornelius 1958: 239ff.; Гюпрадзе 1961: 174ссл.

<sup>113</sup> Մասնավորապես, Arawanna-ն առաջարկում էին տեղադրել Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում՝ (Gurney 1940: 102) կամ արևմուտքում (Cornelius 1967: 65; 1973: 38f.):

<sup>114</sup> RGTC 6.1-ում՝ <sup>114R</sup>Tipurziya (S.426). Ա. Գյոթցեն առաջարկել էր մոտավորապես փնտրել Փոքր Ասիայի հարավ-արևելքում (Goetze 1960: 40): Համադրությունը միջինասորեստանյան թագավորության արքա Թուկուլթի-Նինուրտա Ի-ի տեքստերում հիշատակվող <sup>114R</sup>Terpurzi-ի հետ (RGTC 5: 260) կարող է հիմնավորել այս երկրանվան արևելյան տեղադրության մասին ենթադրությունը (ասորեստանյան Terpurzi-ն հիշատակվում է որպես Սուրարտուի երկիր, այն է՝ ինչ-որ տեղ Հայկական Տավրոսի լեռնազանգվածում):

<sup>115</sup> Սարդուրի II-ի տեքստում (Арутюнян 2001: NN.242 և 244) Karniše-ն հիշատակվում է Մալաթիայից ոչ հեռու: Այն ժամանակին համադրվել է Պևտիսկերյան քարտեզի Corni-ի հետ, Մալաթիայից 12 կմ հեռավորության վրա (Adontz 1946: 199; Astour 1979: 4; Арутюнян 1985: 103) (տես նաև RGTC 9: 48):

չկա այն մասին, որ խուսվացիները միացել էին այս փախստական բնակչությանը և նրանց հետ հեռացել «թշնամական» տարածք, բացի այդ խեթական արքան հենց Իսուվայի տարածքում էր կարողացել հասնել նրանց և վերադարձնել իրենց բնակավայրերը, այսինքն փախստականները մնացել էին Իսուվայում, որտեղ էլ Սուպպիլուիումասը նրանց բռնել և վերադարձրել էր: Սրանից նա եզրակացնում է, որ Իսուվան նախքան խեթական զորքի մուտքը Իսուվա, սկսած Թուդխալիյաս III-ի կառավարման այն շրջանից, երբ և հարևան երկրները սկսեցին հարձակվել Խաթթիի վրա<sup>116</sup>, խեթերի տեսանկյունից պետք է համարվեր «թշնամական» երկիր<sup>117</sup>:

Այս խնդրի առնչությամբ անհրաժեշտ է հղել Սուպպիլուիումասի հաջորդ Մուրսիլիս II-ի օրոք կազմված «Սուպպիլուիումասի գործունեությունը» պայմանական անվանումը կրող տեքստերից մեկը, որը, մեր կարծիքով, ներկայացնում է միևնույն իրադարձությունը, այն է՝ խեթական զորքի մուտքը Իսուվա, այնուհետև խեթական փախստական բնակչության հետապնդումը և վերադարձնելը իրենց բնակավայրեր<sup>118</sup>:

Դա «Դիպված 25»-ն է<sup>119</sup>, որտեղ հստակ նշվում է փախստականների հետապնդման մասին: Սակայն այստեղ խոսք չկա վերջիններիս՝ Միտտանի գնալու մասին, ինչը թեականորեն ենթադրվում է ոմանց կողմից<sup>120</sup>: Մուրսիլիսի օրոք կազմված տեքստում ներկայացվում է միանգամայն այլ ուղղություն՝ Հայասա: Չնայած մասնակի վնասվածքներին, նպատակահարմար ենք համարում մեջքերել այս տեքստի համապատասխան հատվածը թարգմանաբար.

- 18') [.....] նա [.....]-եց: Բայց հայրս  
 19') [.....]-ի դեմ վրեժ  
 20') [....] նա Ծովսխապա [երկիր] գնաց և այն  
 21') [իրդեհեց]: [Ինչ որ] կար [քաղաքի] շրջակայքում,  
 22') նա [իրդեհեց]: Եվ Ծովսխապա քաղաքը  
 23') [ամբողջությամբ] նա իրդեհեց: Բայց վերաբնակիչները  
 24') [.....] Հայասա գնաց  
 25') [.....]-աց(ին) և նրանք Լախսա լեռից/լեռներից

<sup>116</sup> Այսպես կոչված «շրջանաձև ներխուժումը» (CTH 88, ամբողջական հրատ.՝ Քոսյան 2016ա: 69-81):

<sup>117</sup> Altman 2001: 17ff.

<sup>118</sup> Այդ տեսակետն առաջինը արտահայտել է Հ.Գ. Գյուտեբրոկը (Güterbock 1956: 46):

<sup>119</sup> Հրատարակությունը և մեկնաբանությունները տես Քոսյան 2016ա: 96-101:

<sup>120</sup> Altman 2001: 15.

- 26) [.....]-եցին:  
 27) [....] որ Իսուվայում էր [.....]  
 28) [.....] նրանք պատկանում են Խաթթիին:  
 29) [.....] ինչ-որ բան ինչ-որ մեկին  
 30) [.....] Նույնիսկ ծմռանը նա գնաց  
 31) [և .....]-seni [քաղաքին] հարվածեց: Եվ վերաբնակիչներին,  
 32) [կովեր, ոչխարներ [և] բրոն]զե [անոթներ?] որ զորքը  
 33) [... X երկրում] իր ետևում թողել էր,  
 34) [այդ բրոնզ]ե անոթները այնտեղից բերեց:  
 35) [.....] նա եկավ և Ի[սուվ]այում .....

Վերը հղված տեքստը ուղղակիորեն վկայում է այն մասին, որ Իսուվայից խեթական արքան շարժվել է դեպի Ծուխխապա, այնուհետև՝ փախստականներին հետապնդելով ընթացել Հայասա, անցնելով այլ աղբյուրներում չվկայված Լախա լեռը/լեռները: Ընդ որում նշվում է, որ արշավանքն ընթացել էր ծմռանը, ինչը նշանակում է, որ դրա անհրաժեշտությունը զգացվել է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեպի Հայասա վերոհիշյալ արշավանքից առաջ տեքստը արդեն հիշատակել էր Իսուվայում գտնվող Խաթթիի բնակիչներին իրենց բնակավայրեր վերադարձնելու մասին, ապա կարող ենք եզրակացնել, որ նրանցից ոչ բոլորն էին համաձայնվել վերադառնալ և հեռացել էին Հայասա:

Այս առնչությամբ հետաքրքիր տեղեկություն է պահպանել Սուպպի-լուփումասի և Հայասայի արքա Խուկկանայի պայմանագիրը: Վերջինիս եզրափակիչ տողերում ուղղակի նշվում է Հայասայում խեթական բնակչության առկայության մասին, ում Սուպպիլուփումասը պահանջում է ետ վերադարձնել<sup>121</sup>: Նշանակում է, Խուկկանայի հետ պայմանագրի կնքման պահին խեթական փախստական բնակչության մի մասը արդեն ապրում էր Հայասայում: Սակայն Խուկկանայի պայմանագրի կնքման ժամանակի պարզաբանման բարդությունները նման ենթադրությունը որոշակիորեն կասկածի տակ են առնում:

Եթե Խուկկանայի պայմանագիրը իրոք կնքվել է Սուպպիլուփումասի Խուվական և դրան հաջորդող միտտանական արշավանքներից

<sup>121</sup> 84) [Ո]վ Խաթթիի բնակիչներին ետ չտ[ա, այլ նրանց (իր) սահմաններում] 85) թաքցնի, դու՛ Խուկկանա, նրան բռ[նի]ր, հետո ասա.] 86) «Ինչու նրան(ց) ետ չեք տա[լիս»: Նրա վրա զայրացի[ր]:

ոչ շատ առաջ<sup>122</sup>, ապա իրոք կարելի է ենթադրել, որ խեթական փախչու-տականները հասել էին Հայաստան Սուպպիլիուլիումասի հարձակման հետևանքով: Սակայն հաշվի առնելով, որ վերջիններս հաթթիից հեռացել էին դեռևս արքայի հոր օրոք (Թուդխալիյաս III), ապա մեր պարագայում հնարավոր է ենթադրել փախստականների մեկ այլ, ավելի վաղ ալիք, ինչի մասին նշվում է Խուկկանայի պայմանագրում:

### **Բ. Խաթթիի բնակչության հեռանալու պատճառները**

Առայժմ այս խնդրի վերաբերյալ մասնագիտական հրատարակություններում որևէ մասնավոր ուսումնասիրություն չի կատարվել: Առնուվանդաս I-ի կառավարումից հետո մինչև Սուպպիլիուլիումաս I-ի կողմից խեթական տերության տարածքային ամբողջականության վերականգնումը, այն է՝ մոտավորապես մ.թ.ա. XIV դարի առաջին կեսի ընթացքում խաթթիում բազմիցս վկայված ներքաղաքական բարդություններին անդրադարձող բոլոր մասնագետները նշում են գահակալական պայքարը, ինչպես նաև Թուդխալիյաս III-ի կառավարման առաջին փուլում հարևան երկրների հարձակումները, որոնց հետևանքով Տերությունը հայտնվեց ծայրաստիճան բարդ իրավիճակում և նույնիսկ Թուդխալիյասը ստիպված էր ժամանակավորապես հեռանալ մայրաքաղաք Խաթթուսասից և հանգրվանել Սամուխա քաղաքում<sup>123</sup>: Սակայն այնուամենայնիվ, առկա են մի շարք տեքստեր, որոնք ուղղակիորեն նշում են այդպիսի իրավիճակի հնարավոր պատճառները<sup>124</sup>:

Խաթթիի աստվածներին ուղղված Մուրսիլիս II-ը աստվածներին ուղղված մի աղոթքի տեքստում<sup>125</sup> արքայի պապի (Թուդխալիյաս III) օրոք հիշատակվում է մեծաքանակ բնակավայրերի ամայացումը՝ երկրում մոլեզվող համաճարակի և սովի պատճառով: Նույնը նաև Նրա մյուս աղոթքում<sup>126</sup>, որտեղ խոսվում է շուրջ 20 տարի տևած համաճարակի պատճառած խոշոր վնասների մասին:

<sup>122</sup> Խուկկանայի պայմանագրի կնքման ժամանակի և Հայաստանում խեթական բնակչության առկայության մասին տես Kosyan 2013-2014: 129ff., նաև Քոսյան 2016ա: 127-128, 134-139:

<sup>123</sup> Klengel et al. 1999: 131ff.; Bryce 2005: 145ff. և այլն:

<sup>124</sup> Տես Քոսյան 2016ա: 111-113:

<sup>125</sup> KUB XIV 13 + KUB XXIII 124 (= CTH 378.IV. հրատ.՝ Götze 1930: 242ff.; Lebrun 1980: 220ff.; Singer 2002: 64ff. [N.14]):

<sup>126</sup> Այսպես. «[Մարդիկ մահանում էին] իմ հոր ժամանակ, մահանում էին իմ եղբոր [Առնուվանդաս II-ի - Ա.Ք.] ժամանակ, նրանք շարունակում են մահանալ [իմ ժամանակ]: ... Արդեն 20 տարի խաթթիում [մեծ քանակությամբ] մարդիկ

Իրոք, դժվար է պատկերացնել ներքաղաքական և արտաքին քաղաքական բարդ իրավիճակում գտնվող Խեթական տերության տարբեր շրջանների բնակչության ներհուսքը դեպի Իսուվա առանց հիմնավոր պատճառների: Նշանակում է, բնակչությունը ուղղակի լքում էր իր բնակավայրերը և տեղաշարժվում դեպի մի տարածաշրջան, որտեղ, հնարավոր է, համեմատաբար նպաստավոր պայմաններ կային նրանց կենսագործունեության ապահովման համար:

---

մահանում են: Խաթթին շատ է տուժել՝ համաճարակից» (Singer 2002: 56 [N.10]): Նույնը կրկնվում է նաև նրա մեկ այլ աղոթքում (Singer 2002: 57 [N.11]):

**ԳԼՈՒԽ III**  
**ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ**  
**ԵՐԿՐՆԵՐԸ Մ.Թ.Ա. XV ԴԱՐՈՒՄ**

**ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. XV ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

Խեթական տերության շուրջ մեկ դար տևած ներքաղաքական անկայությունը, որը սկսվել էր Մուրսիլիս I-ի սպանությունից հետո, ժամանակավորապես ավարտվեց Թուդխալիյաս II-ի<sup>127</sup> կառավարման շրջանում: Դատելով Թուդխալիյասի «Տարեգրություններից»<sup>128</sup>, իր կառավարման հենց առաջին տարում արքան ձեռնարկեց լայն նվաճողական քաղաքականություն տարբեր ուղղություններով: Ամենայն հավանականությամբ, այդ արշավանքների իրական դրդապատճառը նախորդող փուլում Խաթթիի հարևանների ռազմաքաղաքական ակտիվությունն էր, որի հետևանքով խեթերի բնօրրանը՝ Հայիս գետի հոսանքով պարփակված շրջանը հայտնվել էր մեկուսացման մեջ, կորցնելով ժամանակի կարևորագույն առևտրական և ռազմավարական ուղիների նկատմամբ ունեցած վերահսկողությունից:

Գահին հաստատվելուց հետո Թուդխալիյասի առաջին գործը եղավ խեթական գերիշխանությունը Փոքր Ասիայի արևմտյան հատվածում ամրապնդելը: Նա իր կառավարման առաջին տարիներին չորս արշավանքներ ձեռնարկեց այդ ուղղությամբ<sup>129</sup>: Դրանք, եթե վստահենք «Տարեգրություններին», ավելի շատ պատասխանն էին արևմտափոքրասիական երկրների ագրեսիվ գործողություններին կանխարգելիչ բնույթ ունեին, քանի որ այս տարածաշրջանի երկրները նախկինում թշնամական գործողությունների էին ծավալել Խաթթիի դեմ<sup>130</sup>: Թուդխալիյասի արշա-

<sup>127</sup> Խեթական Միջին թագավորության արքայացանկը առ այսօր ճշգրտման կարիք ունի: Ներկայումս պարզ չէ, մասնավորապես, արդյոք մ.թ.ա. XV դ. երկրորդ կեսին կառավարած Թուդխալիյասը այս անունով Խաթթիի որերորդ արքան էր: Խնդրի քննարկումը տե՛ս Forlanini 1995: 129f. (նա Թուդխալիյաս անունով առաջին արքային տեղադրում է մ.թ.ա. XVII դ. սկզբներին); Carruba 1998: 87-107; Freu 2003: 55-79:

<sup>128</sup> Sbu Carruba 1977:

<sup>129</sup> Արշավանքների ընթացքի մասին համառոտ տես Bryce 2005: 124ff.

<sup>130</sup> Թուդխալիյասը նշում է իր «Տարեգրությունների» հենց սկզբում, որ երբ ինքը հոր մահից հետո դեռևս անչափահաս էր, Արցալայի արքան թշնամական գործողություններ էր ծավալել Խաթթիի դեմ (KUB XXIII 27 Դ4 2-13): Արցալայացիների կողմից տուժած (հավանաբար, նվաճված) երկրների շարքում թվարկ-

վանքների արդյունքում հնազանդեցվեցին «Աստուվա» հավաքական անվանումը<sup>131</sup> կրող քսաներկու երկրներ<sup>132</sup>: Խեթական արքան բազմահազար գերիներ և ավար ձեռք բերեց, նաև իր հետ մայրաքաղաք Խաթթուսաս տարավ նվաճված երկրների զինական ուժը<sup>133</sup>:

Թուղթալիյասի կողմից Խաթթուսաս բերված գերիների մեջ էր նաև Պիյամա-Կուրունտան, որը, հավանաբար, աստուվան երկրների դաշինքի առաջնորդն էր: Թուղթալիյասը գերել էր նաև Նրա որդուն՝ Կուկկուլլիին, որին շուտով Խաթթիի արքան ազատ է արձակում և որպես ենթակա կառավարիչ նշանակում Փոքր Ասիայի արևմուտքի

---

վում են երեքը (մյուսների անվանումները կորսված են կամ վնասված)՝ Šariyanda, Uliwanda, Pašuhalda. «Տարեգրությունների» մասը կազմող մեկ այլ տեքստում երրորդ անունը տրված է որպես Pašuhalta (թուրք երեքն էլ տեղադրվում են Հայսի հոսանքից արևմուտք):

<sup>131</sup> «Աստուվա» տերմինը, ըստ մի շարք մասնագետների (Jewell 1974: 288 n. 3; Güterbock 1986: 40 n. 20; Cline 1996: 141-142; Starke 1997: 456; Niemeier 1999: 145; Bryce 2005: 125), մի կոնկրետ քաղաքական միավորի անվանում չէ, այլ նշում էր Փոքր Ասիայի արևմուտքում, էգեյան ծովափին հարող շրջանները: Հետագայում այն աստիճանաբար դուրս եկավ շրջանառությունից, կապված այստեղ խեթերից կախյալ մի շարք պետությունների գոյության հետ. այսուհետև խեթական կայսերական դիվանի գրիչները այստեղ հիշատակում էին միայն կոնկրետ պետություններ: Կարծիք է հայտնվել այն մասին, որ Աստուվայի անունը կարող էր պահպանվել քնակության հիշողության մեջ և վերակենդանանալ արդեն հռոմեական դարաշրջանում ի դեմ Ասիա անվան, որն ընդգրկում էր հիմնականում Պերգամոնի կախյալ թագավորությունը իր հարակից շրջաններով (Նախկին Կարիան, Լիդիան, Փոյուզիան և Հոնիան):

<sup>132</sup> [...Jugga, Kišruwa, Unaliya, [ ], Dura, Ḫalluwa, Ḫuwallušiya, Karakiša, Dunda, Adadura, Parišta, [ ], [ ]-waa, Waršiya, Kuruppiya, [ ]Lušša), Alatra(?), Paḫurina լեռան երկիր, Pašuhalta, [ ], Wilušiya, Taruša (Carruba 1977: 158): Այս ցուցակի առաջին, վնասված երկրանունը թերևս պետք է Lukka-ն լիներ (անտիկ աղբյուրների Լիկիան). Լուկկա երկրի տեղադրության վերաբերյալ տե՛ս Bryce 1974: 395ff.; Lukka 1992: 121ff.: Ինչ վերաբերում է ցուցակը եզրափակող երկու երկրներին (Wilušiya, Taruša), ապա վաղուց ի վեր կարծիք է հայտնվել, որ սրբաբ հոմերոսյան էպոսներից հայտնի (4)լիտեի և Տրոյայի անվանումներն են (Forrer 1924; Kretschmer 1924: 205ff.; Huxley 1960: 34; Meyer 1975: 163; Singer 1983: 215; Güterbock 1986: 33ff. և այլն: «Տրոյական պատերազմի պատմականության մասին» տես վերը հղված ուսումնասիրությունները, նաև Քոսյան 1997; 1999: 43-50; Bryce 2005: 357ff.:

<sup>133</sup> «Տարեգրություններում» այս վերջին արշավանքի առնչությամբ նշվում են 10.000 զինվորներ և մարտակառք վարող 600 կառավարներ (KUB XXIII 11/12 ԴԿ II 34-35, ՀԿ III 5-6):



երկրներից մեկում<sup>134</sup>: Սակայն Կուկուպլին խոսվածություն է բարձրացնում խեթերի դեմ, պարտություն կրում և սպանվում<sup>135</sup>:

Թուլխայիյասի արևմտյան արշավանքների ընթացքում գրանցված հաջողությունները ժամանակավոր էին և ոչ հաստատուն: Ինչպես ցույց տվեցին նույն արքայի և նրա հաջորդ Առնուվանդաս I-ի օրոք ծավալված իրադարձությունները, արևմուտքում խեթերը դեռևս շատ հեռու էին հիմնավոր վերահսկողություն հաստատելուց: Նման եզրահանգման կարելի է գալ «Մադդուվատտասի մեղանչանքը» պայմանական անունը կրող տեքստի<sup>136</sup> հիման վրա: Այն ունի նամակի տեսք՝ գրված Թուլխայիյասի հետ գահակից Առնուվանդասի կողմից:

Մադդուվատտասը՝ նամակի հասցեատերը, ընտանիքի հետ փախել էր իր երկրից (Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող լուվիական երկրներից մեկը), հավանաբար, «Ախխիյա երկրի մարդ» Ատտարիսսիյասի հետ խնդիրներ ունենալու պատճառով<sup>137</sup>: Թուլխայիյասը նրան նշանակում է լեռնային Ցիպպասլա երկրի կառավարիչ: Սակայն շուտով պարզ է դառնում, որ Մադդուվատտասն ուներ իր սեփական նպատակները, որոնք հակադրվում էին այն պայմաններին, որ նրա վրա դրվել էր Թուլխայիյասի կողմից: Հավանաբար, նա ցանկանում էր ստեղծել իր սեփական անկախ թագավորությունը: Մադդուվատտասը երգվել էր նաև շփում չունենալ Կուպանտա-Կուրունտայի և Ատտարիսսիյասի՝ Խաթթիի թշնամիների հետ: Սակայն Մադդուվատտասը դրժում է իր երդումը: Նա նույնիսկ ներխուժել էր Արցալա երկիր: Սակայն նրա ձեռնարկումներն ընդդեմ Արցալայի ավարտվել էին անհաջողությամբ: Նրա բանակը ջախջախվեց, իսկ կառավարած երկիրը ենթարկվեց հարձակման Կուպանտա-Կուրունտայի կողմից, և նա ստիպված փախուստի դիմեց:

Թվում էր, թե սա Մադդուվատտասի գործունեության ավարտը կարող էր լինել, սակայն խեթական զորքը օգնության է գալիս և վտարում Կուպանտա-Կուրունտային: Թուլխայիյասը վերականգնում է Մադդուվատտասին իր տեղում և ներում նրան ինքնագործունեության համար: Այս իրադարձություններին հաջորդում է Ախխիյավայից Ատտարիս-

<sup>134</sup> Հավանական է ենթադրել, որ այդ երկիրը կարող էր լինել հենց Արցալան, սակայն «Տարեգրությունների» սկզբում Խաթթիի դեմ ռազմական գործողություններ սկսած Արցալայի արքայի անունը չի պահպանվել:

<sup>135</sup> KUB XXIII 11/12 C4 III 4-8.

<sup>136</sup> Götte 1928. Sb' u նաև Beckman 1996: 144ff. (թարգմանություն).

<sup>137</sup> Սա, փաստորեն, խեթական արքյուրներում առաջին հիշատակությունն է Ախխիյա(վա) երկրի մասին: Տեղանվան Ախխիյա կարճ զրելածնը հայտնվում է միայն այս և գուշակային KBo XVI 97 (= CTH 571.2) տեքստում (Güterbock 1983: 134; Gurney 1990: 38):

սիյասի հարձակումը Մադդուվատտասին ենթակա տարածքների վրա: Հերթական անգամ խեթական զորքը օգնության է գալիս Կիսնապիլի զորավարի գլխավորությամբ և կարգուկանոն հաստատում տեղում: Խեթերին հաջողվում է նորից վերականգնել Մադդուվատտասին իր գահին: Կիսնապիլիի զորքը մնում է տարածաշրջանում, հավանաբար և՛ հերթական գրոհները ետ մղելու, և՛ ենթակա կառավարչին վերահսկելու համար:

Սա առաջացնում է Մադդուվատտասի դժգոհությունը, և նա որոշում է ամեն գնով ազատվել խեթական ներկայությունից: Մադդուվատտասին հաջողվում է հանկարծակի հարձակումով պարտության մատնել խեթական զորքին, այնուհետև պայմանագիր կնքել իր նախկին թշնամու՝ Կուպանտա-Կուրունտայի հետ, որն ամուսնանում է Մադդուվատտասի դստեր հետ: Մադդուվատտասը հետագայում արդարանում է, ասելով, որ խնամիական կապերի հաստատումը Կուպանտա-Կուրունտայի հետ դիվանագիտական քայլ էր՝ բթացնելու հակառակորդի զգուշությունը: Տեքստն այդ հատվածում ընդհատվում է:

Հավանաբար, Թուդիսայիյասը Մադդուվատտասին թողել էր իր տեղում՝ հույս ունենալով, որ նա կշարունակեր հավատարիմ մնալ իրեն: Մադդուվատտասը հետագայում ընդարձակում է իր տարածքները Խապալա և Լուկկա երկրների հաշվին: Խաթթիի արքա Առնուվանդասն անմիջապես պատվիրակներ է ուղարկում Մադդուվատտասի մոտ՝ պահանջելով վերադարձնել գրավյալ տարածքները: Մադդուվատտասը համաձայնում է վերադարձնել Խապալա երկիրը, սակայն հրաժարվում է հեռանալ իր գրաված մյուս տարածքներից և վերադարձնել խեթահպատակ փախստականներին: Ավելին, նա արշավանք է ձեռնարկում նաև դեպի Ալասիյա կղզի (Կիպրոս): Ծովային այդ արշավը կազմակերպվել էր Ատտարիսսիյասի հետ համատեղ, որի հետ մինչ այդ Մադդուվատտասին հաջողվել էր ձեռք բերել պայմանավորվածություններ: Ալասիյայի գրավումը դժգոհություն է առաջացնում Խաթթուսասում, քանի որ խեթերը այդ տարածքը համարում էին իրենցը: Մադդուվատտասն արդարանում է, որ տեղյակ չի եղել, որ այդ երկիրը խեթերինն է և համաձայնում է վերադարձնել խեթահպատակ գերիներին: Այնուամենայնիվ, Առնուվանդասը նախատում է Մադդուվատտասին՝ Ատտարիսսիյասին և Պիզգայա երկրի տիրոջը միանալու համար<sup>138</sup>:

Խեթերի՝ Մադդուվատտասի հանդեպ նման հանդուրժողական մոտեցման պատճառներից մեկը կարելի է համարել տերության մյուս սահմաններում տիրող անհանգիստ իրավիճակը, որը խեթերին թույլ չէր տա-

<sup>138</sup> Sb' u Beckman 1996: 144ff.:

լիս մեծաքանակ ուժեր կենտրոնացնել արևմտյան թևում: Խաթթիի արքաները փորձում էին եղած խնդիրները լուծել դիվանագիտական ճանապարհով: Այնուամենայնիվ, Մադդուվատտասի գործունեությունը, երա կողմից կախյալ պարտավորությունների պարբերական խախտումները լավագույն վկայություն են այն իրողության, որ Թուդխալիյաս II-ի օրոք Խեթական պետությունը դեռևս ի վիճակի չէր կայուն վերահսկողություն հաստատելու նվաճված երկրների նկատմամբ: Վերջինս կարող էր տեղ գտնել միայն կենտրոնի և ծայրագավառի միջև քաղաքական և տնտեսական ինտեգրման միջոցով, ինչը մ.թ.ա. XV դ. դեռևս սաղմնային վիճակում էր: Նվաճված երկրների նկատմամբ անկայուն գերիշխանության առկայության հաջորդ վկայությունը Վերին Եփրատի ավազանի երկրներում տեղի ունեցած իրադարձություններն են ի դեմս Պախխուվայի ապստամբության (տես ստորև տեքստում):

Արևմուտքում խնդիրները ժամանակավորապես կարգավորելուց հետո Թուդխալիյասն ուշադրությունը սևեռում է դեպի հյուսիս: Օգտվելով խեթական ուժերի կենտրոնացումից արևմուտքում՝ Արևելապոնտական լեռների կասկական ցեղերը ավարառուական արշավանք են ձեռնարկում դեպի Խաթթիի կենտրոնական շրջանները<sup>139</sup>:

Թուդխալիյասը ստիպված էր ուժերը կենտրոնացնել հյուսիսային ուղղությամբ և ռազմական հաջող գործողություններ իրականացնել կասկական ցեղերի կողմից քնակեցված շրջաններում: Փաստորեն, սա կասկերի վերաբերյալ խեթական տեքստերում ամենավաղ հիշատակությունն է<sup>140</sup>: Չնայած հաջողություններին, հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ կասկական վտանգը այդպես էլ չվերացավ Խեթական տերության հետագա պատմության ողջ ընթացքում:

<sup>139</sup> St' u Garstang and Gurney 1959: 122f.; Bryce 2005: 127: Առաջին աշխատությունում վերոհիշյալ իրադարձությունները վերագրվել են Թուդխալիյաս IV-ի ժամանակաշրջանին:

<sup>140</sup> KUB XXIII 36 + XXXI 35. St' u Klinger 2002: 437ff.; Matthews, Glatz: 2009: 56. Չնայած խեթական տեքստերից մեկում (KUB XXI 29) նշվում է, որ դեռևս Խաթթի արքա Խանտիլիս II-ի օրոք (մ.թ.ա. XV դ. սկիզբ) կասկերը հարձակվել էին խեթական տարածքների վրա և նվաճել Ներիկ և Տիլիուրա քաղաքները, սակայն այդ տեքստը ժամանակագրական առումով ավելի ուշ է գրվել՝ մ.թ.ա. XIII դարում՝ Խաթթուսիի III-ի օրոք (մ.թ.ա. 1267-1237 թթ.):

## ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԽԱԹԹԻԻ ԿՈՂՄԻՑ

Մինչև Նոր թագավորության կազմավորման շրջանը Խեթական տերության՝ արևելքում վարած ռազմաքաղաքական ձեռնարկումների մասին տեղեկությունները սուղ են: Դրանց մասին հնարավոր է ենթադրել Խաթթուսիլիս I-ի (մ.թ.ա. XVI դ. կեսեր) «Վեցամյա տարեգրություններում» Իսուվայի Խինձուտա քաղաքի<sup>141</sup> և «Ընդարձակ տարեգրություններում» նույն երկրի Խատրա քաղաքի<sup>142</sup> հիշատակության հիման վրա: Սակայն այս տեքստերը թույլ չեն տալիս ենթադրելու վերին-եփրատյան երկրների հիմնավոր նվաճում. Խաթթուսիլիսի և Մուրսիլիս I-ի նպատակակետը Հյուսիսային Սիրիան էր (Յամհադ) և Իսուվան այստեղ կարող էր երկրորդական դեր ունենալ:

Խաթթուսիլիսից և Մուրսիլիսից հետո Խեթական տերությունը շուրջ մեկ դար ի վիճակի չէր գաղվելու արևելքով՝ ներքաղաքական անկայունության պատճառով: Այս շրջանի տեքստերում արևելքում որոշ ազդեցության մասին են վկայում Թեգարամայի երկու հիշատակությունները «Տելեպիևուսի հուշակագրում»<sup>143</sup>: Երկու դեպքում էլ այս քաղաքը հանդես է գալիս Մուրսիլիսի հաջորդ Խանտիլիս I-ի՝ Հյուսիսային Սիրիայի խուրրիական իշխանությունների դեմ ռազմական գործողությունների համատեքստում<sup>144</sup>:

Մ.թ.ա. XV դ. երկրորդ կեսին իրադրությունը փոխվեց: Թուդխալիյաս II-ի «Տարեգրություններում» Իսուվան հիշատակվում է որպես Խաթթիի դեմ ապստամբած և Խուրրիի (=Միտտանի) օգնությունը ստացած երկիր, որը նվաճվել էր խեթերի կողմից<sup>145</sup>: Թուդխալիյասի և Կից-ցուվատնայի արքա Սունասուրայի միջև պայմանագրի<sup>146</sup> «պատմական

<sup>141</sup> KBo XXII 3 + KUB XXXVI(?) 103,7' (= CTH 14.II.A. հրատ.՝ Kühne 1972: 246f.):

<sup>142</sup> CTH 13 (հրատ.՝ Kempinski and Košak 1982: 92, 100f.):

<sup>143</sup> CTH 19 (հրատ.՝ Hoffmann 1984: 20ff.):

<sup>144</sup> Hoffmann 1984: 20, 23 (ԴԿ 39, 61).

<sup>145</sup> KUB XXIII 11/12 CԿ 27'-34' (= Carruba 1977: 161ff.): Այս նույն իրադարձության մասին է հաղորդում Թուդխալիյասի հաջորդ Անուվանդաս I-ի «Տարեգրությունը» (KUB XXIII 14 ԴԿ 1-8 = Carruba 1977: 172): Թուդխալիյասի արշավանքների մասին տես Houwink ten Cate 1970: 58ff.; Bryce 2005: 123ff. (համապատասխան հղումներով); Klengel 1999: 109ff.

<sup>146</sup> Պայմանագիրը (CTH 41 և 131) պահպանվել է աքքադերեն և խեթերեն տարբերակներով, որոնցից Իսուվայի նվաճումը հիշատակվում է առաջինում (Weidner 1923: N. 7, S. 88ff.; տեքստի ամբողջական թարգմանությունը՝ նոր կցաբեկորների ներառմամբ՝ Beckman 1996: N.2, 13ff.): Նախկինում Սուպպիլիուլիմաս I-ին վերագրվող այս պայմանագրի վերաթվագրման համար տես Beal 1986:

ներածականում» հիշատակվում են Իսուվայի նվաճման կարևոր մանրամասներ:

Դեպի Իսուվա կազմակերպած առաջին արշավանքից հետո, Խուրրիի արքա Սաուսատարը (նաև հիշատակվում է Սաուսատար ձևով) մտել էր Իսուվա և ավերել դրա քաղաքները: Այդ պահին Թուդխալիյասը գտնվում էր այլ վայրում. ավարտելով զործերը, նա երկրորդ անգամ է նվաճում երկիրը<sup>147</sup>:

Այս շրջանում Իսուվան, թերևս, միտաննամետ դիրքորոշում է ունեցել<sup>148</sup>: Նման ենթադրության օգտին հիմքեր կան: Առաջինը «Սունասսուրայի պայմանագրի» այն վկայությունն է, ըստ որի, Թուդխալիյասի արշավանքի ժամանակ իսուվացիների մի մասը հեռացել էր Խուրրիի և վերջինիս արքան հրաժարվել էր նրանց ետ վերադարձնել<sup>149</sup>: Այդ մասին են վկայում նաև ավելի ուշ շրջանի տեքստերը<sup>150</sup>: Ավելին, Միտտանիի զորքը հարձակվել էր Իսուվայի ուղղությամբ և ավարի մատնել այն՝ հավանաբար առաջնահերթ թիրախ դարձնելով խեթամետ իսուվական կենտրոնները<sup>151</sup>: Միտտանական զորքի հարձակման ժամանակ Թուդ-

---

432ff.; Wilhelm 1988: 359ff.: Սակայն համեմատաբար վերջերս առաջարկվեց այն թվագրել Թուդխալիյաս III-ի ժամանակով (Houwink ten Cate 1998: 52):

<sup>147</sup> «Սունասսուրայի պայմանագրում» հիշատակվող առաջին արշավանքը, հավանաբար, այն էր, որը վկայված է Թուդխալիյասի «Տարեգրությունների» հիւնգերորդ տարում (Houwink ten Cate 1970: 59 n.14): Դժվար է ասել, թե որքան ժամանակ էր անցել երկու արշավանքների միջև:

<sup>148</sup> Klengel 1968: 65f.

<sup>149</sup> Տես վերը Գլուխ 2. «Պայմանագիր Թուդխալիյաս II-ի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի միջև» բաժինը:

<sup>150</sup> Այդ առումով հատկապես կարևոր տեղեկություն է հաղորդում Սուպալիուլիումաս I-ի և Միտտանիի արքա Շատտիվազայի միջև կնքված պայմանագիրը (Weidner 1923: N.1, S.2ff.; Beckman 1996: N.6A, p.38ff.): Այստեղ, այսպես կոչված «իսուվական ցուցակում» հիշատակվում են հաթթիի այն շրջանների քնակիչները, ովքեր Թուդխալիյաս III-ի օրոք հեռացել և ապաստանել էին Իսուվայում: Հենց այդ հանգամանքն էլ պատրվակ դարձնելով, Սուպալիուլիումասը նվաճում է Իսուվան, որից հետո հարևան Ալզին (Ալձնիք) և մտնում է Միտտանի (այդ մասին տես վերը՝ Գլուխ II. «Պայմանագիր Սուպալիուլիումաս I-ի և Միտտանիի արքա Շատտիվազայի միջև»): Սուպալիուլիումասի սիրիական պատերազմների մասին տես Klengel 1965: 31ff.; 1970: 218ff.; 1999: 155ff.; Bryce 1989: 19ff.; 2005: 155ff. (աղբյուրների և զրականության հղումներով); Freu 1992: 39ff.:

<sup>151</sup> Այդ իրադարձությունների մասին տեղեկություններ կան Թուդխալիյա II-ի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի միջև կնքված պայմանագրի պատմական ներածականում (տես՝ u KBo I 5+ 10-20 = CTH 41); նաև Goetze 1940: 37; Beckman 1996: 13ff.: Տեքստի վերաբերյալ տես Քոսյան 2018 (հրատ. ընթ.):

խալիասը, հավանաբար, զբաղված լինելով Արևմտյան Փոքր Ասիայում կամ հյուսիսում, ի վիճակի չէր եղել զորք ուղարկել արևելք:

Վերոհիշյալ աղբյուրները որևէ տեղեկություն չեն պահպանել արևելքում խեթերի նվաճումների աշխարհագրական շրջանակների մասին: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ Իսուվայի հարևանները նույնպես պիտի նվաճված լինեին<sup>152</sup>: Այդ մասին են վկայում Թուրխալիյասի «Տարեգրություններում» կասկերի նվաճման հիշատակությունը (տես վերը), Առնուվանդաս Ի-ին վերագրվող պայմանագիրը Ուրա քաղաքի ավազների հետ, ինչպես նաև KUB XXIII 72+-ը (տես վերը, Գլուխ 1):

Թուրխալիյասն իր կառավարման շրջանում գահակից դարձրեց Առնուվանդասին՝ իր փեսային և որդեգրին<sup>153</sup>: Հայտնի չէ, թե ինչպիսին էր իրավիճակը Թուրխալիյասի կողմից նվաճված երկրներում, սակայն, հաշվի առնելով «Մադդուվատտասի մեղանշանքում» պահպանված տեղեկատվությունը, կարելի է վստահաբար ենթադրել, որ Առնուվանդասը ստիպված էր ծանրագույն արտաքին քաղաքական խնդիրներ լուծել:

Իր միանձնյա գահակալման սկզբնական տարիներից նեթ նա ստիպված էր պայքար մղել մի քանի ուղղություններով: Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում առաջացել էր Մադդուվատտասի կիսանկախ պետությունը: Հարավ-արևելքում խեթերը լուրջ խնդրի առջև էին կանգնել՝ կապված Միտտանիի գործողությունների հետ: Հյուսիսում պահպանվում էր կասկական սպառնալիքը: Հայկական լեռնաշխարհում նույնպես խնդիրներ կային՝ Պախխուվայում զարգացող իրադարձությունների հետ կապված:

Առնուվանդասի «Տարեգրություններից» տեղեկանում ենք, որ արևմուտքում նրա հակառակորդը Արցավայի արքա Կուպանտա-Կուրունտան էր, որն, ամենայն հավանականությամբ, Փոքր Ասիայի արևմտյան հատվածի հակախեթական ուժերի առաջնորդն էր: Ըստ տեքստի, Կուպանտա-Կուրունտան պարտվել և փախել էր իր երկրից<sup>154</sup>: Առնուվանդասը փորձում էր միաժամանակ դիվանագիտական ճանապարհով լուծել Մադդուվատտասի հետ կապված խնդիրները (տես վերը տեքստում Թուրխալիյասի օրոք Մադդուվատտասի գործունեության մասին):

Առնուվանդասի միանձնյա կառավարման սկզբնական փուլին է վերաբերում նաև Իսմերիգա քաղաքի մարդկանց բնակեցումը Կիցցուվատտայի և հարակից շրջանների քաղաքներում և նրանց հետ պայմանագրի

<sup>152</sup> Houwink ten Cate 1970: 62.

<sup>153</sup> Houwink ten Cate 1970: 58; Carruba 1977: 177 n. 7.

<sup>154</sup> KUB XXIII 21 II 1'-32'. Houwink ten Cate 1970: 64.

կնքումը<sup>155</sup>: Այդ քայլով Առնուվանդասը փորձում էր ամրապնդել խեթական գերիշխանությունը միտտանական ազդեցության տակ գտնվող կամ անմիջականորեն Միտտանիի տարածք համարվող տարածաշրջանում<sup>156</sup>: Պայմանագրում խոսվում է այն մասին, որ խմերիզացիները իրավասու էին Կիցցուվատնայի քաղաքներում խեթական արքայի անունից պատժել բոլոր կարգազանցներին, այդ թվում նաև՝ Կիցցուվատնայի խեթական կառավարչին<sup>157</sup>: Վերջինիս առկայությունն արդեն իսկ խեթերի ակտիվության լուրջ վկայություն է Թուրխալիյա II - Առնուվանդաս I-ի օրոք<sup>158</sup>:

Հարավում Առնուվանդասը պայմանագիր կնքեց Ուրա քաղաքի հետ (ներկայիս Կիլիկիայի միջերկրածովյան առափնյա հատվածում): Ուրայի առևտրային նշվում է, որ քաղաքը դուրս էր եկել Արցախայի գերիշխանությունից և վերադարձել խեթական ազդեցության ներքո<sup>159</sup>:

Առնուվանդասը փորձում էր նաև չեզոքացնել կասկական վտանգը՝ վերջիններիս մի շարք ցեղերի հետ կնքելով պայմանագրեր<sup>160</sup> և համաձայնություն ձեռք բերել կասկերի ռազմական առաջնորդների հետ՝ պահպանելու խաղաղություն խեթահպատակ հյուսիսային մի քանի տարածքներում (Կիննարա, Կալասմա, Կիսսիյա, Սապպա)<sup>161</sup>: Հայտնի է, որ մինչ այդ կասկերն ավարառության էին ենթարկել հաթթիի հյուսիսային շրջանները, ավերել խեթական հոգևոր կենտրոնները (Ներիլը, Խուրսաման, Կաստաման, Սերիսան, Խիմմուվան, Տազգաստան, Կամմաման, Ցալպուվան և այլն<sup>162</sup>): Այդ իրադարձությունների վերաբերյալ պահպանվել են Առնուվանդաս I-ի և թագուհի Ասմունիկայի աղոթքի տեքստերը<sup>163</sup>: Ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին՝ կասկա-

<sup>155</sup> KUB XXVI 41; KUB XXIII 68 + ABoT 58 (իբատ.՝ Kempinski und Košak 1968: 191ff.).

<sup>156</sup> Իսմերիզան, հալկանարար, գտնվել է Փոքր Ասիայի հարավ-արևելքում (Goetze 1940: 44f.; Garstang and Gurney 1959: 53f.; Houwink ten Cate 1970: 61). այն է՝ Միտտանիի հետ անմիջական շփման գոտում:

<sup>157</sup> Սա կարող է վկայել այն մասին, որ Իսմերիզայի քնակությունը, թերևս, ազնվականությունը, խեթամետ դիզորդում ուներ:

<sup>158</sup> St'ն Քոսյան 2000: 168:

<sup>159</sup> KBo XVI 47 և KUB XXVI 29+ (De Martino 2005: 297).

<sup>160</sup> CTH 137-40 (Von Schuler 1965: 152ff.).

<sup>161</sup> CTH 260 (Von Schuler 1965: 223ff.).

<sup>162</sup> Վերոհիշյալ քնակավայրերի մեծ մասը գտնվել է Հայսի ստորին հոսանքի մոտ գտնվող շրջաններում՝ Արևելապոնտական լեռների մերձակա տարածքներում: Սերիսան (Սարիսսան) գտնվում էր Վերին երկրում՝ ներկայիս Քուլջաքլը հնավայրի տեղում (տե՛ս Ղազարյան 2017: 113-118):

<sup>163</sup> Singer 2002: 40ff.

կան խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու փորձերը միայն ժամանակավոր արդյունք տվեցին: Խնդիրն այդպես էլ մնաց չլուծված:

Անհանգիստ էր իրավիճակը նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան՝ խեթական գերիշխանության ներքո գտնվող տարածքներում: Առնուվանդաս I-ի կառավարման սկզբում կամ ավելի վաղ, դեռևս նորանվաճ վերինեփրատյան գոտում սկսվել էր ապստամբություն (այս մասին տես հաջորդ բաժինը):

Այսպիսով, Թուղխալիյաս II-ի և Առնուվանդաս I-ի կառավարման շրջանում (մ.թ.ա. XV դ. երկրորդ կես - XIV դ. սկիզբ) խեթական պետությունը ապրեց կարճատև ռազմաքաղաքական վերելքի փուլ, որի արդյունքում նվաճվեցին խոշոր տարածքներ խեթերի բնօրրանից դեպի արևմուտք՝ մինչև Միջերկրական ծով, հյուսիսում՝ Արևելապոնտական լեռներ, արևելքում՝ Վերին Եփրատի ավազանը (հետագայի հայկական Ծուփքը և Դարանաղաց գավառը), հարավում լուրջ հարված հասցվեց Միտտանիին և խեթերի գերիշխանությունը տարածվեց Դաշտային Կիլիկիայի վրա:

Թերևս դա էր պատճառը, որ Առնուվանդաս I-ի կառավարման շրջանում նախկին հակառակորդներ Միտտանիի և Եգիպտոսի հարաբերությունները սկսեցին բարելավվել: Միտտանիի արքա Արտադամա I-ի (մ.թ.ա. 1400-ական թթ.) և Թութմուս IV-ի (մ.թ.ա. մոտ 1400-1390 թթ.) միջև հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ, որոնք ամրապնդվեցին դինաստիական ամուսնությամբ: Դրան հաջորդած պայմանագրի համաձայն՝ Եգիպտոսը գերիշխանություն ստացավ Քաղեջի, Ամուրրուի (Փյունիկիայի) և Ուգարիտի նկատմամբ: Սա նշանակում էր, որ Սիրիայի հյուսիսում խաթթին այսուհետև ստիպված էր հաշվի նստել, Միտտանիից բացի, նաև Եգիպտոսի շահերի հետ: Ինսամիական կապերն օգնեցին հարթել նաև տարածքային խնդիրները Արևելամիջերկրածովյան տարածաշրջանում: Այս ամենը լուրջ խնդիրների առջև կանգնեցրեց Առնուվանդասի և թագուհի Ասմունիկայի որդի Թուղխալիյա III-ին (մ.թ.ա. մոտ 1360-1344 թթ.), ով, բացի արտաքին խնդիրներից, էլ ավելի մեծ խնդիրների առջև էր կանգնած պետության ներսում: Դրանք կապված էին գահաժառանգման հարցի հետ, քանզի, բացի Թուղխալիյասից, գահին հավակնում էր նաև առայժմ դժվար մեկնաբանելի տի(ս)kanti տիտղոսը կրող արքայատոհմի մի ներկայացուցիչ<sup>164</sup>:

<sup>164</sup> Այս տիտղոսի վերաբերյալ տես Gurney 1979; Orozco 2017: 109ff. Օրինակ՝ CTH 155 (հողի նվիրաբերման հռչակագիր Առնուվանդասի, Ասմունիկայի և տի(ս)kanti Թուղխալիյասի), CTH 175 (պայմանագիր հյուսիսի խեթական պաշտոնյաների հետ՝ Առնուվանդասի, Ասմունիկայի և տի(ս)kanti Թուղխալիյասի կողմից)(տես՝ Houwink ten Cate 1970: 4f.):



Առնուվանդասի միանձնյա կառավարման շրջանում կասկերի պարբերական հարձակումները Տերության հյուսիսային և կենտրոնական շրջանների վրա խոշոր վնասներ էին հասցնում:

Դեռևս Առնուվանդաս I-ի օրոք տերության գերիշխանության տակ գտնվող ծայրամասային երկրների անջատողական միտումները նրա հաջորդ Թուդխայիյաս III-ի կառավարման սկզբնական փուլում վերաճեցին խոշոր աղետի: Տարեցտարի աճող սպառնալիքը հանգեցրեց Խաթթիի տարածքի էական կրճատման: Խեթական տերության թուլացումը պայմանավորված էր ոչ այնքան նվաճված երկրների հարձակումներով, որքան ներքին խնդիրներով: Այսպիսով, Առնուվանդաս I-ից հետո Խեթական տերությունը փաստացի տրոհվեց ինչպես նվաճված երկրների ապստամբությունների և հարևանների կողմից խեթական տարածքների ասպատակությունների, այնպես էլ ներքաղաքական անկայունության հետևանքով, և նրա կառավարման ավարտը ու Թուդխայիյաս III-ի կառավարման սկիզբը կարելի է համարել խեթական «Միջին թագավորության» ավարտը:

KUB XXII 72+- ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԲՆՈՒՑԹԸ ԵՎ  
ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տեքստը կազմված է խաթթուսասում վերինեփրատյան երկրների ներկայացուցիչներին ուղղված՝ խեթական արքա Առնուվանդաս I-ի հրահանգ-ելոյթի արձանագրության տեսքով<sup>165</sup>: խաթթուսասի ժողովի շարժադիթը Պախխուվայի ապստամբությունն էր:

Տեքստը բաղկացած է չորս բաժիններից, որոնցից յուրաքանչյուրում արքան ելոյթը ուղղում է արևելյան ավազների տարբեր խմբերի:

- 1: խեթական արքա - Պախխուվայի ավազներ (ԴԿ 1+)
- ավազների ցուցակը (2-5)
- Պախխուվացի Միտայի պայմանագիրը (համառոտ հիշեցում)(6-13)
- Միտայի գործունեությունը (14-40)
- Առնուվանդաս I-ի վերջնագիրը (41 +)

\*ԴԿ-ի ուղիղ կեսը կորսված է (49-96), սակայն կարելի է ենթադրել, որ դրա մեծ մասը պիտի պարունակեր այն նույն պահանջները, ինչպիսիք առկա են հաջորդ սեկցիայում (<Կ 5-25):

Լրիվ կամ թերի պահպանվել է 9 անուն (1-ը՝ ոչ անվանապես), և 4-5-ը՝ ԴԿ 3-4-րդ տողերի սկզբում:

- 1) \*Lupakiutta
- 2) [\*.....t]ta
- 3) \*Arziutta
- 4) [\*.....]tta
- 5) \*Wartila
- 6) [\*.....i]y?ala
- 7) \*Hateš
- 8) [\*.....i]kkina

<sup>165</sup> «Պախխուվացի Միտայի» տեքստը իր կառուցվածքով զգալիորեն տարբերվում է խեթական արքաների կնքած պարիտետային և ոչ-պարիտետային մյուս պայմանագրերից, և այդ է պատճառը, որ մասնագիտական հրատարակություններում այն սովորաբար կոչվում է «արձանագրություն» (Gurney 1948: 32): Տեքստի նման կառուցվածքը, հավանաբար, բացատրվում է այն հանգամանքով, որ, դատելով այնտեղ առկա տեղեկություններից, նախկինում վերինեփրատյան երկրների հետ խաթթին արդեն կնքել էր պայմանագիր (կամ առանձին պայմանագրեր) և KUB XXIII 72+-ը կարելի է դիտել որպես դրա(նց) հիշեցում/թարմացում և դրանց հիման վրա նոր պայմանագրի կնքում:

## 9) DUMU "Ušapa

Այս ցուցակը հնարավոր չէ միանշանակ մեկնաբանել: Որոշ նկատառումներ թույլ են տալիս ենթադրելու, որ սրանք նույնը չեն ինչ երրորդ բաժնի ավագները:

1) Այս 9 անձանցից որևէ մեկի անունը չի կրկնվում երրորդ բաժնում:

2) Որոշ անունների կցված են նրանց կարգավիճակը նշող տերմիններ: Այսպես, 3-րդ տողի վերջին կորսված հատվածում հիշատակվող անձը (անունը կորսված է) ներկայանում է որպես [LU?](-)h̄uwaššataš BEL<sup>65</sup>TUKUL, այսինքն, համարվում է խեթական աստիճանավոր, եթե նույնիսկ (-)h̄uwaššataš-ը BEL<sup>65</sup>TUKUL-ի կատեգորիա չէ, այլ անձնանուն: 4-7-ը նույնպես ներկայանում են իրենց կարգավիճակով (կորսված են)<sup>66</sup>:

Սակայն վերոհիշյալ անձանց վերինեփրատյան ծագումը հաստատ է ոչ միայն Դ<sup>4</sup> 5-ի ([...LU<sup>65</sup> (ŠU.GI)?<sup>66</sup>]pa-ah-hu-wa nu-uš<sup>66</sup>]ha-at-tu-ši [hal-zi-u]-en), այլև նրանց անունների ոչ-խեթական տեսքի պատճառով:

Հնարավոր է, որպես վարկած, ենթադրել, որ Դ<sup>4</sup> 2-5-ում հիշատակվողները խեթական ծառայության մեջ գտնվող պախխուվացիներ էին: Որ այդպիսիք կային, լավ վկայված է խեթական ոչ-պարիտետային պայմանագրերում և այլ տեքստերում (տես ստորև):

Ինչպիսի պահանջներ է ներկայացնում Առնուվանդաս 1-ը:

Քանի որ առաջին բաժնում խեթական արքայի պահանջներից պահպանվել է միայն 8 տող, իսկ երկրորդ բաժինը հիմնականում նվիրված է այդ պահանջներին, ապա ներկայացնենք դրանք միասին: Պահանջները հանգում են ութ կետի.

1) Հանձնել Պախխուվայի ապստամբության ղեկավարներին՝ իրենց ընտանիքներով, ստրուկներով և գույքով: Ովքեր էին այդ անձինք.

**Միտա.** - Այս անձը տեքստում հատուկ առանձնացված է. նրա կողմից պայմանագրի խախտման հիշատակությամբ է սկսվում տեքստը: Մինչև իսաթթուաստում պայմանագրի կնքումը, նա եղել է հավատարիմ անձ, այն ժամանակ երբ Պախխուվան ապստամբել էր: Թերևս, Միտան խեթական ծառայության մեջ գտնվող պախխուվացի էր: Սակայն Պախխուվա զնայուց հետո նա միացել էր ապստամբներին և նույնիսկ ամուսնացել ապստամբության ղեկավար Ուսապայի դստեր հետ (Դ<sup>4</sup> 16, Հ<sup>4</sup> 6):

**Ուսապա.** - Հիշատակվում է մի քանի անգամ՝ պատսիվ կերպով (Դ<sup>4</sup> 1, 4, 16, Հ<sup>4</sup> 6, 9)՝ որպես հանձնման ենթակա անձ, Միտայի աները.

<sup>66</sup> Տես Գլուխ 1. «Պախխուվայի ապստամբությունը. ծանոթագրություններ»:

Պախխուսում հինգ համախոհներ ունենալու առնչությամբ: Հավանաբար, եղել է ապստամբության հիմնական ղեկավարը: Այս անձը և երրորդ բաժնում հիշատակվող «Տախխուսայի ավագ» Ոսապան դժվար թե նույն անձը լինեն:

**Պիզգանա.** - Միտայի համախոհներից մեկը: Միտայից հետո խեթական արքան նրան էր ուղարկել Պախխուս (ԴԿ 35ff.): Միտայի պես, Պիզգանան նույնպես պիտի խեթական ծառայության մեջ գտնվող պախխուսացի լիներ (հիշատակվում է որպես UGULA 10 «տասնապետ»?): երրորդ բաժնում հիշատակվող «[.....] քաղաքի ավագ» Պիզգանան? հազիվ թե նույնական լինեն:

**Խասսանա, Կալիմունա.** - Միտայի համախոհներից: Դերը Պախխուսում ապստամբության մեջ պարզ չէ:

2) Կունմախայից Պախխուս փախած արխիտացիների հանձնում (ԴԿ 43-48; ՀԿ 16f.):

3) Ոսապայի՝ Պախխուսում գտնվող հինգ համախոհների հանձնում, նրա դստեր հետ միասին (ՀԿ 9f.):

4) Պախխուսացիների կողմից գրավված խեթական չորս քաղաքների հանձնում (ՀԿ 10f.):

5) Ոսապայի որդու հանձնում (ՀԿ 11f.)

6) Իսուվայից բերված գերիների և ավարի հանձնում (ՀԿ 13ff.):

7) Պայմանագրով նախատեսված՝ զորքով աջակցելու պարտավորության վերահիշեցում (ՀԿ 18ff.):

8) Թշնամական երկրի հետ ինքնուրույն հարաբերություն չունենալ (ՀԿ 21ff.):

2: խեթական արքա - Պիտտիյարիզայի, Դուզգամայի և [.....] քաղաքի ավագներ (ՀԿ 1-31)

- ավագների ցուցակը (1)

- Պախխուսայի ապստամբության պատմությունը (ՀԿ 2-25)

- ավագների պարտավորությունները (ՀԿ 25-31):

Այստեղ ներկայացված է Միտայի ողջ մեղանշանքը՝ երդում տալուց մինչև Խաթթուսասի ժողովը (խեթական արքայի նամակը Պախխուսա՝ [հավանաբար, Պիզգանայի՝ Պախխուս ուղարկվելուց առաջ, քանի որ ՀԿ 5ff.-ում, Միտայի և այլոց հետ նա չի հիշատակվում]):

Երկրորդ բաժնում խեթական արքայի հետ պայմանագիր կնքող երեք քաղաքների դերը որոշակի մեկնաբանության կարիք ունի:

Ինչ պահանջներ է ներկայացնում Առնուվանդաս I-ը վերոհիշյալ քաղաքների «ավագներին»: Պախխուսայի ապստամբության պատմու-

թյան շարադրանքից հետո նա պահանջում է, որպեսզի սրանք իրենց վրա վերցնեն Պախտուվայի հետագա հավատարմության ապահովման պատասխանատվությունը՝ վերահսկելով այդ երկրի բնակիչների գործունեությունը: Այսինքն, այդ քաղաքները պիտի հանդես գային որպես տարածաշրջանի լրյալության ապահովման իրականացողներ: Այսքանը պարզ է, սակայն հետո, արդեն երրորդ բաժնում, դրանցից միայն Պիտտիյարիզան է հանդես գալիս որպես «կոլեկտիվ պայմանագրի» անդամ. Դուկկաման այս վերջին երկրների ցուցակում բացակայում է:

3: «Հիմնական պայմանագիր» (ՀԿ 32a+)

- «Արևելյան ավազներ» - ՀԿ 32-37

- Պայմանագիրը - ՀԿ 38-80

Այս հատվածում ներկայացված «ավազները» սկզբում հանդես են գալիս ըստ բնակավայրերի («քաղաքներ», ՀԿ 32-35), այնուհետև՝ ըստ ավելի խոշոր քաղաքական միավորների («երկրներ»): Սակայն երկու ենթացուցակները նույնական չեն: Այսպես, առաջինում ներկայացված չեն Մալդիան, Ցուխման և Պիտտիյարիզան: Այդ դեպքում հարց է ծագում, թե ՀԿ 36-37-ի ցուցակի անդամ որ երկրների «ավազներն» են հիշատակված այստեղ:

Առաջին մասում հիշատակվող 13 քաղաքներից պահպանվել են 11-ի անվանումները, մեկը ամբողջությամբ կորսված է, մյուսի գրության միայն սկիզբն է պահպանվել: Լրիվ պահպանվածներից չորսը, ըստ ավելի ուշ շրջանի խեթական, ասորեստանյան և միջնադարյան (հայկական և արաբական), գտնվել են Իսուվայում (տես հաջորդ բաժինը):

Հաջորդ խնդիրը վերոհիշյալ քաղաքներից երկուսի՝ Պախտուվային առնչվելու հարցն է: Ցուցակում հիշատակվող [S]ախտիսա քաղաքից Ուսապան և [.....] քաղաքից Պիզ[գանան], առաջին հայացքից, կարող են դիտվել որպես Պախտուվայի «ավազներ», որոնք տեքստի նախորդ մասերում հիշատակվում են որպես Միտայի դաշնակիցներ և մերձավորներ: Եթե մի պահ ենթադրենք, որ սրանք Միտայի զինակիցներն են, ապա անխտաափեյիորեն պիտի եզրակացնենք, որ՝

ա) Խաթթուսասի ժողովի նախօրեին Պախտուվան ենթարկվել էր խեթական զորքի հարձակմանը և պախտուվացիները ստիպված են եղել հպատակվելու:

բ) Ուսապան և Պիզգանան վերստանձնել են իրենք պարտավորությունները խեթական արքայի հանդեպ:

գ) Միտայի բացակայությունը ժողովին և հատկապես չհիշատակվելը երրորդ բաժնի «ավազների» ցուցակում կարող է նշանակել, որ նա

այդ պահին արդեն հեռացել էր երկրից կամ ուղղակի զոհվել:

Այս տարբերակը տեսականորեն հնարավոր է, սակայն բախվում է որոշ էական հակափաստարկների՝

ա) Առաջին և երկրորդ բաժիններում Միտան հանդես է գալիս որպես դեռևս ակտիվ անձ, ում խեթական արքան պահանջում է հանձնել իրեն:

բ) Երկրորդ բաժնում՝ հանձնման ենթակա անձանց շարքում հիշատակվում են Միտան, Նրա կինը, «Խասսանայի տունը» և «Կալիմունայի տունը», Ինչպես նաև Ուսապայի որդին: Այստեղ Ուսապան և Պիզգանան չկան: Դժվար թե Ուսապայի և Պիզգանայի անունները այստեղ հիշատակված լինեն, սակայն վնասվածքների պատճառով՝ կորսված, քանի որ տեքստի այս հատվածը պահպանվել է գրեթե ամբողջությամբ:

Սրա հիման վրա հնարավոր է եզրակացնել, որ, տեսականորեն, երրորդ բաժնի Ուսապան և Պիզգանան իրոք կարող էին լինել Միտայի այն զինակիցները, որոնք ստիպված են եղել զնալու Խաթթուսաս, այն դեպքում երբ Միտան, Խասսանան և Կալիմունան դեռևս անհատանելի էին մնում խեթական արքայի համար: Այնուամենայնիվ, այս տարբերակը քիչ հավանական է և ավելի շուտ երրորդ բաժնի վերոհիշյալ երկու անձինք վերինեփրատյան երկու քաղաքների անվանակից ներկայացուցիչներ են եղել:

Յուրակը սկսվում է տեքստը կազմելուց հետո ավելացված երկու անուններով (<Կ 32a), որոնք չեն պատկանում «ավագների» խմբին: Նրանց անունները (Սանթացիտիս և Մուվատայիս), դատելով այն հանգամանքից, որ գրված են արդեն գոյություն ունեցող երկու տողերի միջև առկա փոքր տարածության մեջ, ակնհայտորեն հետո են ավելացվել: Այդ երկուսը կարող էին խեթական բարձրաստիճան պաշտոնյաներ լինել, որոնք ինչ-որ էական մասնակցություն են բերել Պախխուվայի միջադեպին և Խաթթուսասի ժողովին:

## ՊԱՆԽՈՒՎԱՅԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Տեքստը ներկայացնում է մի իրավիճակ, որի վերլուծությունը վկայում է արևելքում սկսված բազմաթիվ գործընթացների առկայության տոնի: Պախտավայի ապստամբությունը դրանց շարքում ընդամենը մի օղակ է, որ լավագույնս է դրսևորում խեթական տերության և նորանվաճ երկրների փոխհարաբերությունները: Ներկայացնենք նախ Պախտավայի միջադեպը, այնուհետև փորձենք ներառել այն համաժամանակյա պատական ետնախորք:

Խաթթուսասի ժողովից ինչ-որ ժամանակ առաջ Պախտավան անհնազանդություն էր դրսևորել և խախտել էր իր կախյալ կարգավիճակից բխող պարտավորությունները: Տեքստում հիշատակվում է պախտավացիների անհնազանդության առաջին դրսևորումներից մեկը՝ խեթական տարածքում գտնվող (թերևս, նույն վերինեփրատյան գոտում) չորս քաղաքների (Պախտուրա, Խուրլա, Ապարխուլա, Խալմիսես) զավթումը: Հնարավոր է, այս գործողությունն իրականացնողը Միտան չի եղել, այլ Ուսապան: Այս մասին է ակնարկում Խաթթուսասից Պախտավա վերադառնալուց հետո Միտայի՝ Ուսապայի դատեր հետ ամուսնությունը խեթական արքայի կողմից որպես թշնամության նշան դիտելը, այդ պահին և դրանից առաջ Ուսապան պիտի լիներ խեթական արքայի հակառակորդը Պախտավայում:

Պախտավայի ապստամբության շրջանում, ակնհայտորեն, խեթական արքան ինչ-որ քայլեր է ձեռնարկել (հավանաբար, արշավանք), որոնց ընթացքում ասպարեզ է եկել Միտան: Նա պախտավացի էր, սակայն խեթական արքային հավատարմության երդում տալը Խաթթուսասում կարող է վկայել, որ նա պիտի խեթական ծառայության մեջ գտնվող պախտավացի ազնվական լիներ, որի միջոցով նախատեսվում էր «կարգի հրավիրել» ապստամբ երկիրը:

Գնալով Պախտավա, Միտան դժեղ է երդումը և, մերժենալով Ուսապայի հետ, էլ ավելի է խորացրել հակասությունները Տերության հետ: Վերը արդեն նշվեց Միտայի և նրա զինակիցների գործողությունների մասին (առաջին բաժին): Այստեղ ներկայացնենք դրանք ավելի հանգամանորեն:

Միտան Պախտավայում ապաստան էր տալիս խեթական տարածքից փախած մարդկանց, ասպատակում էր հարևան Իսուվան, Կոմմախան և Տիմմիան:

Այդ գործողությունների պատճառով խեթական արքան Պախտավա է ուղարկում ևս մեկ անձնավորության՝ Պիզգանային (թերևս, նույնպես պախտավացի): Սակայն վերջինս կրկնում է Միտայի քայլը, միա-

նալով ապստամբներին: Դատելով ԴԿ-ում շարադրված իրադարձությունների հաջորդականությունից, Պիզգանայի՝ Պախխուվա ուղարկելուն նախորդել էր խեթական զորքի հարձակումը Կոմմախայի ուղղությամբ՝ այնտեղ գտնվող Պախխուվայի և Արխիտայի զորքերի վրա: Վերջիններս դրանից հետո ապաստանել էին Պախխուվայում: Արխիտայի հիշատակությունը կարող է վկայել, որ Պախխուվան իր հակախեթական գործունեության մեջ միայնակ չի եղել: Վերոհիշյալ իրադարձությունները կարելի է ներկայացնել հետևյալ ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Ապստամբության սկիզբը (խեթական քաղաքների գրավումը):
- 2) խեթական զորքի հնարավոր հակահարձակումը (անհաջող):
- 3) Միտայի երդումը հաթթուսասում:
- 4) Միտայի գալը Պախխուվա, մերձեցումը Ուսապայի հետ:
- 5) Միտայի գործողությունները (հարձակումներ հարևան երկրների վրա):

- 6) խեթական զորքի հարձակումը Կոմմախայի ուղղությամբ:
- 7) խեթական արքայի նամակը Պախխուվա՝ ապստամբների ղեկավարներին հանձնելու պահանջով:
- 8) Պիզգանայի երդումը և գնալը Պախխուվա:
- 9) Պիզգանայի միանալը ապստամբներին:
- 10) խեթերի հարձակումը Պախխուվայի վրա(?):

Տեքստում որևէ ակնարկ չկա հաթթուսասի ժողովի նախօրեին խեթերի՝ Պախխուվա կազմակերպած արշավանքի մասին, սակայն այդպիսին պետք է ենթադրել, ելնելով իրադարձությունների տրամաբանությունից:

Որևէ հիմք չկա արևելյան «ավագների» ներկայությունը հաթթուսասում դիտել որպես ապացույց նրանցով ներկայացված երկրների հավատարմության օգտին: Նրանց գնալը խաթթուսաս ավելի հեշտ է մեկնաբանել որպես հարկադրված քայլ, պարտադրված ուղղակի ռազմական միջամտությամբ: Վերինեփրատյան գոտում տիրող իրավիճակի և այստեղ ընթացող քաղաքական գործընթացների մասին տես ստորև:



## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾԱՇԻՐՁԱՆՈՒՄ

Թուղխալիյաս II-ի և Առնուվանդաս I-ի տեքստերը բավարար քանակությամբ տեղեկություններ են պարունակում քննարկվող ժամանակաշրջանում նորաստեղծ խեթական տերության և նրանից կախման մեջ գտնվող երկրների փոխհարաբերությունների վերաբերյալ:

Սույն աշխատության մեջ ուսումնասիրվող և խեթական այլ տեքստերի հիման վրա կարելի է ամբողջացնել մետրոպոլիայի և ծայրագավառի փոխհարաբերությունները քնորոշող հետևյալ գործընթացները.

1) Բնակչության մի մասի բռնի վերաբնակեցում բուն խեթական պետության տարածքում (գլխավորապես՝ պրոֆեսիոնալ զինվորներ՝ իրենց ընտանիքներով)<sup>167</sup>:

2) Պայմանագրային կամ հարկադիր զինծառայություն<sup>168</sup>:

3) Խաթթիի և տվյալ երկրի, ինչպես նաև վերջինիս և խեթահպատակ մյուս երկրների միջև հստակ սահմանների պաշտոնական ամրագրում<sup>169</sup>:

4) Արգելք երրորդ կողմի հետ ինքնուրույն հարաբերությունների վրա<sup>170</sup>:

Թե ինչպիսի հետևանքներ կարող էին ունենալ վերոհիշյալ պայմանները նորանվաճ երկրների համար, դժվար չէ գուշակել:

---

<sup>167</sup> Թուղխալիյասի «Տարեգրություններում» հիշատակվում է Արցավա երկրի (արևմտյան Փոքր Ասիայում) նվաճումից հետո 10,000 հետևակային զինվորների և 600 մարտակառք վարորդների վերաբնակեցումը խաթթիում (KUB XXIII 11/12 ԴԿ 11f., 31f., 34f.):

<sup>168</sup> Պահպանվել են մի շարք տեքստեր (մեծ մասը՝ Թուղխալիյասի և Առնուվանդաս I-ի ժամանակներից), որոնք իրենցից ներկայացնում են կախյալ երկրների քնակչության հետ զինծառայության մասին պայմանագրային ակտեր, օրինակ, այսպես կոչված «Չինվորների ցուցակը» (տես՝ von Schuler 1965: 140ff.): Կախյալ երկրների քնակչության վրա դրվող պարտադիր զինծառայության մասին տես՝ Beal 1992: 71ff.

<sup>169</sup> Այս կետը առկա է Կիցցուվատնայի արքա Սունասուրայի հետ կնքված պայմանագրում (Weidner 1923: N.7, IV 40ff.) և «Մադդուվատուասի մեղանշանքում» (KUB XIV 1 ԴԿ 20):

<sup>170</sup> Կախյալ երկրների հետ կնքված բոլոր պայմանագրերում այս արգելքը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում, տես վերը դրան նվիրված հատվածները KUB XXIII 72+-ում (Գլուխ 1): Չնայած այդ տեքստերը սովորաբար չեն պարզաբանում երրորդ կողմի հետ հարաբերությունների բնույթը, սակայն կարելի է ենթադրել, որ դրանք, քաղաքականից զատ, ներառում էին նաև տնտեսական ասպարեզը:

Նվաճման ընթացքում կրած մարդկային և նյութական կորուստները այս երկրների վրա խեթական գերիշխանության բացասական հետևանքների միայն փոքր մասը կարելի է համարել: Պետականության զարգացման վաղ փուլում գտնվող մանր քաղաքական միավորների համար հատկապես ծանր պիտի լիներ հարևան երկրների և պետությունների հետ ինքնուրույն կերպով հարաբերակցվելու վրա դրվող արգելքը, նման պարագայում խաթթուսասի կենտրոնական իշխանության հետ յուրաքանչյուր քայլը համաձայնեցնելու հեռանկարը (ՀԿ 22ff.): Վերինեփրատյան երկրները, ինչպես նաև հյուսիսային Փոքր Ասիայի կասկական տարածքը և արևմտյան Փոքր Ասիան, այն է՝ ցեղապետական բնույթ ունեցող քաղաքական միավորները մ.թ.ա. XV-XIV դդ. ապրում էին քաղաքական զարգացման մի փուլ, որն անպայմանորեն պահանջում էր տարածքային ընդարձակում, խոշորացում առավել կայուն և հզոր քաղաքական միավորների շուրջը: Մի գործընթաց, որը մոտ էր իր բարձրակետին KUB XXIII 72+-ով արտացոլված ժամանակահատվածում (այս մասին առավել հանգամանորեն ստորև):

Ոչ պակաս, գուցեև ավելի ծանր հետևանքներ կարելի է ակնկալել նվաճված երկրներին խաթթի գերիշխանությունից դուրս գտնվող երկրների հետ կապեր ունենալուց զրկելու փաստից: Արևմտյան Փոքր Ասիայի խեթահպատակ երկրների համար այդպիսի հարևաններ էին Արցախյան և Նոր-Նոր քաղաքական ասպարեզ ելնող Ախիսիական<sup>171</sup>: Ինչ վերաբերում է վերինեփրատյան երկրներին, ապա այստեղ առաջին հերթին խեթական արքան նկատի ուներ Միտտանին: Տեքստում Միտտանին անվանապես չի հիշատակվում («Խուրրի երկիրը» Միտտանին չէր, այլ այս տարածաշրջանում գտնվող ինչ-որ խուրրիաբնակ տարածք)<sup>172</sup>: Փաստորեն, խեթական նվաճումից հետո մեկ հարվածով արհեստականորեն դադարեցվում էին ավանդական տնտեսական կապերը Հյուսիսային Միջագետքի և Սիրիայի հետ:

Դժվար չէ ենթադրել, որ Թուրխալիյասի նվաճումների արդյունքում ստեղծված ընդարձակ տերությունը չէր կարող երկար գոյատևել միայն կախյալ երկրների հետ կնքված այնպիսի պայմանագրերի շնորհիվ, ինչպիսին է, օրինակ, մեր ուսումնասիրության առարկա տեքստը: Միաժամանակ, մինչև գերիշխանության պահպանման առավել հիմնավոր միջոցների հաստատումը (օրինակ, քաղաքական և տնտեսական ինտեգրում), խաթթուսասի իշխանությունը ստիպված պիտի լիներ կայուն

<sup>171</sup> «Մադդուվատուսի մեղանչանքում» այս երկու երկրներն են անվանապես հիշատակվում որպես խաթթիի հակառակորդներ (KUB XIV 1):

<sup>172</sup> Տե՛ս Գրուխ 1:

ոազմական վերահսկողություն իրականացնել՝ տարածաշրջանի ներքին գործերին պարբերական միջամտության նպատակով<sup>173</sup>:

Արդեն Առնոլանդաս I-ի ինքնուրույն կառավարման ընթացքում, մի շարք տեքստերում պահպանված տեղեկությունները վկայում են խեթական տերության առջև կանգնած լուրջ խնդիրների և հնարավոր տրոհման սպառնալիքի մասին (օրինակ, Մադդուվատտասի գործունեությունը)<sup>174</sup>:

Առնոլանդասի և թագուհի Ամունիկկայի մի համատեղ տեքստում հիշատակվում է հյուսիսի կասկերի կողմից մի ամբողջ շարք քաղաքների (Ներիկ, Խուրսամա, Կաստամա և այլն) սրբավայրերի ավերման մասին<sup>175</sup>: Նորահայտ Մաշատիոյուքի (խեթ. Տապիզգա) սեպագրական արխիվի<sup>176</sup> նամակներում ուղղակիորեն նշվում է քավական տազնապայի իրավիճակի առկայության մասին<sup>177</sup>:

Տարբեր պատմական արձանագրված մեծաքանակ երևույթները թույլ են տալիս եզրակացնելու, որ Թուդխալիյասի նվաճումներով ստեղծված հսկա տերությունը նրանից հետո անխուսափելիորեն պիտի ճեղքվածք տար եթե ոչ իր, ապա առնվազն նրա հաջորդի օրոք: Ոչ Առնոլանդասի տարեգրություններում, ոչ էլ նրանից մեզ հասած ստվար քանակությամբ տարբեր քնույթի տեքստերում որևէ հիշատակություն չկա նվաճողական արշավանքների մասին. այստեղ վկայված բոլոր ոազմական ձեռնարկումներն ուղղված են կախյալ երկրների հավատարմության պահպանմանը: Ինչպես ցույց են տալիս ավելի ուշ շրջանի աղբյուրները, Առնոլանդասից հետո (հնարավոր է, նաև նրա կառավարման վերջին շրջանում) խեթական տերությունը ենթարկվեց իր գրեթե բոլոր հարևանների հարձակումներին, որի հետևանքով պետության մեծ մասը՝ մայրաքաղաք Խաթթուսաստով հանդերձ, ժամանակավորապես հայտնեվեց թշնամիների ձեռքում՝ մինչև սկզբում Թուդխալիյաս III-ի, այնու-

<sup>173</sup> Նույն KUB XIV 1-ում հայտնվում է խեթական զորքի՝ պարբերաբար իրականացվող հարձակումների մասին, այստեղ նկատվող անցանկալի զարգացումները կանխելու նպատակով: Պախխուվայի անհնազանդության նկարագրությունը Նույնպիսի պատկեր է ներկայացնում (տես վերը տեքստում):

<sup>174</sup> Ցիպպասալա երկրի խեթաիպատակ կառավարիչ Մադդուվատտասը ակնհայտորեն ինքնուրույնություն էր դրսևորում հարևանների հետ ունեցած փոխհարաբերություններում (տես վերը):

<sup>175</sup> CTH 375 (իրատ.՝ von Schuler 1965: 152ff., թարգման.՝ Ünal 1991: 393f.):

<sup>176</sup> Հրատ.՝ Alp 1991.

<sup>177</sup> Masat Höyük N.96 (իեսազուտ.՝ Houwink ten Cate 1998: 52 և Քոսյան 2001: 233-245).

հետև՝ Սուպպիլուլիումաս I-ի կողմից պետության տարածքային ամրոզ-  
ջականության վերականգնումը<sup>178</sup>:

### ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐԸ

KUB XXIII 72+-ը արձանագրում է մի իրավիճակ, ըստ որի վերին-  
եփրատյան ավազանում դեռևս գոյություն չունեն քիչ թե շատ խոշոր քա-  
ղաքական միավորներ: Այն բաղկացած էր մեծաքանակ «քաղաքներից»,  
որոնք երբեմն տեքստում ստանում են լրացուցիչ «երկիր» քնորոշումը  
(KUR<sup>URU</sup>X «X քաղաքի երկիր»): Վերջինիս էությունը պարզելու համար  
որոշակիորեն կարևոր հիմք է տալիս Իսուվայի օրինակը:

Տեքստում Իսուվան հիշատակվում է երեք տարբեր ձևերով.

- 1) KUR<sup>URU</sup>Isawa «Իսուվա քաղաքի երկիր»
- 2) KUR<sup>URU</sup>Isawa «Իսուվա երկիր»
- 3) URU<sup>URU</sup>Isawa «Իսուվա քաղաք»

Այս վերջին կիրառությունը քննադատական չէ, քանի որ 1) «քա-  
ղաք» դետերմինատիվով Իսուվան այլևս չի հանդիպում մյուս տեքստե-  
րում, 2) այստեղ կիրառված է «իսուվացի» (LÚ<sup>URU</sup>Isawa) իմաստով, այ-  
սինքն, որպես էթնիկոն/տոպոնիմիկոն:

Հարկ է նշել, որ, ըստ խեթական աղբյուրների, Իսուվա անունով  
քաղաք վկայված չէ, ինչը կարելի էր ենթադրել KUR<sup>URU</sup>Isawa գրության  
հիման վրա<sup>179</sup>: Իսուվա երկրի անվանումը պետք է փնտրել այլ տեղ, քան  
որպես քաղաքանուն:

Տեքստի երրորդ բաժնում անվանապես հիշատակվող 13 քաղաք-

<sup>178</sup> Խոսքը այսպես կոչված «շրջանաձև ներխուժման» մասին է, որը վկայված է  
շատ ավելի ուշ շրջանի (Խաթթուսիյի III) մի տեքստում (KBo VI 28 Դ4 6ff.):  
Ըստ դրա, Սուպպիլուլիումասի՝ քաղաքական ասպարեզ դուրս գալուց որոշ ժա-  
մանակ առաջ Խաթթին ենթարկվել էր բոլոր հարևանների հարձակմանը  
(տեքստի այդ հատվածի հրատարակությունը և մեկնաբանությունը տես՝ Goetze  
1940: 21ff.; Cornelius 1958:; նաև Քոսյան 2016ա: 69-81, 108-113 [KBo VI 28-ի  
հրատարակությունը և քննարկվող ժամանակահատվածի պատմական համա-  
տեքստի համար] և այլն): Այս տեղեկությունը հաստատվում է Մուրսիյի II-ի  
օրոք կազմված՝ Սուպպիլուլիումաս I-ի գործունեությունը նկարագրող տեքստի  
սկզբնական պարբերություններին, որտեղ շարադրվում են վերջինիս հոր՝ Թուդ-  
խալիյաս III-ի կառավարման եզրափակիչ շրջանի իրադարձությունները (իրատ.  
Güterbock 1956: 41ff.):

<sup>179</sup> Տես Քոսյան 2004ա: 61:

ներից (մեկի անվանումը կորսված է, մյուսինը թերի է պահպանվել) երեքը հաստատ գտնվել են Իսուվայի տարածքում (Խինձուտա, Սուլլամմա, Վատարուանա): Սրանք լավ հայտնի են նաև ավելի ուշ շրջանի խեթական (մասամբ նաև՝ ասորեստանյան) տեքստերից, ընդ որում բացառապես հիշատակվում են որպես «քաղաքներ», այլ ոչ որպես «երկրներ»: Այսինքն, «Իսուվա» տերմինը այստեղ կիրառված է «երկիր» իմաստով, որը բաղկացած է եղել մի շարք «քաղաքներից» (քաղաք-պետություններ, այն է՝ տոհմացեղային բնակավայր):

Իսուվան վերինեփրատյան երկրների շարքում զգալիորեն առանձնանում է իր նշանակությամբ՝ Խաթթիի հետ ունեցած փոխհարաբերությունների առումով: Իսուվայի քաղաքական կազմակերպվածության բնույթի մասին մեր տեղեկությունները տարօրինակ կերպով շատ չեն: Չհաշված KUB XXIII 72+-ը, հետագայում Իսուվայի հիշատակությունները երկու տիպի են.

1) Իսուվան մ.թ.ա. XIV դ. (գերազանցապես, եթե ոչ՝ բացառապես Սուպպիլուլիումաս I-ի շրջանը) հանդես է գալիս որպես «երկիր», որը նվաճվել է խեթերի կողմից՝ միտաննական մեծ արշավանքի նախօրեին<sup>100</sup>: Այստեղ արքայական իշխանության գոյության մասին որևէ հիշատակություն չկա:

2) Խաթթուսիլիս III - Թուղխալիյաս IV-ի (մ.թ.ա. XIII դ.) տեքստերում հիշատակվում են Իսուվայի երկու արքաներ՝ Արիշարրուման և Էլիշիարրուման<sup>101</sup>: Ընդ որում, հաշվի առնելով այս արքաների սերտ դիվանատիական առնչությունները խեթական արքայատոհմի հետ, ենթադրվում է, որ Իսուվայի արքայատոհմը կարող էր ուղղակիորեն ծագել խեթականից<sup>102</sup>: Այսինքն, հնարավոր է նույնիսկ ենթադրել, որ Խաթթու-

<sup>100</sup> Klengel 1976: 85 Anm.5.

<sup>101</sup> Սուպպիլուլիումաս I-ի գործունեությունը նկարագրող տեքստերի շարքի «Դիպված 25»-ում հիշատակվում է «Խաթթիի ժողովուրդը», որոնց խեթական արքան վերադարձրել էր իրենց բնակավայրերը (KUB XXXIV 23 + KUB XL 8; Klengel 1968: 70; Քոսյան 2016ա: 96-101):

<sup>102</sup> Արիշարրուման անվանապես վկայված է որպես Իսուվայի արքա Խաթթուսիլիս III-ի և Թարխունտասասայի արքա Ուլմիթեշուրի միջև կնքված պայմանագրում (CTH 106 = KBo IV 10+, հրատար.՝ Van den Hout 1995)՝ որպես դրա վկաներից մեկը (C4 29), նաև Իսուվայի հնավայրերից մեկից՝ Քորուզուբեփեից հայտնաբերված չորս կնքադրոշմներում (հրատարակությունը և անվան ընթերցումը՝ Güterbock 1973: 135ff.; տես նաև՝ Քոսյան 1997: 178): Էլիշիարրուման հայտնի է նախ որպես արքայազն (DUMU.LUGAL)՝ Թուղխալիյաս IV-ի և Թարխունտասասայի արքա Կուրունտայի միջև կնքված պայմանագրից (Bo 86/299 = Otten 1988)՝ որպես վկաներից մեկը (C4 34), այնուհետև՝ Խասիգայթատի արքայի՝ Թուղխալիյաս IV-ին հղված նամակից (IBot I 34 = Klengel 1963: 280ff.):

սիլիսի օրոք (մ.թ.ա. 1260-50-ական թթ.) Իսուվայում կազմավորվել էր թագավորություն՝ Խաթթիի արևելյան տիրույթներում հուսայի հենարան ստեղծելու նպատակով: Իսուվայի երկրորդ արքայի՝ էխիշարրումայի պարագայում կապը խեթական արքայատոհմի հետ, ինչպես նաև Խաթթուսիլիս III-ի՝ դինաստիական ամուսնությունների պրակտիկայի լայն կիրառումը<sup>103</sup> կարող են վկայել վերոհիշյալ ենթադրության օգտին:

Վերադառնալով մեր խնդրին, ասենք հետևյալը: KUB XXIII 72+-ի տվյալներով վերինեփրատյան տարածաշրջանը դեռևս ապրում էր կենտրոնացված պետականության ձևավորման փուլ: Այն քաղկացած էր բազմաթիվ մանր «քաղաքներից/ցեղային քնակավայրերից», որոնք, Իսուվայի օրինակով, կարող էին կոչվել «երկիր»։ վերջինս իրենից պիտի ներկայացներ քնակավայրերի հարաբերականորեն կայուն միություն: Արևելյան քաղաքները տեքստում հանդես են գալիս որպես ինքնուրույն քաղաքական միավորներ՝ որոնք կառավարվում են տոհմապետերի/ցեղապետերի (խեթական տեքստերում՝ «ավագների») կողմից. վերջիններս քննարկվող պայմանագրում և ամենուրեք միաժամանակ կոչվում են «մարդ» (LU<sup>103</sup>X «X քաղաքի մարդ» = «X քաղաքի բնակիչ»):

KUB XXIII 72+-ի հիմքում ընկած քաղաքական գործընթացների շարքում անհրաժեշտ է առանձնացնել Հայասայի (նաև Ազգիի) կազմավորման խնդիրը, որի մեկնաբանությունը առայժմ լրջորեն չի առաջացել

---

Հավանաբար, հենց նա է հիշատակվում Թուդիսայիյաս IV-ի և Իսուվայի միջև կնքված պայմանագրում (CTH 123 = KBo IV 14, հրատ.՝ Stefanini 1965: 39ff.): Այս վերջին տեքստի՝ հոգուտ Թուդիսայիյաս IV-ի ժամանակով թվագրման համար տես՝ Singer 1985: 109ff., իսկ տեքստի կազմման շրջանի իրադարձությունների համար՝ Քոսյան 1997: 182-186; 1999: 73-76:

«Իսուվայի արքա», առանց անուն(ներ)ը նշելու, հիշատակվում է մի ողջ շարք՝ հիմնականում ծիսական ասպարեզին վերաբերող տեքստերում, բոլորն էլ Խաթթուսիլիս III-ի և Թուդիսայիյաս IV-ի ժամանակներից (IBot II 131; KBo XXIV 132; KUB XLIV 4; KUB LVI 28 և այլն):

<sup>103</sup> Ըստ Հ.Գ. Գյուտերբոկի, Արիշարրումայի կինը (= էխիշարրումայի մայրը) Խաթթուսիլիս III-ի դուստր Կիլուշեսպան էր (Güterbock 1973: 129), սակայն մեկ տեքստում որպես Կիլուշեսպայի ամուսին հանդես է գալիս Ալիշարրուման (KUB XI 90, 1,16,27): Այդ հանգամանքը ստիպել է Հ.Գյենզելին կասկածի տակ առնելու Հ.Գ. Գյուտերբոկի տեսակետը (Klengel 1976: 87f.): Վերջինս չէր բացառում, որ Քորուլութեպիի կնիքներում, թերևս, անհրաժեշտ է Իսուվայի արքայի անունը վերընթերցել Ալիշարրումա: Սակայն, հավանաբար, ավելի ճիշտ է Ի. Չիլգերը, որի կարծիքով Արիշարրուման և Ալիշարրուման միևնույն անձնատվան հնչյունական տարբերակները կարող են լինել (Singer 1991), անձնատվան որ խորրիական անձնանուններում առկա ali- քաղադրիչը առայժմ որևէ մեկնաբանություն չունի:

դեռևս 1930-ական թվականներին Է. Ֆոռերի կողմից առաջարկված նախնական ենթադրություններից:

Հենվելով Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուսկանայի միջև կնքված պայմանագրի<sup>184</sup> ներածականում հաղորդվող այն տեղեկության վրա, ըստ որի Խուսկանան 1) եղել է ազգեցիներից մեկը, որին խեթական արքան առանձնացրել էր մյուսներից և նշանակել Հայասայի արքա, և 2) իր քրոջը ամուսնացրել էր նրա հետ, Է. Ֆոռերը ենթադրում էր, որ 1) Խուսկանան պիտի նշանակվեր Սուպպիլուլիումասի կառավարման վերջերին, և որ 2) Հայասան Սուպպիլուլիումասից առաջ Խաթթիից կախման մեջ չի եղել<sup>185</sup>: Է. Ֆոռերը վկայակոչում էր KBo VI 28-ի տեղեկությունը, ըստ որի Սուպպիլուլիումասի կառավարմանը նախորդող շրջանում Ազգին հարձակվել և գրավել էր Վերին երկիրը՝ սահման դարձնելով Սամուխա քաղաքը: Նրա կարծիքով, մինչև վերոհիշյալ պայմանագրի կնքումը, Հայասան գտնվել է Միտտանիի արքա Տուշրաթթայի գերիշխանության կամ ազդեցության տակ:

KUB XXIII 72-ի վերաբավագրումը Առնուվանդաս I-ի կառավարման շրջանով պարտադրում է հիմնավոր ճշգրտումներ կատարել Է. Ֆոռերի սխեմայում և միաժամանակ որոշակիորեն նորովի մեկնաբանել Հայասայի կազմավորման գործընթացը և ժամանակը:

Տեքստում ներկայացված իրադարձությունները նախորդում են KBo VI 28-ի՝ Ազգիի հարձակմանը առնվազն մեկ սերնդով (եթե հաշվի առնենք, որ Առնուվանդաս I-ի անմիջական հետևորդը Թուդիայիյաս III-ն է՝ Սուպպիլուլիումաս I-ի հայրը): Այդ իրադարձությունները մասամբ ընթանում էին մի տարածքում, որը Սուպպիլուլիումաս I-ի և Մուրսիլիս II-ի օրոք համարվում էր Հայասայի մասը:

1) Այսպես, Դուգգամա քաղաքից ոմն Աիսսին հիշատակվում է որպես Պախխուվայի հետագա լոյալության երաշխավորներից մեկը (C<sup>4</sup> 1): Մուրսիլիս II-ի «Տարեգրություններում» Դուգգամա(նա)ն հիշատակվում է որպես Ազգիի կարևոր քաղաքներից մեկը, որը նվաճվել էր Արիսայից հետո:

2) Պախխուվայի ապստամբության ժամանակ Արիսիտան նրա դաշնակիցն էր: Խեթական տերության և Հայասայի միջև կնքված՝ առայժմ կոնկրետ չթվագրվող մի արձանագրության մեջ (KUB XXVI 39)<sup>186</sup> Արիսի-

<sup>184</sup> KBo V 3 Դ<sup>4</sup> 1f. (= CTH 42. պայմանագրի հրատարակությունը՝ Friedrich 1930: 103ff.; Քոսյան 2016ա):

<sup>185</sup> Այս հարցի քննարկումը տես Քոսյան 2016ա: 136-139; 2016բ: 104-108:

<sup>186</sup> CTH 43. Տեքստի հատվածական հատարակությունը տես Forrer 1931: 6ff.: տեքստի ամբողջական հրատ.՝ Քոսյան 2005: Օ. Կարբուրայի կարծիքով

տա քաղաքի Ամպրոպի աստվածը հիշատակվում է որպես պայմանագրի կնքմանը վկա հայասական աստված. սա անպայմանորեն ենթադրում է Արխիտա քաղաքի գտնվելը այդ պետության տարածքում:

3) Կումմախան հիշատակվում է որպես Պախխուվայի և Արխիտայի ասպատակություններից տուժած քաղաք (ԴԿ 43, ՀԿ 16f.): Սուպպիլիուլիումաս I-ի գործունեությունը նկարագրող՝ Մուրսիլիս II-ի կազմած մի տեքստում Կումմախան հանդես է գալիս որպես Հայասայի արքա Կարաննիսի դեմ մղված ճակատամարտի վայր («Դիպված 13», IV 42ff.)<sup>187</sup>:

Աերոհիշյալ նկատառումները թույլ են տալիս հավանականության զգալի աստիճանով ենթադրելու, որ տվյալ ժամանակահատվածում հետագայի Հայասայի տարածքում գտնվել են մի քանի մանր քաղաքական միավորներ (ցեղային կառույցներ), ընդ որում դրանց միջև հարաբերությունները կայուն չէին կարող լինել: Այսպես, ըստ KUB XXII 72+-ի, Դուգաման Խաթթիի հանդեպ լոյալ է եղել, Արխիտան գտնվել է ապստամբ ուժերի շարքում, Կումմախան, թերևս, նույնպես եղել է լոյալ:

Ամփոփելով Հայասայի կազմավորման խնդիրը, կարելի է ասել հետևյալը:

Պախխուվացի Միտայի ապստամբությունը Խեթական տերության դեմ ամենևին տեղական նշանակության դրվագ դիտել չի կարելի: Տերության արևելյան ծայրագավառում նվաճմանը անմիջականորեն նախորդող փուլում ծայր առած անհնազանդությունը ի վերջո պիտի հանգեցներ տարածաշրջանում խեթական գերիշխանության վերացմանը և նույնիսկ, հաշվի առնելով KBo VI 28-ի տեղեկատվությունը, վերջինիս կողմից տարածքային կորուստների (իսուվացիները նվաճեցին մինչև Թեգարամա ընկած շրջանը, իսկ ազգեցիները՝ մինչև Սամուխա): Այս ընթացքում է, թերևս, պատմական ասպարեզ ելնում Հայասան, որը շուտով պիտի դառնար տարածաշրջանի և ընդհանրապես Խեթական տերության արևելյան ծայրագավառի կարևորագույն քաղաքական ուժերից մեկը: Հայասայի, որպես արևելքում խեթական գերիշխանությանը սպառնացող ուժի մասին է վկայում Մաշատիյուլուքի նամակներից մեկը, որի կազմման ժամանակ Հայասան անվանապես հիշատակվում է որպես թշնամական երկիր, որի դեմ արշավանք էր նախապատրաստվում<sup>188</sup>:

(Carruba 1988: 70f.), այս տեքստն իրենից ներկայացնում է Մուրսիլիս II-ի և Հայասայի արքա Աննիայի միջև կնքված պայմանագիրը:

<sup>187</sup> «Դիպված 13»-ի հրատարակությունը տես Güterbock 1956: 65ff.; Քոսյան 2016ա: 90-95):

<sup>188</sup> Alp 1991: 298ff. Նամակի տեքստի հայերեն հրատարակությունը և պատմագիտական մեկնաբանությունները տես Քոսյան 2001: 233-245.



Այսպիսով, եթե KUB XXIII 72+-ը դիտենք որպես terminus ante quem, իսկ Կումմախայի ճակատամարտը՝ terminus post quem, ապա Հայասա պետության կազմավորումը պիտի տեղի ունենար Առնուվանդասի կառավարման երկրորդ շրջանում կամ Թուրխայիյաս III-ի օրոք (համենայնդեպս, ոչ վերջին շրջանում), այսինքն, մոտավորապես մ.թ.ա. XV դ. վերջերին - XIVդ. սկզբներին:

Այս ենթադրությունը, սակայն, որոշակի պայմանականություն է պարունակում կապված վերը տեքստում քննարկված KBo XVI 45-ում Հայասայի հիշատակության հետ: Այնուամենայնիվ, սույն տեքստում Հայասայի հանդես գալը կարող է վկայել այս քաղաքական միավորի քիչ ավելի վաղ գոյության մասին:

### **ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

KUB XXIII 72+-ի պատմագիտական արժեքը ոչ միայն Վերին Եփրատի ավազանում մ.թ.ա. XV դ. վերջերին - XIVդ. սկզբներին տիրող քաղաքական զարգացումների լուսաբանման համար լայն հնարավորությունների, այլև մեծաքանակ տեղանունների առկայությունն է, որոնք թույլ են տալիս հետազոտելու հիշատակվող երկրների և բնակավայրերի տեղադրությունը, այդ թվում հետագայի հայկական աղբյուրներում դրանց մի մասի հիշատակությունները: Հատկանշական է, որ վերոհիշյալ տեղանունների (նաև անձնանունների) գերակշիռ մասը որևէ այլ աղբյուրում այլևս վկայված չէ և այս հանգամանքը էլ ավելի է կարևորում KUB XXIII 72+-ի պատմագիտական արժեքը:

Տեքստի երրորդ բաժնի սկզբում երկու ցուցակներով (ըստ քաղաքների, ըստ երկրների և քաղաքների) հիշատակվող տեղանունները կազմում են այն քաղաքական միավորները, որոնց հետ խեթական արքան թարմացրել էր իր՝ նախկինում կնքած պայմանագիրը (կամ պայմանագրերը): Ոչ պակաս կարևորություն է ներկայացնում Պախխուվայի ապստամբության հետ կապված և տարածաշրջանի «երկրների» ապագա հավատարմության երաշխավոր հանդիսացող քաղաքական միավորների ցուցակը: Սրանցից զատ, կա տեղանունների ևս մի խումբ, որտեղ ներկայացված են Պախխուվայի կողմից զավթված՝ խաթթի արքային պատկանող բնակավայրերը:

## Առաջին ցուցակ

1. Šullamma
2. Zanzaliya
3. Lillima
4. Hinzuta
5. Wattarušna
6. An(?)/[.....]
7. Tahhiša
8. Alatarma
9. Pališna
10. [.....]
11. Mararba
12. Taḫišna
13. Ḫalma

## Երկրորդ ցուցակ

1. KUR<sup>URU</sup> Išua
2. KUR<sup>URU</sup> Paḫḫuwa
3. <sup>URU</sup> Zuhma
4. KUR<sup>URU</sup> Ḫ[urri]
5. <sup>URU</sup> Maldiya

Այս երկու ցուցակները, չնայած կազմված են տարբեր սկզբունքներով, ըստ տրամաբանության, պիտի համընկնեն:

Առաջին ցուցակում վկայված են բացառապես քաղաքներ (քնակավայրեր), որոնցից ոչ մեկը չի համընկնում երկրորդ ցուցակի քաղաքներից որևէ մեկի հետ: Մնում է ենթադրել, որ դրանք երկրորդ ցուցակի երեք երկրների քնակավայրերն են, մի բան, որ կարելի է հիմնավորել:

Այսպես, առաջին ցուցակի երեք քաղաքներ (հավանաբար, նաև մեկ այլ քաղաք) հիշատակվում են որպես Իսուվայի քաղաքներ (տես ստորև): Եվս երկու քաղաք (Taḫhiša և [.....]), եթե դրանց «ավագներին» համարենք պախխուվացիներ (տես վերը), ապա հնարավոր է, որ եղել են Պախխուվայի քաղաքները:

Եզրակացությունը հետևյալն է: Երկրորդ ցուցակը ակնհայտորեն լիակատարն է, որում երեք երկրների քաղաքներին (առաջին ցուցակ) ավելացվել են այն երեք քաղաքները, որոնք չեն կազմել վերոհիշյալ երկրների մասը: Առաջին ցուցակում հիշատակվում են Խաթթուասաի ժողովին

ներկա «ավազները», իսկ երկրորդում՝ այն երկրները և քաղաքները, որոնց անունից կնքվել է պայմանագիր հսթական տեղության հետ:

Վերինեփրատյան ավազանի խեթահպատակ երկրների տեղադրությունը հետևյալ պատկերն է ներկայացնում:

#### URU **Alatarma/e**

Բացի մեր տեքստից, վկայված է URU A-la-tar-me ձևով Թուրխալիյաս IV-ի և Իսուվայի արքայի (թերևս, Էխիշարրուման) միջև կնքված պայմանագրում<sup>189</sup>: Այստեղ Ալաթարմեն հիշատակվում է որպես մի քաղաք, որի մոտ խեթական զորքը պարտություն էր կրել հակառակորդից<sup>190</sup>: Տեքստի մեկ այլ հատվածում հիշատակվում է խեթերի պարտությունը Նիխրիյա քաղաքի մոտ<sup>191</sup>: Եթե ենթադրենք, որ երկու դեպքում էլ խոսքը միևնույն իրադարձության մասին է, ապա կարելի է եզրակացնել, որ Ալաթարմեն Նիխրիյայի մոտ է գտնվել: Սակայն Նիխրիյայի տեղադրության հարցում առկա տարածայնությունները<sup>192</sup> ստիպում են ձեռնպահ մնալ Ալաթարմա/եի տեղադրության վերաբերյալ ավելի կոնկրետ ենթադրությունից: Ամեն դեպքում, հաշվի առնելով դրա հիշատակությունը վերինեփրատյան տարածաշրջանի քաղաքական աշխարհագրությունը, Ալաթարման հազիվ թե գտնվեր Հյուսիսային Միջագետքում, եթե այս բնակավայրի հետ սերտորեն առնչվող Նիխրիյան տեղադրվի Ծուփքից և Աղձնիքից հարավ (տես վերը):

#### URU **Halma**

Վ. Խաչատրյանը համեմատում է Խարբերդի մոտ գտնվող Խալ բնակավայրի անվան հետ<sup>193</sup>:

<sup>189</sup> KBo IV 14 (= CTH 123, հրատ.՝ Stefanini 1965). այս տեքստը կարող էր լինել նաև Նախկին պայմանագրի մասին մի յուրատեսակ հիշեցում:

<sup>190</sup> KBo IV 14 II 9ff.

<sup>191</sup> Տեքստի այս հատվածի և ընդհանրապես Նիխրիյայի ճակատամարտի մասին տես Singer 1985: 105ff.

<sup>192</sup> Այս տեղանունը, որը վկայված է առաջավորասիական մի շարք երկրների աղբյուրներում (Աշշուր, Մարի, Ասորեստան, Խաթթի, Ուրարտու) սկսած Հին ասորեստանյան շրջանից (մ.թ.ա. XX/XIX դ.) իր գոյության բազմաթիվ տարբերակներով (Nahiria, Nahria, Niharia, Niri, Naviri, Nihriya, Nihiriani), մասնագետների կողմից տեղադրվել է ամենատարբեր շրջաններում՝ պատմական Ծուփքում և Աղձնիքում, ինչպես նաև Հյուսիսային Միջագետքում՝ ներկայիս Տուր Արդին լեռնաշղթայից հարավ (հանգամանալի քննարկումը առկա աղբյուրների տեսությամբ տես Манахџян 1956: 136coll.; Singer 1985: 105ff.; Miller 1999: 99ff. և այլն). կարծիքների տեսությունը՝ Քոսյան 2004ա: 73-74:

<sup>193</sup> Խաչատրյան 1998: 36:

### <sup>URU</sup>He/inzuta

Մուրսիլիս I-ի «Տարեգրություններին» պատկանող KBo XXII 3 + KUB XXXVI 103,7-ում <sup>URU</sup>Heinzuta-ի հիշատակությունը հստակ տեղադրման համար հիմք չի տալիս: Մեկ այլ տեքստ՝ «միջին խեթական» փուլում կազմված KUB XXVI 62-ը մատնացույց է անում Իսուվայի տարածքը<sup>194</sup>:

Անկասկած, տվյալ պարագայում գործ ունենք հայկական աղբյուրների Անծիտ/Հանծիտի (դասական աղբյուրների Anzitene) հետ՝ Մոփքում, ժաման. Հազար լճից հյուսիս<sup>195</sup>: Ժամանակին այն համադրվել է անտիկ, հայկական և այլ աղբյուրներում հիշատակվող Անզ/ծիտ, Անզիտենե, Թիլ-էնզիտ և այլ տարբերակներով քնակավայրի հետ, որը գտնվում էր Խարբերդից հարավ-արևելք<sup>196</sup>: Խինձուտայի պատկանելությունը Իսուվային միանշանակ հավաստում է նաև Թիզլաթպալասար I-ի հյուսիսային արշավանքների նկարագրությունը, որտեղ հիշատակվում է <sup>URU</sup>En-za-ta ša <sup>KUR</sup>i-šu-a «Իսուվա երկրի էնզատա քաղաքը»<sup>197</sup>:

### <sup>URU</sup>Lillima

Առայժմ որևէ կովան այս տեղանվան տեղադրության համար գոյություն չունի, բացի Իսուվայում կամ դրա մերձակայքում գտնվելուց: Նոր ժամանակներում վկայված տեղանվան հետ համադրումը թույլ է տվել Վ. Խաչատրյանին առաջարկելու Արղանամադենի (Էրզանիմադեն) մոտ գտնվող մի գյուղի հետ նույնությունը<sup>198</sup>:

### <sup>URU</sup>Mararḫa

Առայժմ այս տեղանվան տեղադրության և ստուգաբանության վերաբերյալ որևէ առաջարկություն չի եղել:

### <sup>URU</sup>Pališna

Համադրվել է ժաման. Էլազդի մոտ գտնվող քյուզանդական աղբյուրների Պալինեսի ամրոցի (Palines/kastron Palios) և հայկ. Պաղինի

<sup>194</sup> Տեքստի համապատասխան հատվածի հրատարակությունը և մեկնաբանությունները տես Քոսյան 2004գ; Kosyan 2018 (հրատ. ընթացքում):

<sup>195</sup> KAH II 66, ԴԿ 5f. + 69,9 (համադրումը՝ Klengel 1976: 86):

<sup>196</sup> Адомиц 1908: 32. Վկայությունները և պատմական համաոտտ ակնարկը տես Հակոբյան և այլք 1988: 280:

<sup>197</sup> Klengel 1976: 85f.

<sup>198</sup> Խաչատրյան 1998: 36:

հետ<sup>199</sup>: Տեղանունը կազմված է խեթ. -sna տեղանվանակերտ վերջածանցով<sup>200</sup>:

#### URU<sup>201</sup>Sullamma

Տեղադրությունը Իսուվայում<sup>202</sup> վիճարկելի չէ, քանի որ հիմնվում է Մուվատալլիս II-ի մի տեքստում հիշատակվող «Սուլլամայի Իշտար» աստվածուհու հիշատակության վրա՝ ի թիվս Իսուվայի աստվածների<sup>203</sup>: Դատելով մ.թ.ա. XIII դ. մի խեթական տեքստից, Սուլլաման (գրված է Sullama՝ մեկ I-ով)<sup>203</sup>, այս բնակավայրը պետք է լիներ Իսուվայի թագավորության կարևոր քաղաքական կենտրոններից մեկը: Ավելի կոնկրետ տեղադրությունը հնարավոր չէ հետագայի համահունչ կամ մոտավորապես համահունչ տեղանունների բացակայության պատճառով<sup>204</sup>:

#### URU<sup>205</sup>Tabiša

Առաջարկվել է համադրել անտիկ աղբյուրների Digisene-ի հետ, ժաման. էլզադի (հայկ. Խարբերդ) մոտ: Համադրությունը հայկ. Դեզիք գավառի անվան հետ անվանաբանական մակարդակով<sup>205</sup> ընդունելի է (տես, սակայն, հաջորդ տեղանվան մեկնաբանությունը):

#### URU<sup>206</sup>Tabišna

Հղելով Վ. Տոմաշեկին, Յ. Լևին առաջարկել էր այս տեղանունը համադրել դեռևս կապադովկիական աղյուսակներից (մ.թ.ա. XIX-XVIII դդ.) հայտնի Di-gis-ša-na/Di-ki-ša-na-ի և հայկ. աղբյուրների Դեզիք գավառի անվան հետ<sup>206</sup>:

<sup>199</sup> ASVOA 4.3; Խաչատրյան 1998: 36.

<sup>200</sup> Laroche 1961: 88; Խաչատրյան 1998: 43 (գտնում է, որ տեղանվան հիմքում հայերեն *պալ* «քարաժայռ» բառն է):

<sup>201</sup> TAVO, Bd.15, 1987, B VI 14.

<sup>202</sup> KUB VI 45 ԴԿ II 64/ VI 46 ՀԿ III 30 (CTH 381, հրատ.՝ Singer 1995). RGTC VI/I: 364; ASVOA 4.3: Tav. XVI.

<sup>203</sup> KUB LIV 1 ԴԿ II 9 (հրատ. Archi und Klengel 1980): Միևնույն տեքստում հիշատակվում է նաև Սուլլամա անունով լեռ (KUB LIV 1 ՀԿ II 21), որը, բնականաբար, պետք է գտնվեր համանուն քաղաքի մերձակայքում:

<sup>204</sup> Բացառություն է կազմում Վ. Խաչատրյանի կողմից առաջարկված համադրությունը հայկական աղբյուրների Սղամ բնակավայրի հետ (Хачатрян 1971: 110տա.):

<sup>205</sup> Tomaschek 1903: 543f.; Գ. Նոյմանի կարծիքով (Neumann 1988: 255), կազմված է -issa տեղանվանակերտ վերջածանցով:

<sup>206</sup> Lewy 1950: 419 n.294.

Այս և նախորդ տեղանունների նույնականությունը բացատրվում է, քանի որ դրանք ներկայացված են միևնույն ցուցակում: Սրանցից միայն մեկը կարող էր համապատասխանել հայկ. Դեզիքին:

#### **URU<sup>207</sup>Wattarušna**

Հավանաբար, նույնպես գտնվել է Իսուվայում<sup>207</sup>: Վատտարունայի՝ առայժմ թվով չորս հիշատակությունները խեթական տեքստերում հնարավորություն չեն ընձեռում առաջարկելու որևէ հիմնավոր ենթադրություն դրա տեղադրման համար: Մասնագետները վաղուց ի վեր նկատել են այս տեղանվան հիմքի արտաքննապես ակնհայտ կապը խեթ. watar «ջուր, աղբյուր» բառի հետ<sup>208</sup>, ինչը կարող է նշել դրա տեղադրությունը ինչ-որ ջրառատ վայրում<sup>209</sup>:

#### **URU<sup>210</sup>Zanzalia**

Սա այս տեղանվան միակ վկայությունն է խեթական և ընդհանրապես սեպագրական աղբյուրներում: Տեղադրության համար որևէ կովան չկա<sup>210</sup>:

### **Երրորդ ցուցակ**

Այս ցուցակում ներառված են երկու երկրներ, որոնք խեթական արքայի կողմից հանդես են գալիս որպես տարածաշրջանում Պախխուվայի և մյուսների հավատարմության երաշխավորներ: Այս երկուսի տեղադրությունը բարդությունների հետ է կապված առաջին հերթին KUB XXIII 72+ի պատմական համատեքստի իմաստավորման առումով:

#### **1. URU<sup>211</sup>Pittiyariga**

<sup>207</sup> Տես Քոսյան 2004ա: 101 (RGTC VI.1-ում և RGTC VI.2-ում բացակայում է այս տեղանվան ևս մեկ հիշատակությունը՝ KBo XLV 179 ԴԿ II 8 – URU<sup>211</sup>Wa-at-ta-ru-u[š-na]);

<sup>208</sup> Forrer 1938: 180 Anm.3; Laroche 1961: 79; Neumann 1988: 260. խեթական տեքստերում վկայված են այս նույն արմատով կազմված երկու տեղանուններ (հնարավոր է, դրանք նույնական են)՝ URU<sup>211</sup>Wattarwa (KBo II 1 II 21,25; KUB XXVI 43 I 31) և URU<sup>211</sup>Wattaruwa (KBo X 30 III 4).

<sup>209</sup> Ըստ Գ. Նոյմանի (Neumann 1988: 260), այս տեղանունը կարելի է թարգմանել որպես «վայր, որտեղ կան բազմաթիվ աղբյուրներ»:

<sup>210</sup> Գ. Ջահուկյանը և Վ. Խաչատրյանը, ելնելով հայոց լեզվի քառապաշարի հետ արտաքին նմանությունից, առաջարկում էին դրա հիմքում տեսնել հայ. *ժանժաղ* բառը (Джагыагн 1988: 78; Խաչատրյան 1998: 43):

## 2. URU<sup>200</sup>Duggama

Դատելով տեքստի հակառակ կողմի առաջին տողից, Պիտտիյարիգա և Դուգգամա քաղաքներին խեթական արքան պարտավորեցրել էր ապագայում ապահովել տարածաշրջանում հնարավոր անցանկալի բարդացումներից: Պետք է ենթադրել, որ սույն քաղաքները խեթերի կողմից դիտվում էին որպես արևելքում իրենց առավել վստահելի կախյալ քաղաքական միավորները:

### URU<sup>201</sup>Pittiyariga

Խեթական աղբյուրներում այս անունով քաղաքի հիշատակությունների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրելու միմյանց հետ չառնչվող երկու տարբեր քնակավայրերի առկայություն: Խեթագիտական հրատարակություններում Պիտտիյարիգա անունով երկու տարբեր քաղաքների առկայության մասին առայժմ ենթադրություններ չեն արվել<sup>201</sup>, ինչի հետևանքով հաճախ մասնագետները կանգնում են անլուծելի խնդիրների առջև:

Առաջին Պիտտիյարիգան կանոնավոր հիշատակվում է դիվանագիտական քնույթի տեքստերում (պայմանագրեր) որպես խեթական կողմի աստվածներից մեկի՝ Ամպրուպի աստծո (ՎU) պաշտամունքի վայր, ինչի հիման վրա այն պետք է տեղադրվի Խաթթիի տարածքում, սակայն ոչ նրա անմիջական ենթակայությունից դուրս ընկած շրջանում<sup>202</sup>:

Խեթական ողջ սեպագրական կորպուսում Պիտտիյարիգայի միակ վկայությունը, որը կարող է վկայել այս քաղաքի արևելյան տեղադրության օգտին, KUB XXIII 72+-ն է:

Մասնագետների շրջանում բանավեճերի առարկա հանդիսացող այս խնդրի պարզաբանումը կարող է հստակեցվել միջին խեթական փուլով թվագրվող մի տեքստի մեկնաբանության միջոցով: Խոսքը KUB XXXI 79-ն է, որտեղ խոսվում է ինչ-որ մի գետի վրա նավակներով մթերք

<sup>201</sup> RGTC VI/1 և RGTC VI/2 (տես համապատասխան զխաբատերը): Վերջերս ներկա ուսումնասիրության հեղինակներից մեկի կողմից առաջարկվեց Պիտտիյարիգա անունով երկու տարբեր քնակավայրեր ենթադրել, մեկը վերինեփրատյան գոտում, մյուսը՝ Հալիսի վերին հոսանքների շրջանում (Kosyan 2017): Նշենք, որ խեթական սեպագրական տեքստերում այլ համանուն տեղանուններ ևս վկայված են (նույն տեղում, հղելով Gurney 1992-ը):

<sup>202</sup> Օրինակ, KBo I 4; KBo IV 13; KBo V 3; KBo V 9; KBo XXI 26 [dIM ձևով]; KUB XIX 50; KUB XXIII 77+77a; KUB XXVII 1 և KUB XXVII 6; KUB XLVII 64: Խեթական պայմանագրերում առկա աստվածային վկաների ցուցակների մասին տես Yoshida 1996:

փոխադրելու մասին<sup>213</sup>: Այստեղ գետի հոսանքով ներքև նավարկության ընթացքում հաջորդաբար հիշատակվում են հետևյալ քնակավայրերը՝ Arziya-Pittiyariga-Samuha: Եվ քանի որ վերոհիշյալ քնակավայրերի հետ առնչվող խեթական տեքստերը նշում են հաթթիի արևելյան կամ դրանց հարակից շրջանները, ապա առաջարկվել են երկու գետերի թեկնածություններ՝ Եփրատ կամ Հալիս<sup>214</sup>: Համապատասխանաբար, առաջարկվել են Պիտտիյարիգայի տարբեր տեղադրություններ, որոնք հենվում են ինչպես ժամանակակից, այնպես էլ ավելի վաղ շրջաններում աղբյուրներում հիշատակվող տեղանունների հետ արտաքին նմանության վրա<sup>215</sup>: Ընդունելով այն հանգամանքը, որ ներկայումս հնարավոր չէ վստահաբար կոնկրետացնել Պիտտիյարիգայի տեղադրությունը, անհրաժեշտ է նշել հետևյալը:

Խեթական աղբյուրներում ակնհայտորեն քննարկման առարկա երկու նույնանուն քաղաք/քնակավայր է գոյություն ունեցել: Դրանցից մեկը գտնվել է խեթերի անմիջական տիրապետության տակ ընկած շրջանում, ինչը վկայված է ի դեմս խեթական տեքստերում պարբերաբար հիշատակվող այդ քաղաքի աստվածության: Երկրորդ Պիտտիյարիգան պետք է գտնվեր Եփրատյան գոտում, սույն հետազոտության առարկա տարածաշրջանում: Այս առումով հատկանշական է, որ մասնագետների կողմից իրավացիորեն որպես խեթա-հայասական պայմանագիր դիտվող KUB XXVI 39 տեքստում Պիտտիյարիգայի Ամպրոպի աստվածը նույնպես հանդես է գալիս խեթական կողմի աստվածների ցանկում: Այս փաստարկը արտակարգ կարևոր է, քանի որ վերոհիշյալ ցուցակներում ներառված են միայն բուն հաթթիի պաշտամունքային կենտրոնները ներկայացնող աստվածությունները<sup>216</sup>: Այլապես ուղղակի անհասկանալի

<sup>213</sup> «Գետային նավարկություն» պայմանական անվանումը կրող տեքստի հրատարակությունը տես Hagenbuchner 1989: 136ff.; Hoffner 2009: 81ff.; Marizza 2009: 123ff. (CTH 188), նաև վերը՝ Գլուխ II:

<sup>214</sup> Երկու գետերից մեկի հավանականության խնդրի քննարկումը տես Garstang and Gurney 1959: 33ff.:

<sup>215</sup> Bilgiç 1945/51: 27f. (Պերտեկ); Ünal 1974: 209f. (Եփրատի և նրա արևմտյան վտակ Թոխամասոփ միախառնման շրջանում); Garstang and Gurney 1959: 33f. և Fortanini 1979: 184 n.105 (վերջինս նշում է կոնկրետ ժաման. Թեքքեքյոյը՝ Չարայի մոտ, Հալիսի ափին); Laroche 1985: 91f. (Մալաթիայից հյուսիս՝ ժաման. Սամուկա քնակավայրը); Houwink 1970: 62 n.31 (բուն Եփրատի կամ Արածանիի ափին); Մարտիրոսյան 1961: 96f. և Хачатрян 1971: 54f.; 1998: 35 (Բթաոիճ՝ Երզնկայից արևելք) և այլն:

<sup>216</sup> Այսպես է ամենուրեք, սակայն մեկ բացառությամբ՝ Ներիկ քաղաքի, որը խեթական տեքստերի գոյության մեծ մասի ընթացքում դուրս էր հաթթիի տիրապետությանից (գտնվում էր Հալիսի գետաբերանի շրջանում) (տես RGTC VI/1:



կլիներ, թե ինչու պիտի խեթական արքան Հայիսի ափին գտնվող քաղաքի կառավարչին հանձնարարեր ապահովել եփրատյան տարածաշրջանի «երկրների» հավատարմությունը: Պիտոտիյարիգայի արևելյան տեղադրությունը կարող է լրացուցիչ անուղղակի ապացույց ստանալ ի դեմս հաջորդ երաշխավոր քաղաքի՝ Դուզգամայի, որը հստակ տեղադրվում է Հայասայում<sup>27</sup>:

#### <sup>URU</sup>Duggama

Այս քաղաքը գրության տարբերակներով<sup>28</sup> վկայված է ընդամենը երեք տեքստերում՝ Մուրսիլիս II-ի «Տարեգրություններում» որպես Հայասայի կարևոր բնակավայրերից մեկը, մեր հետազոտության առարկա տեքստում և խեթա-հայասական մի պայմանագրում (KUB XXVI 39), որտեղ հիշատակվում է այս բնակավայրի աստված Բալտայքը (<sup>B</sup>Baltaik): Ինչպես և Պիտոտիյարիգան, Դուզգաման նույնպես հստակ չի տեղադրվում: Ընդ որում առաջարկվել են ավելի քան մեկ տասնյակ տեղադրություններ Փոքր Հայքից ու Սև ծովից մինչև Վանա լճի առափնյա գոտի ընկած ընդարձակ տարածքում: Այս բոլոր տեղադրությունները հենվում են անտիկ աղբյուրներից մինչև նոր ժամանակներում այս տարածաշրջանում հիշատակված տեղանունների հետ համադրության վրա<sup>29</sup>:

Ինչպես էլ որ լուծվի Դուզգամայի տեղադրության խնդիրը, այս տեղանունը անհրաժեշտ է փնտրել Հայասայում, այն է՝ եփրատից արևելք մինչև Վանա լիճ ընկած շրջանում կամ դրանից քիչ հյուսիս:

### Չորրորդ ցուցակ

Պայմանագրի տեքստի երեք տարբեր հատվածներում հիշատակվում են ստորև թվարկվող չորս բնակավայրեր, որոնք գրավվել էին

---

286f.): Պատճառը Ներիկի կարևորագույն նշանակությունն էր խեթերի կրոնապաշտամունքային կյանքում դեռևս վաղ փուլից:

<sup>27</sup> RGTC VI/1: 435f.; #ոսյան 2004: 98-99.

<sup>28</sup> Գրության տարբերակները տես նախորդ ծանոթագրության մեջ հղված աշխատություններում:

<sup>29</sup> Forrer 1931: 6ff.; Goetze 1940: 47 n.183; Garstang 1943: 51ff.; Garstang and Gurney 1959: 36ff. (անտիկ աղբ. Colonia՝ ժաման. Շապին-Գարաաիսարի մոտ), Adontz 1946: 39f. (անտիկ աղբ. Dagona՝ Փոքր Հայքում), Cornelius 1973: 194, 349, Anm.22 (Սև ծովի ափին), Дьяконов 1968: 82, прим.16 (Լիկոս գետի հովտում կամ մոտակայքում), Хачатрян 1971: 138слл. (Թորթում գետի ավազանում) և այլն:

պախխուսակացիների կողմից և տվյալ պահին գտնվում էին նրանց հսկողության ներքո: Սրանցից ոչ մեկը խեթական տեղանվանական կորպուսում այլևս չի հիշատակվում, ինչի հիման վրա հնարավոր է ենթադրել, որ այդ բնակավայրերը կարող էին գտնվել արևելքում Խաթթիի ազդեցության ոլորտի՝ Պախխուսվայի հետ սահմանամերձ գոտում: Այս բնակավայրերի մոտավոր տեղադրության խնդիրը, ըստ այդմ, կարող է որոշակիացվել միայն Պախխուսվայի տեղադրության ճշգրտումից հետո միայն: Եթե Պախխուսվան գտնվել է Իսուվայից արևելք, հյուսիս-արևելք (Բյուրակնի լեռների շրջանում, ապա որպես խեթական տարածք կարող էր դիտվել Եփրատից հյուսիս ընկած շրջանը (օր., Կումմախայի մերձակայքում կամ ավելի ընդարձակ մի տարածքում, օրինակ, Երզնկայի դաշտը): Իսկ եթե Պախխուսվան, ըստ գերիշխող տեսակետի, գտնվել է Եփրատի մեծ ոլորանի մոտ, ապա դրանք նպատակահարմար կլինի փընտրել այդ շրջանում, այսինքն, Եփրատի և Հալիսի վերին հոսանքների միջև: Պախխուսվայի տեղադրության առաջին տարբերակը թվում է առավել հավանական:

Մասնագիտական հրատարակություններում վերոհիշյալ տեղանուններից ոմանց համար առաջարկվել են որոշ ենթադրություններ, որոնք չեն հենվում որևէ հիմնավոր փաստարկի վրա:

#### URU **Aparhula**<sup>220</sup>

Այս քաղաքի տեղադրությունը պարզ չէ, քանի որ սա դրա միակ հիշատակությունն է: Ենթատեքստը կարող է հուշել, որ այն մյուս երեքի պես գտնվել է մի տարածքում, որը կամ սահմանակից էր Պախխուսվային կամ գտնվում էր վերջինից հասանելի հեռավորության վրա:

#### URU **Huria**<sup>221</sup>

Այս տեղանունը առանձնահատուկ ուշադրության առարկա է, քանի որ խեթական տեքստերում հիշատակվում են նմանահունչ բազմաթիվ տեղանուններ Խաթթիի տարբեր շրջաններում<sup>222</sup>: Ընդ որում սրանք, մեկ բացառությամբ, գրված են առանց քաղաքի կամ երկրի դետերմինատիվի, ինչը թույլ է տալիս այն թարգմանել որպես «խուրրիական» (ածականական իմաստով), այն է՝ խուրրիներով բնակեցված բնակավայր կամ շրջան: Եվ միայն KUB XXIII 72+-ում է այս տեղանունը հանդես գալիս դետերմինատիվով: Վերը ներկայացված երկրորդ ցուցակում արևա

<sup>220</sup> RGTC VI/1: 26; Քոսյան 2004: 35.

<sup>221</sup> RGTC VI/1: 119; Քոսյան 2004: 38.

<sup>222</sup> RGTC VI/1: 119ff.

<sup>223</sup> Խ[urri]-ն կարող է ակնարկել վերինեփրատյան տարածաշրջանում խորրիական բնակչության անկալների գոյության օգտին<sup>223</sup>, ինչը, սակայն, հատուկ մեկնաբանության կարիք ունի:

Խեթական տեքստերում վկայված են Խurri տերմինի մի շարք կիրառություններ, որոնք հնարավոր չէ ընկալել բառացիորեն: Ստորև ներկայացվելիք օրինակները առավել քան խոսու են:

Այսպես, խեթական արքա Թուդխալիյաս II-ի իշխանության գալու հանգամանքների մասին պատմող տեքստում հիշատակվում է հստակ հնդարիական անուն կրող մի զորավար՝ Kartasuraš-ը, ով առաջնորդում էր «խորրիներին»<sup>224</sup>:

Եվս մի տեքստ, որ թվագրվում է Հին թագավորության շրջանով, թվարկում է հնդարիական անուններ կրող սիրիական տարածաշրջանի խորրիական արքայիկների, ովքեր մարտնչում էին խեթական բանակի դեմ՝ Uruttiti, Uwagazzani<sup>225</sup>:

#### URU **Halmišna**<sup>226</sup>

Առայժմ միայն Վ. Խաչատրյանն է փորձել տեղայնացնել, հենվելով այն մտայնության վրա, որ այս տեղանվան հայերեն ձևը խեթերը կարող էին թարգմանել խեթերեն: Ըստ նրա, Խalmeša- բառը խեթերենում նշանակել է «երգ», և սրա հիման վրա առաջարկել է խնդրո առարկա տեղանունը Նույնացնել Դերսիմի Երգեհոն անվանումը կրող գյուղի հետ<sup>227</sup>: Իսկ ավելի վաղ Նա այս բնակավայրը փնտրում էր խեթական տեքստերում բազմիցս հանդես եկող կասկական Իսխուախտտա քաղաքից (URU **İšḫupitta**) հյուսիս, այսինքն Դերսիմից բավական հեռու<sup>228</sup>:

Առաջարկված տեսակետի առնչությամբ նշենք, որ խեթ. Խalmeša-բառը, ըստ հայտնի խեթագետ Է. Լարոշի, որը հղվում է լեզվաբան-խե-

<sup>223</sup> Houwink ten Cate 1970: 61 n.28. հեղինակի կարծիքով, հնարավոր է ենթադրել, որ Թուդխալիյասի կողմից Միտտանիի նկատմամբ տարած հաղթանակից հետո «խորրի երկիր» տերմինը կիրառվում էր Իսուվայի և Ծոխմայի հարևանությամբ՝ դեպի Վանա լիճ ընկած հատվածում գտնվող խորրիական քաղաքական միավորների նկատմամբ (idem: 63):

<sup>224</sup> KUB XXIII 16 III 11 (Թուդխալիյասի տարեգրությունները): Այս անվան հստակ հնդարիական կառուցվածքը առաջինը նկատել էր դեռևս Բ.Լանդսբերգերը (Landsberger 1954: 130) և ընդունվել շատերի կողմից (Malamat 1954: 239; Houwink ten Cate 1970: 78):

<sup>225</sup> KBo III 60 III 15-16.

<sup>226</sup> RGTC VI/1: 71; Քոսյան 2004: 54.

<sup>227</sup> Խաչատրյան 1998: 44.

<sup>228</sup> Хачатрян 1971: 34сл., 88сл.

թագետների կողմից, նշանակել է ինչ-որ կենդանի<sup>229</sup>, այսինքն ամեն դեպքում ոչ երաժշտական գործիք: Նմանապես որևէ հիմք չկա ենթադրելու օտար ծագման հատուկ անունների թարգմանություն խեթերեն, ինչի համար այլ օրինակներ առայժմ գոյություն չունեն:

Խալմիսա տեղանվան հարցում հնարավոր է որոշակի պարզություն մտցնել հետևյալ դիտարկման միջոցով: Խեթական տեքստերում վկայված են միևնույն հիմքից կազմված զգալի քանակությամբ տեղանուններ –sna տեղանվանակերտ վերջածանցով կամ առանց դրա<sup>230</sup>: Այսպես, միայն KUB XXIII 72+-ում արևելյան «երկրների» շարքում հիշատակվում են երեք այդպիսի վերջածանց պարունակող տեղանուններ՝ URUPališna<sup>231</sup>, URUTaḫišna, URUWattarušna<sup>232</sup> (առաջին ցուցակ), որոնց վստահաբար կարելի է ավելացնել պախխուվացիների կողմից գրավված URUHalmišna-ն: Սրանցից երկրորդն ու երրորդը ունեն հիմքային կրկնակներ ի դեմս միևնույն ցուցակի URUTaḫiša-ի և Խաթթիի այլ շրջանում վկայված URUWatarwa-ի<sup>233</sup>:

#### URUPabḫura<sup>234</sup>

Պախխուրայի տեղորոշման առայժմ միակ տեղորոշումը առաջարկել է Ա. Պետրոսյանը, ով այս անվան հետ համադրել է Բյուրակնի լեռնաշղթայի մասը կազմող Պախր լեռնանունը<sup>235</sup>:

<sup>229</sup> Laroche 1961: 80f. ավելացնենք նաև, որ խեթ. ḫalmeša- բառի ստուգաբանությունը առայժմ պարզ չէ:

<sup>230</sup> Zippašna, Zippišna, Apzišna, Ḫapušna, Ḫapzišna, Dankušna և այլն (տես RGTC VI/1-ի համապատասխան գլխարաների տակ): Այս վերջածանցով կազմված տեղանունների ամբողջական ցանկը մեկնաբանություններով հանդերձ տես Laroche 1961: 84ff.

<sup>231</sup> Միևնույն ցուցակում առկա է –sna հիմքով կազմված URUPališna րեակավայրը, որի կապը նոր ժամանակներում Խարբերդի դաշտում հիշատակվող Պաղիսի հետ (տես վերը՝ Խաչատրյան 1998: 36) թվում է հավանական, իսկ կապը հայկ. միջնադարյան արքյուրների Բալուի հետ առնվազն անվանաբանական մակարդակով ավելի քան հնարավոր է:

<sup>232</sup> Sbu վերը տեքստում:

<sup>233</sup> RGTC VI/1: 481.

<sup>234</sup> RGTC VI/1: 295; Քոսյան 2004: 74-75.

<sup>235</sup> Պետրոսյան 1997: 83-85: Նա գտնում է, որ այս տեղանվան հիմքում ընկած է հե. bhng'ս- «շատ, խիտ, գեր» բառահիմքը, առաջարկելով քննարկվող տեղանունը բխեցնել ինչ-որ մի կենտումային լեզվից:

**ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**

Վերին եփրատի ավազանի քաղաքական աշխարհագրության վերը քննարկված պատկերը լրացնելու նպատակով արտակարգ կարևոր տեղեկություններ է պարունակում խեթական Հին թագավորության շրջանից հայտնի խեթական օրենքների մի հոդված (համար 54), որը վերաբերում է արտոնություններից ազատված մի քանի քաղաքների<sup>236</sup>: խեթական օրենքների հավաքը սկսվել է մ.թ.ա. 1500 թ. սահմաններում խեթական արքա Տելեպինուսի օրոք: Կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ հոդվածը պետք է թվագրվի դրանից ոչ շատ ուշ, այսինքն առնվազն մ.թ.ա. XV դ. առաջին կեսով, ինչը դրանում ներկայացված տեղեկատվությունը կմոտեցնի KUB XXIII 72+-ին: Ստորև ներկայացնենք այդ տեքստի համապատասխան հատվածը: Հոդվածը ներկայացնող երեք տեքստերն էլ համարժեք պատճեններ են, որոնցից առավել լավ պահպանվածը KBo VI 2 C4 III-ն է.

- 12) ka-ru-ú ERÍN<sup>MES</sup> Ma-an-da ERÍN<sup>MES</sup> Ša-a-la ERÍN<sup>MES</sup> Ta-ma-al-ki-ya  
ERÍN<sup>MES</sup> URU<sup>U</sup> Դa-[at-ra-a]
- 13) ERÍN<sup>MES</sup> URU<sup>U</sup> Za-al-pa ERÍN<sup>MES</sup> URU<sup>U</sup> Ta-aš-ti-ni-ya ERÍN<sup>MES</sup> URU<sup>U</sup> Դe-mu-wa LÚ<sup>MES</sup>  
G<sup>D</sup>B[AN LÚ<sup>MES</sup>NAGAR IS-SI]
- 14) LÚ<sup>MES</sup> IŠ Ú LÚ<sup>MES</sup> ka-ru-ḫa-le-eš-me-eš-ša lu-uz-zi na-at-ta ka[r-pi-i-e-er]
- 15) [š]a-ab-ḫa-an na-at-ta iš-še-er

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ**

- 12) «Նախկինում Մանդայի ջոկատները, Սալայի ջոկատները, Տամալկիյայի ջոկատները, Խա[տրայի] ջոկատները,  
13) Ցալպայի ջոկատները, Տասիխիյայի ջոկատները, Խեմուվայի ջոկատները, նե[տաձիգները, ատաղծագործները],  
14) ծիսականները և նրանց karuhali- մարդիկ luzzi չէին կ[րում],  
15) šahhan չէին կատարում»:

Վերոհիշյալ տեքստում թվարկվող քնակավայրերից ոչ մեկի տեղայնացումը հստակ չէ<sup>237</sup>: Մասնագիտական հրատարակություններում

<sup>236</sup> KBo VI 2 C4 III 12-15 = KBo VI 3 C4 15-18 = KBo VI 6 Դ4 I 19'-23'.

<sup>237</sup> Sbu RGTC VI.1 (ըստ գլխաբաների):

համար 54 հողվածում սրանց՝ հարկադիր աշխատանքներից (šahhan և luzzi) մի ժամանակ ազատված լինելու մասին սույն տեղեկությունը տարբեր կերպ է մեկնաբանվել: Այսպես, Հ. Օտտենը կարծում էր, որ այս բնակավայրերը ժամանակին կարևոր դերակատարում են ունեցել խեթական պետականության պատմության վաղ փուլում, այդ իսկ պատճառով էլ արտոնություններ են ստացել<sup>238</sup>:

Այս ենթադրությունը քիչ է հավանական, քանի որ նշված բնակավայրերը գրեթե առանց բացառության գտնվել են խեթական տերության ուղղակի քաղաքական ազդեցության ծայրամասային շրջաններում, քացի այդ խիստ հազվադեպ են հիշատակվում: Մասնավորապես, վերը հղված տեքստը Մանդայի միակ վկայությունն է, իսկ Սալան հիշատակվում է ընդամենը երկու անգամ: Առաջինը KUB XXVI 62-ում, երկրորդը KBo XLVIII 276 գուշակային տեքստում: Ընդ որում այս երկրորդի ենթատեքստը արտակարգ հետաքրքիր է այն առումով, որ Սալան անմիջականորեն կապում է Պիտտիյարիգա քաղաքի հետ.

#### ԴԿ, վերին եզր

URUŠa-la-aš URUṣi-it-te-ya-ri-ga-an wa-al-aḫ-zi

«Սալան Պիտտիյարիգային հարվածեց»:

Եթե այստեղ խոսքը Սալայից հավաքագրված վարձկան զինվորների մասին չէ, ինչպես թեականորեն ենթադրում է Մ. Ֆորլանինին<sup>239</sup>, ապա կարելի է ենթադրել, որ Սալան Պիտտիյարիգայի շրջակայքում կամ նրանից ոչ շատ հեռու պետք է գտնվեր:

Մյուս տեղանուններից Խատրան, հենվելով խեթական այլ տեքստերի տվյալների վրա, պետք է գտնվեր Իսուվայի հարավային շրջաններում<sup>240</sup>: Անկախ Խատրայի կոնկրետ տեղադրությանից, դրա խուվական անչակցությունը կասկածից վեր է, քանի որ այդ քաղաքի Անպրուպի աստվածը հիշատակվում է KUB VI 45/46-ում ի թիվս Իսուվայի այլ աստվածների.

<sup>238</sup> Otten 1973: 60; Klengel 1965: 230.

<sup>239</sup> Forlanini 2017: 6 n.27. Ֆորլանինին հետևում է Պիտտիյարիգայի՝ մասնազիտական զրականության մեջ արմատացած տեղադրությանը Հալիսի ափին, այնուհետև ենթադրելով, որ Սալան պետք է գտնվեր Կումմախայի շրջանում:

<sup>240</sup> Forrer 1922: 248; Goetze 1953: 69 n.134; Garstang and Gurney 1959: 119 և այլն: Ֆր. Կոռնելիուսը (1958b: 6, 15 Anm.37) և Վ. Խաչատրյանը (1998: 36-37) գտնում էին, որ այս տեղանունը պետք է ընթերցել Խաչարա (URUḫa-la-ra) որպես հիմք ընդունելով սեպագրական նշանացանկի at և la նշանների միջև եղած որոշակի նմանությունը:

𐎠𐎢𐎽𐎢𐎰 URU<sup>2</sup> Sullama 𐎠U URU<sup>2</sup> Hatra DINGIR LÚ<sup>MES</sup> DINGIR MUNUS<sup>MES</sup>  
HUR.SAG<sup>MES</sup> ÍD<sup>MES</sup> ŠA KUR URU<sup>2</sup> Šuwa

«Սուլլամայի Իշտարը, Խատրայի Ամպրոպի աստվածը, Իսուվայի աստվածները, աստվածուհիները, լեռները, գետերը»:

Խատրայից բացի, վերոհիշյալ տեքստում ներկայացված տեղանուններից առնվազն երկուսը ևս պետք է գտնվեին վերինեփրատյան գոտում:

### He/im(m)uwa

Այս տեղանվան մեծաքանակ հիշատակությունները<sup>241</sup> առայժմ թույլ չեն տալիս առաջարկելու կոնկրետ տեղադրություն: Վաղ շրջանի ուսումնասիրողները այն մոտավորապես տեղայնացնում էին մերձեփրատյան շրջանում կամ դրանից ոչ հեռու<sup>242</sup>: Հետագայում առաջարկվեց Խեմմուվա անվանումով երկու տարբեր քնակավայրեր տեսնել, ընդ որում կրկին անորոշ տեղադրությամբ<sup>243</sup>:

Համեմատաբար վերջերս մ.թ.ա. XIII դարով թվագրվող (հավանաբար, Խաթթունիլիս III-ի կամ նրա հաջորդ Թուլթխալիյաս IV-ի շրջանը<sup>244</sup>) խեթական մի գուշակային տեքստում հիշատակվող տեղանունների ուսումնասիրությունը<sup>245</sup> ցույց տվեց, որ այստեղ ներկայացված տեղանուններից երկուսը ամենայն հավանականությամբ համադրելի են Միջին ասորեստանյան տեքստերից հայտնի Ուրուատրիի ութ երկրներից երկուսի հետ:

Այսպես, նախորդ շրջանի մասնագետները նկատել էին խեթ. Խե/իմմուվա տեղանվան նմանությունը Ասորեստանի արքա Սալմանասար I-ի տեքստում հիշատակվող KUR Hi-im-me երկրանվան հետ

<sup>241</sup> RGTC VI.1: 108f.; RGTC VI.2: 39; Քոսյան 2004ա: 56-57.

<sup>242</sup> Փոքր Հայքում (Forrer 1922: 248), Եփրատի մոտ (Goetze 1953: 69), Իսուվայից արևմուտք, հարավ-արևմուտք (Miller 1999: 120f.):

<sup>243</sup> Cornelius 1958: 385; Von Schuler 1965: 21 և Anm.25; Collins 1987: 136ff. Մ. Ֆորլանինին է միայն փորձել տեղայնացնել Խեմմուվան՝ ժաման. Թոքատ քաղաքի մոտ՝ Յեշիլըրմաքի վերին հոսանքների շրջանում (Forlanini 1983: 16f. Anm.12), այն է՝ կասկական գոտում: Ընդ որում նա հղել է նաև այս քնակավայրը հիշատակող KUB XLIX 11 տեքստը, սակայն չի նկատել վերջինիս արևելյան առնչակցությունը (տես վերը տեքստում):

<sup>244</sup> Ըստ Թ. Վան դեն Հոուտի (Den Hart 1995: 122), այս տեքստը պետք է կազմված լինի Թուլթխալիյաս IV-ի օրոք, ավելի կոնկրետ՝ նրա և Թարխունտաստայի արքա Կուրունտայի միջև կնքված պայմանագրից (Bronze tablet) հետո ընկած շրջանով:

<sup>245</sup> KUB XLIX 11 (= CTH 577). Տեքստի համապատասխան հատվածների հրատարակությունը տես Kosyan 2011, քննարկումը՝ Kosyan 2015a: 273f.

(Ուրուատրիի «երկրներից» մեկը)<sup>246</sup>: Այս համադրության հավանակա-  
նությունը կարող է էլ ավելի ամրապնդվել Ուրուատրիի մեկ այլ «երկիր»  
KUR Ú-at-qu-un-ի<sup>247</sup> և KUB XLIX 11-ում հիշատակվող Ուտկունիսա  
(<sup>URU</sup>Ut-kuniša) տեղանվան համեմատությամբ<sup>248</sup>: Դիտարկելով խեթական  
տեղանվան գրության մեջ -(i)ša-ն որպես տեղանվանակերտ վերջածանց,  
կունենանք ասորեստանյան աղբյուրների վերջ նշված անվանումը:

Եթե վերոհիշյալ տեղեկատվությունը և Խեմմովայի՝ դրանից բխող  
համադրությունը Ուրուատրիի կազմում գտնվող «երկրներից» մեկի հետ  
որևէ հիմք ունի, ինչը շատ հավանական է, ապա կարելի է որոշակիորեն  
ենթադրել, որ խեթական օրենքներից մեկը ներկայացնող <sup>URU</sup>He-mu-wa-ն  
անհրաժեշտ է որոնել Վանա լճից մինչև Եփրատի վերին հոսանքներն  
ընկած շրջանում<sup>249</sup>: Միևնույն տեքստում հիշատակվող Ša-a-la-ն և  
հստակ խոսվական առնչակցություն ունեցող <sup>URU</sup>Ha-[at-ra-a]-ն կարող են  
ամրապնդել տեղանունների այս շարքի արևելյան տեղադրության մասին  
ենթադրությունը<sup>250</sup>:

## Šala

<sup>246</sup> Sommer 1947: 5ff.; Дьяконов 1951: н. 10, 39.

<sup>247</sup> Այս երկրանվանը համահունչ են Աշշուրբելվայի տեքստում հիշատակվող  
<sup>ŠADU</sup>Jatkun-ը (Weidner 1930-31: 82, Anm. 32) և Աշշուրաճիրպալ II-ի տեքստի  
<sup>URU</sup>Atkun-ը (Grayson, 1976: No. 546, p. 123):

<sup>248</sup> Այս համադրության հնարավորությունը ենթադրվել է Ե.Գրեյլանի կողմից  
(Գրեյլան 2005: 272):

<sup>249</sup> Իհարկե, նշված տարածաշրջանում քննարկվող տեղանվան տեղադրությունը  
հազիվ թե կասկածի տակ առնվի Ուրուատրիի տեղադրության հարցում առկա  
տարածայնությունների լույսի ներքո (Ուրուատրիի տեղորոշման վերաբերյալ  
տես Weidner 1930-31: 82, Anm. 32; Меликян 1960: 10ս.; Арутюнян 1985:  
17; Haas 1985: 23, նաև Nashef 1982: 274f. [այլ կարծիքների համար]):

<sup>250</sup> Ավելորդ չի լինի նշել Գր.Ղափանցյանի կողմից ժամանակին արված ենթադ-  
րությունը այս տեքստում հիշատակվող Ma-an-da-ի համադրելիության մասին  
հայկ. Մանդակունի նախարարական տան անվան հետ (Капанян 1940:  
378ссл.; 1948: 135ссл.). վերջիններիս կալվածքը նա տեղադրում էր Արածանիի  
վտակ Բիթլիսի սու գետի շրջանում: Է. Ֆորրերը այս Manda-ն առաջարկում էր  
որոնել Հայկական Տավրոսի և Բարձր Հայքի միջև (Forrer 1922: 248): Է.Ֆորրերի  
կարծիքով, Manda տերմինի տակ ասորեստանյան և քաբելոյան աղբյուրները  
հասկանում էին հնդեվրոպալեզու արիական ցեղերին: Manda-ն սեպագրական  
աղբյուրներում քազմիցս հիշատակվում է սոմձո-manda «մանդայի ջո-  
կատ/զորք» իմաստով (այս առաջիմ ոչ այնքան պարզաբանված խնդրի հան-  
գամանայի քննարկումը տես Komoróczy 1977; Adalı 2011):



Այս տեղանունը խեթական սեպագրական կորպուսում վկայված է ընդամենը երկու անգամ (KUB XXVI 62-ում<sup>251</sup> և վերը հղված խեթական օրենքները): Ինչպես և նախորդ տեղանունը, Սալայի համար նույնպես կարելի է մատնանշել Ուրուատրիի կազմում Սալմանասար I-ի կողմից հիշատակվող KUR Sa-lu-a-ն<sup>252</sup>: Վերջինս ժամանակին համադրվել է խեթական աղբյուրների Šala-ի հետ<sup>253</sup>, որը մոտավորապես պետք է գտնվեր Վերին Տիգրիսի ավազանում<sup>254</sup> կամ Վանա լճից հարավ, հարավ-արևմուտք ընկած շրջանում<sup>255</sup>:

Այսպիսով, վերոհիշյալ երկու տեղանունները իրենց ենթադրյալ միջինասորեստանյան զուգահեռների լույսի ներքո որոշակի տեղաշարժի հնարավորություն են ընձեռում խեթական տեքստերում հիշատակվող նաև մյուս տեղանունների տեղադրման հստակեցման հարցում: Խոսքը, մասնավորապես, Հայասայի և Ազգիի մասին է, որի տեղորոշումը առ այսօր ճշգրտված չէ: Եթե Šala-ն իրոք համապատասխանում է ասորեստանյան աղբյուրների Salua-ին, ապա համապատասխանաբար պետք է KUB XXVI 62-ում հիշատակվող <sup>URU</sup>Šala-ն և թերևս միևնույն ենթատեքստում վկայված մյուս տեղանունները կամ գոնե մի մասը նույնպես տեղաշարժվեն զգալիորեն հարավ, հարավ-արևելք:

<sup>251</sup> Տես վերը՝ Գլուխ II, 4:

<sup>252</sup> Միևնույն տեղանունը հայտնվում է Թիգլաթպալասար I-ի և Ադադնիրարի II-ի տեքստերում (Weidner 1957-58: 350; King 1902: 113):

<sup>253</sup> Дьяконов 1968: 85сл.

<sup>254</sup> Арутюнян 1985: 164сл.

<sup>255</sup> RGTC V: 228.

## ՎԵՐԻՆԵՓՐԱՏՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՆՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

KUB XXIII 72+ (նաև սրա հետ առնչվող KUB XXI 103) և KUB XXVI 62 տեքստերում պահպանվել են այս տարածաշրջանի «երկրների» բնակչության էթնիկ պատկանելության ուսումնասիրման համար կարևորագույն նշանակություն ունեցող եզակի անվանաբանական նյութեր: Վերոհիշյալ երեք տեքստերի ընտրությունը պատահական չէ այն առումով, որ սրանք վերաբերում են միևնույն ժամանակահատվածին, այն է՝ Թուրխալիյաս II-ի կողմից նվաճմանը անմիջականորեն հաջորդող փուլին, երբ փոքրասիական քաղաքական ազդեցությունը դեռևս նոր պիտի սկսվեր<sup>256</sup> և անկալելի է տարածաշրջանի էթնոլեզվական իրական պատկերի առկայությունը:

Իսուվայի և հարակից ցեղային քաղաքական կազմավորումների առնչությամբ խեթական սեպագրական տեքստերում պահպանված անձնանունների վերաբերյալ նախկինում կատարվել են զգալի թվով ուսումնասիրություններ<sup>257</sup>, որոնց հիման վրա հնարավոր է ներկայումս հանգել որոշ կարևոր եզրակացությունների:

Առաջին եզրակացությունը քննարկվող տարածաշրջանի օնոմաստիկոնի բազմալեզու բնույթն է: Այստեղ ներկայացված են առնվազն չորս հստակ տարբերակվող լեզուներ, որոնց պետք է հավելել զգալի թվով անուններ, որոնց լեզվական պատկանելությունը առայժմ անհայտ է մնում<sup>258</sup>:

<sup>256</sup> Նշենք, սակայն, որ Իսուվայի հնավայրերում իրականացված հնագիտական ուսումնասիրությունները կարծես վկայում են այն մասին, որ Կենտրոնական Փոքր Ասիայի մշակութային ազդեցությունը այստեղ ավելի վաղ պատմություն ունի: Այս շրջանի հնավայրերի ճարտարապետությունը, մասնավորապես, ամրաշինությունը մ.թ.ա. XVII դ. կեսերին արդեն իր վրա կրում էր հյուսիս-կենտրոնական Փոքր Ասիայի ազդեցությունը (Manueli 2017: 147): Սա կարող է նշանակել, որ վերինեփրատյան գոտում խեթական ազդեցությունը պետք է սկսվեր դեռևս Խաթթուսիյա I-ի և Մուրսիլիա I-ի ժամանակներից:

<sup>257</sup> Այդ անձնանուններին անդրադարձներ են կատարվել հետևյալ ուսումնասիրություններում՝ Forrer 1920; Goetze, 1954; Laroche 1966; 1981; Shevoroshkin 1978; Tischler 1982; Ջաիուկյան 1987: 323-387; Джаяукян 1988: 247-258; Kosyan 2006b; 2009; Քոսյան 2006:

<sup>258</sup> KUB XXIII 72+-ում և միևնույն աշխարհագրական տարածքին առնչվող KUB XXVI 62-ում հիշատակվող անձնանունների ուսումնասիրությունը, ինչպես նաև դրանց շարքում մի քանի լեզվական արեալների գոյության մասին տես Kosyan 2006b; 2009:

Ստորև ներկայացնենք այդ անձնանունները ըստ լեզվական պատկանելության: Վերոհիշյալ երեք տեքստերն են՝ 1 = KUB XXIII 72+, 2 = KUB XXVI 103, 3 = KUB XXVI 62, 4 = KBo XVI 48:

### ԽԵԹԱ-ԼՈՒՎԻԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ<sup>259</sup>

Կինիճ (3)  
Kalmahaziti (3)  
Kašiyara (1, 3) (երկրորդ տեքստում՝ Taraškuil-ի որդին)  
Kuwaš (3)  
Muwatalliš (1)  
Pata (3) (հանդես է գալիս որպես թվարկվող անձի հայր)  
Pattaliya (3) (Urawalkui(-)[š?]-ի որդին)  
Šantaš (1)  
Šantazitiš (1)  
Tarhundaziti (3) ( Kukku(-)?-ի որդին)  
Waltahiš (3)  
Walwazitiš (1)

Սրանցից երկուսը կարող էին Իսուվայում և դրա հարևանությամբ ընկած «երկրներում» ժամանակավորապես գտնվող խեթական պաշտոնյաներ լինել (Muwatalliš, Šantazitiš), իսկ երկուսը տեղական ցեղապետեր են (Šantaš, Walwazitiš) կամ հավաքագրված զինվորներ (Կինիճ-ը Temiya քաղաքից և Kuwaš-ը՝ Šala-ից, Walwazitiš՝ անձ[...]-ից):

Վերոհիշյալ անձնանունների առկայությամբ անհրաժեշտ է տալ պարզաբանումներ:

Խեթա-լուվիական ծագում ենթադրող անունների տարբերակումը հենվում է 1) հստակ խեթա-լուվիական բառաձևերի առկայության վրա (այդ թվում լավ վկայված անձնանվանակերտ վերջածանցներ), 2) բառահիմքի համար վերականգնվող խեթա-լուվիական զուգահեռի դեպքում, չնայած նման անձնանուն վկայված չէ:

### ԽԵԹԱ-ԼՈՒՎԻԱԿԱՆ ԲԱՌԱՇԻՄՔ

#### Haššana

Վ. Շևորոզկինը այս անունը բխեցնում է ենթադրյալ հե. \*has- «ծնունդ տալ, ծնեցնել» հիմքից<sup>260</sup>: Այս բացատրությունը կարծես ամրա-

<sup>259</sup> Նշենք, որ այս լեզվախմբում կարող էին տարբերակվել անվազն երկու լեզուների պատկանող անուններ, քանի որ խեթերենը և լուվիերենը ինքնուրույն լեզուներ են (երկրորդը ուներ մի քանի բարբառներ):

պնդվում է Քանեսի տեքստերում (մ.թ.ա. XIX-XVIII դդ.) վկայված երկու անձնանունների հիշատակությամբ, որոնց համար ենթադրելի է խեթ. *has- pawr* (*Hašarti, Hašiuman*)<sup>261</sup>:

### Urawalkui

Ըստ է. Լարոշի, զուտ խեթական բարդ կառուցվածք ունեցող անձնանուն է, կազմված *ura-* «մեծ» և *welku-* «խոտ» բառերից. հիշատակվում են նաև միևնույն հիմքից կազմված *Walkuwa* և *Walkui* անձնանուններ<sup>262</sup>:

### ԽՈՒՐՐԻԱԿԱՆ

#### Kumarpi

### ՀՆԴԻՐԱՆԱԿԱՆ<sup>263</sup>

#### Arziuttaš և Lupakiuttaš

Ժամանակին Գ. Ջահուկյանը առաջարկել էր *Arziuttaš* անունը թխեցնել հայ. *արծիւ* բառից, զուտ արտաքին որոշ նմանության պատճառով<sup>264</sup>: Այդ ենթադրությունը չի բացառվում, սակայն *-utta* վերջածանցը ստիպում է ենթադրելու համապատասխան ծագում նաև անվան հիմքի համար<sup>265</sup>:

Բացի սրանցից, միևնույն ենթատեքստում հիշատակվում են երկու պակասավոր անձնանուններ [*.....-ut*]-*ta-aš*: Սրանց հնդիրանական բնույթի մասին է վկայում *-utta* անձնանվանակերտ վերջածանցը, որը բացակայում է խեթական և խուրրիական օնոմաստիկոնում, սակայն հիշատակվում է սիրիա-պաղեստինյան տարածաշրջանում մ.թ.ա. XV-XIII դդ.: Դրանց կրողները այստեղի երկու փոքր քաղաքական միավորների՝ Ակշապայի և Գուդդասունայի կառավարիչներն են (*Indaruta*<sup>266</sup> և *Yamiu-*

<sup>260</sup> Shevoroshkin 1978: 237f. Նա այս անունը հիամեմատում է խեթ. *haššanna-* «ազգակից», լիկ. *xttana* («ազգականներին/ժառանգներին» - հոգն.տր.), *qehh-nedi* (նույն բառի գործ.հոլ.): Անվան *-n-* վերջածանցը, հավանաբար, սկզբնական *-nn-*, *haššatar/-nnaš -r/n-* հիմքից է ծագում:

<sup>261</sup> Laroche 1966: 321f.

<sup>262</sup> Laroche 1966: N.1437, p.197.

<sup>263</sup> KUB XXIII 72+-ում հիշատակվող պախիսուվական չորս անձնանունների հնդիրանական բնույթի մասին հանգամանորեն տես Քոսյան 2006; Kosyan 2015b:

<sup>264</sup> Джаукян 1988: 71,81:

<sup>265</sup> Sbu Քոսյան 2006: 248-253; Kosyan 2009: 93f.

<sup>266</sup> *'en-da-ru-ta/'in-tar-u-da = Ind(a)ruta*, որի համարժեքն առկա է Ռիզվեդայում՝ *Indrota/Indrauta* (Mironov 1933: 175f.; O'Callaghan 1948: 61,152): Ն. Միրոնովը նշում էր, որ վեդաներում վկայված է նաև *Indara* ձևը: Նա միաժամանակ

ta<sup>267</sup>): Այս անունները թեոֆոր կառուցվածք ունեն՝ Indar «Ինդրա» + -uta և Yami «Յամի» + -uta. Ինդրան և Յամին վեդայական դիցարանում լավ վկայված աստվածություններ են: Ինչ վերաբերում է -uta վերջածանցին, ապա այն նշանակում է «սիրելի, X-ից պահպանվող/հովանավորվող», այսինքն Ինդարուտա = «Ինդրայի սիրելի/Ինդրայից հովանավորվող», Yamiuta = «Յամիի սիրելի/Յամիից հովանավորվող»:

Գ. Ջահուկյանի կարծիքի անչափայամբ նշենք, որ գրության տեսանկյունից որևէ բարդություն այստեղ չկա, սակայն միաժամանակ անհրաժեշտ է ուշադրությունը հրավիրել հետևյալի վրա: Բոլոր այն դեպքերում, երբ որպես հնդիրանական ենթադրվող սեպագրական հատուկ անունների գրության մեջ առկա է z-ը, դրանց համար որպես հնդիրանական զուգահեռ առաջարկվող բառաձևում առանց բացառության ներկա է j-ն: Դա հստակ երևում է, օրինակ, Հյուսիսային Միջագետքի մ.թ.ա. II հազ. Նուզի հնավայրից հայտարերված տեքստերի հնդիրանական համարվող անձնանուններում: Այսպես, Ambizina = \*ambi-jina, Ašuzana = \*ašu-jana, Birazana = \*vira-jana և այլն: Հաշվի առնելով անձնանվանակերտ -utta վերջածանցի առկայությունը, Arziutta՞ անունը կարելի է մեկնաբանել որպես Arzi-ի (հնդիր. \*Arji-ի) սիրելի/Arzi-ից պահպանվող, հովանավորվող»:

#### ԿԱՍԿԱԿԱՆ

##### Kalimuna

Է. Լարոշը, առանց ստուգաբանություն առաջարկելու, այս անունը համադրում էր կասկական ցեղերի տարածքում գտնվող համանուն քաղաքի (<sup>URU</sup>Kalimuna<sup>268</sup>) հետ<sup>269</sup>: Նշենք, որ այս կարծիքը դժվար է կասկածի տակ առնել, քանի որ խեթական տեքստերում վկայված են ևս մի քանի բացարձակապես նմանահուն տեղանուններ և անձնանուններ. վերջիններս հիշատակվում են առանց տեղանվանակերտ վերջածանցի (Ammuna, Maša, Hurutta, Maraššantya [անձնանունը՝ Maraššanda] և այլն)<sup>270</sup>:

##### Piggana

Նման գրությամբ անձնանուն վկայված է *Մաշապ հյոյուքի* նամակ-

արիական ստուգաբանություն էր առաջարկում Ալշապա քաղաքանվան համար, որի կառավարիչը վերոհիշյալ Ինդարուտան էր (Akšapa = հին հնդկ. \*akšapā «անսասան» - p.185):

<sup>267</sup> ya-mi-u-ta (O'Callaghan 1948: 61,152).

<sup>268</sup> RGTC VI.1: 165.

<sup>269</sup> Laroche 1966: 268.

<sup>270</sup> Օրինակները տես RGTC VI.1 (ըստ գլխաբառերի):

ներից մեկում, որը կրում է Մալացցիյա քաղաքից ոմն կասկ<sup>271</sup>: Ըստ Ս. Ալփի, այս անունը թերևս նույնն է ինչ ավելի վաղ հայտնաբերված տեքստերից մեկում վկայված՝ մեկ g-ով և -ու վերջածանցով գրված Piganu-ն (KUB XLVIII 107 Vs.1 10)<sup>272</sup>, որը Ziharziya քաղաքի ազնվականներից էր (տեքստում «ավագ»)<sup>273</sup>:

### ԱՆՀԱՅՏ ԾԱԳՈՒՄ ՌՈՆԵՑՈՂ՝

Մեր կողմից «անհայտ» գլխաբառի տակ ներկայացվող անձնանունները առայժմ հստակ կամ ընդհանրապես որևէ ստուգաբանություն չունեն: Այդ անունները մեծամասնություն են կազմում և դրանք կարելի է տարաբաժանել երկու խմբի՝ ա) Այսպես կոչված «կապադովկիական» կամ «քանեսյան»<sup>274</sup> և բ) որևէ այլ աղբյուրում չվկայված անուններ: Առաջին խմբի անունները լավ ներկայացված են դեռևս մ.թ.ա. XIX-XVIII դդ. Աշշուրի առևտրական գաղութների շրջանի տեքստերում, այնուհետև խեթական տեքստերում:

#### Ա. «Կապադովկիական»

Agga

Kukku(-)?

Kuwaš

Է. Լարոշը այս անունները դասում էր այսպես կոչված «պարզունակ կազմավորում» («Formation primaires») անվանումը ստացած անձնանունների շարքը<sup>275</sup>: Մրանք միավանկ կամ միևնույն վանկի կրկնակված ձևերով հանդես եկող անուններ են, որոնք տարածված էին առավելապես հնագույն շրջանի Փոքր Ասիայում, սակայն քիչ չեն նաև Շումերում, Բաբելոնիայում, Սիրիայում, Եգիպտոսում, Հունաստանում, Իտալիայում և Եվրոպայի տարբեր շրջաններում: Օրինակ, Kukku-ն ներկայացնում է պարզ Ku(wa)-ի կրկնակված ձևը. խեթական տեքստերում վկայված են նաև Kuku, Kukkuš, Kukku, Kukkuwa անձնանուններ: Նշենք նաև, որ նմանատիպ կառուցվածք ունեն խեթական տեքստերում հիշատակվող մի շարք տեղանուններ<sup>276</sup>: Վերոհիշյալից հետևում է, որ այս-

<sup>271</sup> Mašat Nr.76, տես Alp 1991: 86.

<sup>272</sup> Laroche 1981: Nr.990b.

<sup>273</sup> Տեքստի համար տես Lebrun 1980: 141ff.; Tischler 1982: 448; Alp 1991: 30f.

<sup>274</sup> Մասնագիտական գրականության մեջ առաջինը Պ. Կրեչմերն էր առանձնացրել այսպիսի անձնանունները, դրանք անվանելով «Lallname»՝ Kretschmer 1896: 334ff.:

<sup>275</sup> Laroche 1966: N.10, p.24, N.603, p.96, N.659, p.101 (ընտարկումը՝ p.239ff.).

<sup>276</sup> Օրինակ, <sup>URU</sup>Kukuwawa, <sup>URSAG</sup>Hašaya և այլն:

այսի անձնանունների համար կոնկրետ էթնիկ ենթատեքստ նախատեսել ուղղակի անհնար է՝ պայմանավորված դրանց աշխարհագրական և ժամանակագրական շատ լայն ընդգրկմամբ, ինչպես նաև քննարկվող ժամանակաշրջանի Առաջավոր Ասիայի էթնոլեզվական աշխարհագրության անբավարար ուսումնասիրության պատճառով:

Մրանցից զատ, հիշատակվում են բավական թվով այլ կառուցվածք ունեցող անուններ անհայտ ստուգաբանությամբ: Վերջիններիս համար առայժմ միայն որոշ նախնական բացատրություններ են առաջարկվել:

## Բ. Այլ տեքստերում չվկայված

Akarkiš	Kašiyara
Aritkuš	Maḫuilu
Ḫalpa	Mita
Ḫaniyatta	Šiusaš
Ḫapiyanab[-]	Taḫišalli
Ḫateš	Ušapa
Ḫuruš	Wartilaš

Այս երկրորդ խմբում ներառված որոշ անունների ծագման և ստուգաբանության առնչությամբ մասնագետների կողմից առաջարկվել են նախնական ենթադրություններ, որոնք ներկայացվում են ստորև:

### Akarkiš

Արտաքննապես նույնական է ուրարտական տեքստերից հայտնի չափի միավորին (aqarqi)<sup>277</sup>, սակայն անհավանական է, որ սույն անունը նման ծագում ունենար: Ավելի շուտ այստեղ կարելի է տեսնել առայժմ չստուգաբանված -ki անձնանվանակերտ վերջածանցը, որը խեթական տեքստերում վկայված է մի շարք անուններում: Ընդ որում բոլոր այդ դեպքերում բառահիմքերը նույնպես խեթա-լուվիական ստուգաբանություն չունեն<sup>278</sup>:

<sup>277</sup> Арутюнян 2001: 435.

<sup>278</sup> Sbu Քոսյան 2006: 252-253; Kosyan 2015b. Օրինակ, Dulakki, Garnalaki, Pašakki, Pizzumaki, Tišpinki և այլն: Կարևոր է նշել, որ սրանցից մի քանիսը հանդիպում են դեռևս կապադոկիական փուլում, ինչպես նաև փոքրասիական տարածաշրջանում Աքքադի արքա Նարամսինի գործունեությունն արտացոլող մի տեքստում (KBo III 13): Ընդ որում նշենք նաև, որ ընդհանուր առմամբ մեր կողմից առանձնացվող այս 12 անուններից վեցը ներկայացնում են որպես կասկա-

## Halpa

Է. Լարոշը հակված էր այստեղ տեսնելու սիրիական Հալեպ քաղաքի անվանումը ըստ խեթական տեքստերի<sup>279</sup>, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինիս անունը առկա է մի շարք բաղադրյալ և ածանցյալ անձնանուններում (Halpa-muwa, Halpa-ziti, Halpa-šulupi, Halpa-ru(n)ta, Halpa-hi): Չնայած արտաքնապես իսուվական անձնանունը ամբողջությամբ նույնական է Հալեպ քաղաքի անվանը, սակայն դժվար է ընկալել իսուվական ցեղապետի անվան կապը դրա հետ: Նշենք, որ այս անունը մաքուր տեսքով, առանց հավելումների, առկա է միայն Քանեսում և KUB XXIII 72+-ում:

## Haniyatta և Hapiyanah[-]

Այս երկու իգական անձնանունները (ենթադրաբար, վերինեփրատյան ինչ-որ երկրի առաջնորդներից մեկի դուստրերը) առայժմ չեն ստուգաբանվել<sup>280</sup>:

## Hateš

Առանց ստուգաբանություն առաջարկելու Է. Լարոշը համարել է Քանեսից հայտնի Hati անվան հետ<sup>281</sup>: Սրան կարելի է հավելել կրկին Քանեսում վկայված Hada և կրկնակ հիմքով կազմված Hadahada անունները<sup>282</sup>:

## Huruš

Ըստ Գ. Ջահուլյանի, այս անվան հիմքում ընկած է հայ. *հուր* «կրակ» բառը, չնայած անձնանունը հայերենից չի անցել խեթերենին<sup>283</sup>:

## Kašiyara

Է. Լարոշը բխեցնում էր Հյուսիսային Միջագետքի Քաշիյարի լեռ-

---

կան դիտվող տարածաշրջանը և վկայված են *Մաշարի հյույսի* խեթական նամակներում (իրատ.՝ *Alp* 1991):

<sup>279</sup> Laroche 1966: 273. Համեմայնդեպս, հեղինակը նշում էր, որ դեռևս կապահովվիական տեքստերում հիշատակվող Halpa անվան առկայությունը որոշ դեպքերում կարող է վկայել վերոհիշյալ սիրիական առնչակցության դեմ: Նույն կարծիքին էր նաև Ա.Գյոթցեն (Goetze 1954: 77):

<sup>280</sup> Յ. Տիշլերը ժամանակին համեմատել էր Նուզիից հայտնի խուրրիական արական սեռի անձնանուն «Haniate-ի հետ (Tischler 1982: 442):

<sup>281</sup> Laroche 1966: N.338, p.64, 245.

<sup>282</sup> Laroche 1966: NN.333, 334, p.64. առաջարկը մերն է:

<sup>283</sup> Джаякян 1988: 81.



ների անվանումից (ժաման. Մարդինի շրջանում)<sup>284</sup>: Թեև տեղանուններից ծագող անձնանունների քանակը խեթական օնոմաստիկոնում զգալի է, սակայն նշված առնչակցությունը այնքան էլ հավանական չէ, չնայած տեսականորեն հնարավոր է:

### **Mašuilu**

Օ. Գըրնիի կարծիքով, այս անվան մեջ գրիչը բաց էր թողել *aš* նշանը, որի առկայության դեպքում կստանայինք արևմտյան Փոքր Ասիայի արցավյան Միրա-Կուվալիյա երկրի արքա *Mašuiluwa* անունը (Մուրսիլիս II-ի ժամանակակիցը)<sup>285</sup>: Գ. Ջահուկյանը այս բառը համարում էր հայերեն *մախուս* «նախանձ» բառի հետ, սակայն իսուվական անունը չէր համարում փոխառություն հայերենից<sup>286</sup>:

### **Mita**

Այս անունը վաղուց ի վեր համադրվել է Փոյուզիայի արքա Միդասի անվան հետ<sup>287</sup>: Օ. Գըրնին որոշ կասկածներ ուներ այս հարցում՝ զուտ ժամանակագրական նկատառումներից ելնելով<sup>288</sup>: Հաջորդ վարկածի համաձայն, այստեղ ներկայացված է հիերոգլիֆային լուվիերեն *mita* «ծառա, ստրուկ» բառը<sup>289</sup>, սակայն Դ. Հոկինսի կողմից վերջինիս գրության առաջին նշանի (387 = mi?) հնչյունական արժեքի հարցում ունեցած վերապահումները<sup>290</sup> առայժմ կասկածի տակ են առնում այդ մեկնաբանությունը:

### **Šiusaš**

Սա այս անվան միակ վկայությունն է: Որոշ վերապահումներով, կարելի է համադրել Քանեսյան անուններից *Šiwašmi*-ի (*Ši-wa-āš-mi-i*)<sup>291</sup>

<sup>284</sup> Laroche, 1966: N.534, 88, 274.

<sup>285</sup> Gurney 1948: 28, 37. Այս անունը է. Լարոշը նույնպես թվարկում է *Mašuilu* գլխաբառի տակ (Laroche 1966: N.779, p.116):

<sup>286</sup> Джаякян 1988: 81.

<sup>287</sup> Forrer 1920: 77; Götze 1933: 187.

<sup>288</sup> Gurney 1948: 47. Քանն այն է, որ, նրա կարծիքով, նախքան խեթական տեղության անվանը նախորդող շրջանում փոյուզացիները չէին կարող քնակվել վերին եփրատի ավազանում, քանի որ ավելի ուշ էին եկել Փոքր Ասիա:

<sup>289</sup> Bossert 1952-1953: 328; Mellink 1965: 317ff. և այլն:

<sup>290</sup> Hawkins 2000: 58f.

<sup>291</sup> Laroche 1966: N.1163, p. 164.

հետ<sup>292</sup>, որտեղ -mi-ն պետք է ներկայացնեն անձնանվանակերտ -(m)mi վերջածանցը<sup>293</sup>;

### **Tahhišalli**

Է. Լարոշը գտնում էր, որ այս անձնանունը կազմված է Իսուվայում կամ հարևան շրջաններից մեկում վկայված (KUB XXIII 72+) Tahhiša տեղանունից (Tahhiša + -alli), չնայած նշում էր, որ սույն անձնանվանակերտ վերջածանցը սովորաբար հանդես է գալիս մեկ l-ով<sup>294</sup>: Այնուամենայնիվ, այս մեկնաբանությունն ընդունելի է:

## **ԱՄՓՈՓՈՒՄ**

Այսպիսով, դատելով վերը ներկայացված անվանաբանական նյութերի վերլուծությունից, Իսուվայի տարածքը, ներառյալ դրան հարող շրջանները (Պալիստովան, նաև KUB XXVI 62-ում հիշատակվող տեղանունների զբաղեցրած տարածքը, եթե դրանք դուրս են գտնվել մեր կողմից քննարկվող տարածաշրջանից), ակնհայտորեն բազմաէթնիկ կառուցվածք է ունեցել: Իհարկե, խոսելով որևէ տարածքի էթնիկական նկարագրի մասին, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պաշտոնական արձանագրությունները պետք է արձանագրեին միայն քնակչության որոշակի խումբ, այն է՝ տեղական ազնվականությանը: Մի բան, որ կարող է որոշակի պայմանականություն հաղորդել մեր եզրակացություններին: Այնուամենայնիվ, սույն նյութերն էլ բավարար են պատկերացում կազմելու համար քննարկվող խնդրի վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ Իսուվայի տարածքում տարբեր՝ խուրրիական, խեթական, լուվիական, արիական, նաև տեղական (առայժմ այդ տարրի անվանումից պետք է ձեռնպահ մնալ) անձնանունների առկայությունը համահունչ է Իսուվայի աշխարհագրական դիրքի և ռազմավարական նշանակության մասին մեր պատկերացումների հետ: Իսուվան այն երկիրն էր, որը երկար ժամանակ հանդիսանում էր խեթական տերության և Միտտանիի, իսկ մ.թ.ա. XIII դարից՝ խեթերի և Ասորեստանի քաղաքական հետաքրքրությունների առարկան, որով էլ կարող էր որոշակիորեն պայմանավորված լինել հատկապես ազնվականության շրջանում տարբեր էթնիկական խմբերի առկայությունը:

<sup>292</sup> Առաջարկությունը է մերն է (Kosyan 2009: 92):

<sup>293</sup> Վերջածանցի համար տես Laroche 1966: 330:

<sup>294</sup> Laroche 1966: N.1203, p. 169, 252, 273.

խեթական աղբյուրները բազմիցս հիշատակում են դեպի Իսուվա այլ բնակչության ներհոսք և արտահոսք: Խոսքը Սուպպիլիուլիումաս I-ի օրոք Խաթթիից Իսուվա տարբեր շրջանների բնակչության հեռանալն էր, որն էլ առիթ դարձավ խեթական արշավանքի և երկրի նվաճման<sup>295</sup>: Իսկ մինչ այդ հայտնի է Իսուվայից բնակչության մի մասի փախուստը դեպի Միտտանի (թերևս, այստեղ խոսքը խուրրիների կամ, թերևս, հնդարիացիների մասին է)<sup>296</sup>:

